



ՀՅԴ Պատմաթերթ

ԴՐՕՇԱԿ





Սարս N3 (1606)

2009

ԴՐՕՇԱԿ

Պատկերասրահ



ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պատմական աթերթ



"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը և «Դրօշակի» կլոր սեղանը 2

Կլոր սեղան

Ճգնաժամ. համաշխարհային և հայաստանյան դրսևորումներ 6

Տեսական

Ժողովրդավարութեան փորձը Հայաստանում. *հարցադրումներ* (շարունակություն) 20

Նեմեսիս-90

Սողոմոն Թեհլիրյանի ոդիսականը 25

Նյութեր թուրք պատմաբանների համար

Յոզդատի գավառի և Տրապիզոնի նահանգի տեղահանության ու կոտորածների դատավարություններն ըստ «Ալեմդար» օրաթերթի 33

Ռեալիկ

Պատմութեան նենգափոխութեան դէմ 40

Անհայտ եջեր

Վճռական ժամին

Անձնական յուշեր ու ադրումներ (շարունակություն) 42

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Պարլամենտական ընտրութիւնները Իտալիայում 45

Նոր գրքեր

Մարդասպանի սպանությունը 46

Պատկերասրահ

Հենրիկ Սիրավյան 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

Digitized by ARF PR Office

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը եւ «Դրօշակ»-ի կլոր սեղանը

ՀՅԴ «Դրօշակ» պաշտօնաթերթի նախաձեռնութեամբ կազմակերպուած «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը» թեմայով «կլոր սեղանը» տեղի ունեցաւ սոյն թուականի փետրուարի 25-ին, Հ.Յ.Դ. Բիւրոյի գրասենեակում, ուր չորս զեկուցաբեր հանգամանօրէն վերլուծեցին երեւոյթը: Նրանք, ինչպէս նաեւ միւս մասնակիցները, տեսակէտներ հնչեցրին Հայաստանում ճգնաժամի հետեւանքները մեղմացնելու ուղղութեամբ:

Նախ պէտք է ասել, որ մինչեւ այս «կլոր սեղանն» էլ, վերջերս Հայաստանի քաղաքագիտութեան, տնտեսագիտութեան եւ հասարակագիտութեան տարբեր մասնագէտների շրջանակներում, նկատւում է սոցիալիստական մեթոդներին դիմելու, եւրոպական սոցիալիստական եւ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնների ծրագրերը եւ պետական փորձը ուսումնասիրելու որոշակի ձգտում: Եթէ բացառենք որոշ սխալ ընկալումներ, որոնք հիմնականում առնչւում են բուն սոցիալիզմը սովետական «ծրագրաւորուած տնտեսութեան», պետական կապիտալիզմի եւ ամբողջատիրութեան հետ շփոթելու հանգամանքը, ապա այս ձգտմանը յարող մտայնութիւնների սուրար մասի հիմքում ընկած են ընկերվարութեան ճշմարիտ տարրեր, որոնք այժմ կը փորձենք ի յայտ բերել «Դրօշակի» կազմակերպած «կլոր սեղանի» շուրջ արծարծուած տեսակէտների ընդմիջից:

Զեկուցաբերներից մէկի միջոցով բարձրացուած

պրոգրեսիվ հարկերի համակարգի կիրառման անհրաժեշտության հարցը փաստորեն զուտ սոցիալիստական հասկացություն է, որը տասնամեակներ շարունակ արծարծվել է բազմաթիվ կուսակցությունների, այդ թվում նաեւ Հ.Յ.Դաշնակցության կողմից: Ընդգծելին այն է, որ հայ մասնագետը դա համարում է Հայաստանի տնտեսությունը բարեփոխելու եւ սոցիալական կեանքը բարելավելու համար անյեսաձգելի անհրաժեշտություն: Այս մտքին համահունչ են այսօր եւրոպական բազմաթիվ պետական եւ քաղաքական ուժերի մօտեցումները:

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը 2007 թ. ծրագրում (կոչվում է Համբուրգեան Ծրագիր) ամրագրում է պրոգրեսիվ հարկերի համակարգի գաղափարը ասելով, որ. *«Կորպորացիաները եւ մասնաւոր տնտեսությունները պէտք է մասնակցություն ունենան պետական պարտաւորությունների ֆինանսաւորման գործում՝ դրանց իրականացման հնարաւորության սահմաններում: Սա նշանակում է, որ մենք յայտարարում ենք փորձուած **պրոգրեսիվ** եկամտահարկի ընդունումը: Մենք ցանկանում ենք խոշոր կապիտալի եւ ժառանգության արդար հարկում»:* Նշենք, որ տուեալ կուսակցությունը Գերմանիայի Հանրապետության վերջին ընտրություններում (2005 թ. սեպտ. 18-ին) հաւաքել է ձայների 34 տոկոսը:

Նորուեգիայի լեյբորիստական կուսակցությունն էլ, որ պետական վերջին ընտրություններում (2005 թ. սեպտ. 12-ին) հաւաքել է ձայների 33 տոկոսը եւ ստանձնել կառավարության ղեկավարումը, իր «2005-2009 թթ. պլատֆորմ»-ում անկաշկանդ յայտարարում է. *«Ժամանակակից հասարակությունում, ողջախոհ հանրային պատասխանատուությունը համերաշխության արտայայտություն է՝ ապահովելու եւ ֆինանսաւորելու համար ընդհանուր պարտաւորությունները: Մենք ցանկանում ենք ձեռք բերել մեր հիմնական ապահովության երաշխիքների հանրային ֆինանսաւորում եւ **պրոգրեսիվ** հարկային համակարգ, որը կը երաշխաւորի հարստության վերաբաշխումը»:*

Նման դիրքերից է հանդէս գալիս ամբողջական իշխանություն ստանձնած միւս ընկերվարական ուժը՝ Իսպանիայի սոցիալիստական-բանւորական կուսակցությունը. *«Մենք հաւատում ենք,-* ասում է կուսակցության 2008 թ. նախընտրական ծրագրում,- *որ պէտք է ունենալ բաւարար, արդար, **պրոգրեսիվ**, որակեալ հարկային քաղաքականություն, որով ուղղակի հարկերը միշտ կը գերիշխեն անուղղակի հարկերը՝ սոցիալական անհաւասարակշռությունները նուազեցնելու համար»:* Ինչպէս նկատում է, ոչ մի հանգամանք չի խանգարում իսպանական հզօր կուսակցությանը պրոգրեսիվ հարկային համակարգի արդարությանն ու ազդեցիկությանը հաւատալու հարցում, որը Իսպանիայի օրէնսդիր մարմնի վերջին ընտրություններում (2008 թ. մարտի 3-ին) հաւաքել է ձայների 44 տոկոսը:

Պետական կապիտալիզմի կարգերից ազատագրուած Սլովակիայի Հանրապետության սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որը երկրի վերջին ընտրություններում (2006 թ. յունիսի 17-ին գրուած), հաւաքելով ձայների շուրջ 30 տոկոսը, ստանձնել է կառավարության ղեկավարությունը, իր 2006 թ. նախընտրական ծրագրում առաջարկում է *«անհատական եկամտահարկում ներկայացնել **պրոգրեսիվ** հարկային համակարգ, որը կը նպաստի ցածր եւ միջին եկամուտ ունեցող մարդկանց հարկերի նուազմանը»:*

Հայաստանում պրոգրեսիվ եկամտահարկի համակարգի կիրառման դէպքում, ենթադրելի է, որ խոշոր գործարարության ոլորտում կուտակուած կանխիկ ֆինանսների մի զգալի մասը սատարելու է արտադրության ծաւալների եւ աշխատատեղերի քանակի մեծացմանը, բարեգործության եւ սոցիալական այլ ծառայությունների ակտիւացմանը: Այլ խօսքով՝ նման համակարգի միջոցով ոչ միայն աւելանալու է պետական բիւջէն, այլ նաեւ հակակշռուելու են կապիտալի կենտրոնացման եւ սոցիալական բեւեռացման երեւոյթները:

Այժմ անդրադառնանք «կլոր սեղանի» շուրջ հնչած տեսակէտների մի այլ մօտեցման: Դա **պարզեցուած** հարկի համակարգի վերականգնման հարցն է: Պարզեցուած հարկային համակարգը նոյնպէս կայուն սոցիալիստական հասկացություն է, սակայն վերջին տարիներին այն առաջ է քաշուել լիբերալ մտածողության կողմից՝ յատկապէս յետխորհրդային շրջանի նորանկախ երկրների աւերուած տնտեսությունները վերակենդանացնելու համար: «Կլոր սեղանին» արտայայտուողներից գրեթէ բոլորը շեշտում էին այս համակարգի

վերակիրառման անհրաժեշտությունը՝ որպէս փոքր ու միջին ձեռնարկատիրությունների հզօրացման եւ համապատասխան տնտեսական ոլորտների աշխուժացման ազդեցիկ եւ փորձուած միջոցի:

Ուսումնասիրելով Եւրոպայի մի շարք սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական եւ լեյբորիստական հոսանքների ծրագրերը, պլատֆորմները եւ այլ հրապարակուած փաստաթղթեր՝ կարելի է յանգել այն կարծիքին, որ այսօր պարզեցուած հարկի սկզբունքը ոչ միայն սովետական ամբողջատիրութեան եւ պետական կապիտալիզմի փլատակների վրայ ձեւաւորուած Արեւելեան Եւրոպայի պետութիւններում, այլ նաեւ Արեւմտեան Եւրոպայի դասական կապիտալիստական երկրներում համարւում է տնտեսութիւնը խթանող համակարգային լուծում: Այս սկզբունքի իրականացման մատդրութիւնը փաստելու համար այստեղ մէջբերում ենք մի շարք երկրներում գործադիր իշխանութեան պատասխանատուութիւնը ստանձնած ընկերվարական հոսանքների տեսակէտները:

Այսպէս. Սլովենիայի Հանրապետութեան սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը, որը վերջին ընտրութիւններում (2008 թ. սեպտեմբերի 21-ին) հաւաքել է ձայների շուրջ 31 տոկոսը եւ ղեկավարում է կառավարութիւնը, իր «2008-2012 թթ. պետական այլընտրանքային ծրագրում» նշում է. *«Ամենախոցելի խմբերի եկամտային վիճակը շտկելու համար մենք այսուհետեւ պէտք է աւելի զգուշօրէն հետազօտենք ընդհանուր հարկային փոփոխութեան հնարաւորութիւնը: Սա մենք կանենք այնպէս, որ աւելի մօտենանք մաքուր եկամուտի նուազագոյն տարեկան գումարին: Այլոց փորձը ցոյց է տալիս, որ* ***պարզեցուած եկամտահարկի համակարգ*** *մտցնելու դէպքում՝ առանց աւելորդ հարկերից ազատման ու դրդապատճառի, առաւել արդիւնաւէտ միջոցներով կը թեթեւացնենք աւելի ցածր եկամուտ ունեցող խմբերի վիճակը»*:

Իսպանիայի սոցիալիստական-բանւորական կուսակցութիւնը յստակ է առաջադրում պարզեցուած եկամտահարկի համակարգի իր յարացոյցը. *«Այս խնդիրների կատարմանը նպաստելու համար, մենք կարծում ենք, որ հարկումը պէտք է* ***պարզեցուած*** *եւ արդիականացուած լինի,-* նշում է կուսակցութեան 2008 թ. նախընտրական ծրագրում,- *այդ անելու համար մենք առաջարկում ենք հետեւեալը. վերացնել յատուկ հարկային ռեժիմները եւ 60.000 եւրոյից պակաս ժառանգութիւնները ազատել հարկերից»:* Միւս տեսակի եկամուտների համար եւս նրանք պարզեցուած հարկային համակարգեր են առաջարկում:

Նման մօտեցումներ է արծարծում ամբողջական իշխանութիւն ստանձնած Պորտուգալիայի սոցիալիստական կուսակցութիւնը, որն էլ վերջին հանրապետական ընտրութիւններում (2005 թ. փետրուարի 20-ին) հաւաքել է ձայների աւելի քան 45 տոկոսը: *«Կառավարութեան առաջին տարուայ հարկման, հարկման ամբողջ համակարգի եւ հարկային յատուկ ռեժիմի նպատակը* ***պարզեցուած*** *եւ հետցացուած հարկն է, որը միտուած է սոցիալ-տնտեսական քաղաքականութեան նպատակներին եւ անկողմնակալութեանը»,-* ասուած է կուսակցութեան 2005 թ. «հիմնական ծրագրում»:

Ցաւալին այն է, որ մեր երկրում պարզեցուած հարկի մասին օրէնքը, որով 2000-ականների առաջին տարիներին պաշտպանուել են բազմաթիւ փոքր ու միջին տնտեսավարող սուբյեկտներ, ներկայումս չի կիրառւում: Համաշխարհային ճգնաժամը այս մասին մեզ խորքային մտածելու հնարաւորութիւններ է տալիս

«Պլոր սեղան»-ին մասնակցողներից մէկի կողմից յայտնուած դիֆերենցման քաղաքականութիւնը թէեւ արծարծում էր որոշակիօրէն գազի սակագնի առնչութեամբ, այնուամենայիւ իր կիրառական լայն հասկացութեամբ բուն սոցիալիստական լուծում է: Տարբերակման (դիֆերենցման) քաղաքականութիւնը հովանաւորչութիւն (պրոտեկցիոնալիզմ) ընդհանուր հասկացութեան կիրառական դրսեւորումներից է, որը յաճախ իրականացուել է կոմունալ ծախսերի համատեքստում: Այս քաղաքականութեանը հակուած են մնում, յատկապէս, սոցիալիստական հոսանքները:

Օրինակ, Իսպանիայի սոցիալիստ-բանւորական կուսակցութիւնն իր 2008 թ. նախընտրական ծրագրում այս մասին ակնարկում է հետեւեալ ձեւակերպումով. *«Անորոշ ժամկէտային պայմանագրերի եւ հաստատուած ժամկէտով պայմանագրերի միջեւ* ***տարբերակուած արժէքը*** *կ՚աւելանայ գործազուրկ խաւերի համար, այսպիսով ձեռք բերելով համընդհանուր բարօրութեան համակարգի ֆինանսական հաւասարակշռութիւն»:*

Իսկ Նորուեգիայի լեյբորիստական կուսակցու-

թիւնն առաւել ընդհանրական բանաձեւով է կիրառում այդ քաղաքականութիւնը. *«Նորուեգիայի լեյբորիստական կուսակցութիւնը,-* յայտարարում է կուսակցութեան «2005-2009 թթ. պլատֆորմ»-ում,- *վստահեցնելու համար, որ հնարաւորութիւնները բոլորի համար հաւասար են, ստանձնել է սոցիալական պատասխանատուութիւն՝ աղքատութիւնը վերացնելու համակարգուած, **տարբերակուած** վերաբերմունք»:*

Հայաստանում դիֆերենցման լիարժէք քաղաքականութեան կիրառմամբ՝ նոյնպէս ենթադրելի է, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետեւանքները մեղմացուելու են սոցիալապէս անապահով խաւերի համար, կոմունալ սպասարկման սակագների տատանման երեւոյթը դիմագրաւելու իմաստով: Եւ այդպիսով նուազելու է նման սպասարկումներ մատակարարող ձեռնարկատիրութիւնների ֆինանսական քաղաքականութեան ազդեցութիւնը երկրի սոցիալական կեանքի վրայ:

Մի քանի նման պարզ ու փորձուած լուծումներով հնարաւոր չէ՞ արդեօք գոնէ մի փոքր մեղմել ճգնաժամի հետեւանքները: Բայց մի՞թէ Հայաստանի տնտեսական քաղաքականութեան ստրատեգների, մշակողների եւ վարողների մտքերն այդքան հեռու են այս լուծումներից: Ահա թէ ուր է թաքնուած բուն հարցը: «Կլոր սեղանին» Հ.Յ.Դ. Բիւրոյի խօսքում արծարծուած տեսակէտի հիմնական առանցքն էր կազմում Խորհրդային Միութեան փլուզման ժամանակներից սկսած այն ակնյայտ միտումը, որով բնորոշւում է առանձնապէս թերաճ երկրների քաղաքական ղեկը ասիճանաբար գործարարների ձեռքն անցնելու եւ զուգահեռաբար քաղաքականապէս թրծուած ուժերի եւ գործիչների ասպարէզից մեկուսացուելու հարցը: Այս երեւոյթի բերումով ազատ շուկան առաւել սանձարձակ է դառնում եւ իր լոկ շահադիտական քայլերով հասարակութիւններն ու մարդկութեանը առաջնորդում դէպի նորանոր ճգնաժամեր:

Յետխորհրդային շրջանի այս ակնյայտ միտման մասին եւս դիպուկ բնութագրումներ է տալիս ՄԱԿ-ի փորձագէտ-խորհրդատու Իգանոս Ռամոնէն. *«Աշխարհի նոր տէրերը կորցնելու ժամանակ չունեն,-* ասում էր նա դեռ 1990-ականների կէսերին,- *նրանց դրամը, արտա- դրանքը եւ գաղափարներն առանց դժուարութեան են ճեղքում համաշխարհայնացուած շուկայի սահմանները: Ըստ նրանց՝ քաղաքական իշխանութիւնը սոսկ երրորդ իշխանութիւնն է, որին նախորդում են տնտեսականն ու լրատուականը: Եւ երբ այս երկուսին տիրում ես՝ քաղաքական իշխանութիւնը նուաճելը ձեւականութիւն է դառնում»* («Նոր տիրութիւններ, աշխարհի նոր տէրեր», Ի. Ռամոնէ, թարգմ.՝ Գ. Ջանիկեան, Երեւան, 2008 թ.):

Ակնյայտ է, որ գլոբալիզացիայի ալիքներով տարածուած, նորազատական գաղափարախօսների նախագծած «ազատ» շուկայական տնտեսութեան մոդելը սկսել է իր աւերները գործել ժողովուրդների կեանքում: Համաշխարհային կապիտալիզմը նոր տագնապներ է ապրում: Իսկ Հայաստանի նման պետութիւններում ձեւաւորուած նախնական, վուլգար, սանձարձակ վիճակից՝ տոտալ, կենտրոնաձիգ, մոնոպոլացուած վիճակի ձգտող կապիտալիզմիկին, այնպէս էլ, փայլուն օրեր չեն սպասւում:

Նոյնիսկ պետական գործիչ, խոշոր ֆոնդային տնօրէն Ջորջ Սորոսը, որին ոմանք աղաղեսական ինքնաստիպ տաղանդ են համարում, ոմանք էլ՝ համաշխարհայնացման ստրատեգներից մէկը, նրան վերագրելով ներկայիս ճգնաժամի ստեղծման մեղքի մի բաժինը, անտարբեր չի անցել նշուած միտման վտանգաւոր հետեւանքների կողքից: *«Չի ընդունում, թէ կան արժէքներ, որոնք թերեւս առ ու ծախի առարկայ չեն,-* ասում էր նա 2000 թ.,- *կամ, աւելի ճիշտ, այդ արժէքները չեն քննարկում: Ուսումնասիրում են միայն անհատական գերադասութիւնները: Կոլեկտիւ կարիքներն անտեսւում են: Սա նշանակում է, որ սոցիալական ու քաղաքական ողջ տիրոյթն է անտեսւում : Որո՞նք են այս արժէքներն ու ի՞նչ ձեւ կայ դրանց հաշտեցնելու շուկայական արժէքների հետ: Այս հարցն ինձ մտահոգում է ու լրիւ շփոթեցնում միտքս: Տնտեսագիտութեան ուսումնասիրութիւնը լաւ հիմք չէ սրան պատասխանելու համար. պիտի տնտեսագիտութիւնից այն կողմ անցնենք»* («Քաց Հասարակութիւնը», Ջորջ Սորոս, թարգմ. Մ. Յարութիւնեան, Երեւան, 2004 թ., էջ 82-85):

Թող ներկայիս ճգնաժամն առաւել մտածել տայ բոլորիս, որ սոցիալական արժէքները կեանքում օրինաչափութիւն դարձնելու համար անհրաժեշտ է որդեգրել սոցիալիստական սկզբունքներ եւ կիրառել համապատասխան լուծումներ:

Ճգնաժամ. համաշխարհային և հայաստանյան դրսևորումներ

«Կլոր սեղան»-ի պատգրության պատրաստեց
Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ

Սույն թվականի փետրվարի 25-ին ՀՅԴ Բյուրոյի գրասենյակում «Դրօշակ» պաշտոնաթերթի նախաձեռնությամբ կազմակերպված «Համաշխարհային տնտեսական ճգնաժամը» թեմայով «կլոր սեղանը», ինչպես և սպասվում էր, թեմայով շահագրգիռ մասնագետների և պարզապես հետաքրքրասեր մասնակիցների պակաս չէր զգում: Ի՞նչ է տեղի ունենում համաշխարհային տնտեսության մեջ, որո՞նք են նման գործընթացների բուն պատճառները, որքանո՞վ է դրսից պարտադրված տնտեսական տագնապն անդրադառնում Հայաստանի տնտեսության վրա և ի՞նչ քայլեր կարելի է ձեռնարկել նորահայտ մարտահրավերները դիմագրավելու համար. ահա հարցերի ոչ լրիվ համախումբը, որոնց փորձեցին պատասխանել «կլոր սեղանի» չորս զեկուցաբերները, ում խոսքը մենք որոշեցինք մեջբերել գրեթե ամբողջությամբ, և նրանց ընդդիմախոսները:

Բացելով *«Կլոր սեղան»* - ը՝ «Դրօշակ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր Ռուբեն Հովսեփյանը մասնավորապես ասաց.

«Որքան էլ լավատեսորեն էին տրամադրված մեր իշխանությունները ամիսներ առաջ, ասելով, թե համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում մեղմ է լինելու, աննշան ու կարճաժամկետ, որքան էլ մեզանում շատերը ապավինում էին մեր ժողովրդի անսահման համբերատարությանը և կենսունակությանը, ճգնաժամն արդեն իրողություն է և դաժանորեն իր աղեղն է գործում: Ցանկանանք, թե՝ ոչ, սա պետք է ընդունենք որպես կատարված իրողություն և փորձենք միասին գտնել դրան դիմադրելու և դիմակայելու միջոցներ: Այս նպատակով ենք մենք կազմակերպել կլոր սեղանի շուրջ այս քննարկումը, որի արդյունքները մտադիր ենք հրապարակել «Դրօշակի» էջերում՝ թե իշխանություններին հուշելու հաջողված բանաձևերն ու բանաձևումները և թե իրազեկելու հասարակությանը իրերի դրության մասին: Մեր համոզմամբ՝ նման արհավիրքին

կուրորեն ընդառաջ գնալը կործանարար է, և յուրաքանչյուր անհատի գիտակցական դիմադրողականությամբ է պայմանավորված երկրի դիմադրողականությունը»:



Առաջինը զեկույցի համար ձայնը տրվեց ՀՅԴ Բյուրոյի անդամ Մարիո Նալբանդյանին:

20-րդ դարի հանրածանոթ իտալացի տեսաբան Անտոնիո Գրամշին ասել է. «Երբ հինը մեռել է, իսկ նորը տակավին չի ծնվել, դա կարելի է կոչել ճգնաժամ»: Այսօր բոլորս տեսնում ենք, որ փուլ եկող համակարգն ըստ երևույթին իր վերջին օրերն է ապրում, այն համակարգը, որ ստեղծվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Այդ համակարգն ունի երկու ուղղվածություն՝ քաղաքական-ինստիտուցիոնալ և տնտեսական: Երկրորդ համաշխարհայինի ավարտին, ՄԱԿ-ի ստեղծմամբ սկիզբ դրվեց աշխարհի քաղաքական, դիվանագիտական, ինստիտուցիոնալ մի նոր համակարգի, որ պիտի փորձեր ազգերի երկխոսության ճանապարհով լուծել նրանց միջև տակավին առկա հակամարտությունները: Այսօր, այդ իրադարձությունից գրեթե 60 տարի անց, մենք կարող ենք ասել, որ Միավորված ազգերի կազմակերպությունը, այն տեսքով, որ ստեղծվեց, այսօր արդեն պետք է լուրջ բարեփոխումների ենթարկվի: Եվ այդ ուղղությամբ արդեն տարիներ շարունակ քննարկումներ են ընթանում, որոնք հետամուտ են ՄԱԿ-ի ծրագրային և, ինչու չէ, նաև կառուցվածքային փոփոխություններին: Այս բարեփոխումների իրագործումը, սակայն, մնում է չիրականացված, քանի որ դրան տակավին ընդդիմանում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ, վետոյի իրավունք ունեցող մեծ պետությունները: ՄԱԿ-ի բարեփոխման ծրագրերն այսօր կանգ են առել, որովհետև այդ երկրները չեն պատրաստվում հրաժարվել այն իրավունքներից ու արտոնություններից, որ ձեռք են բերել անցած տարիների ընթացքում: Մենք ևս հավատում ենք, որ ՄԱԿ-ը պետք է ոչ թե ուժի, այլ ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված միջազգային մի կառույց լինի և վերագտնի իր ուժականությունը, կարողանա լուծում գտնել գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական հարցերին:

Մյուս ուղղվածությունը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ի հայտ եկավ, տնտեսական և ֆինանսական ուղղվածությունն էր: Ստեղծվեցին բազմաթիվ բանկեր ու համաշխարհային ֆինանսական կազմակերպություններ: Նրանց գործունեության թիրախ հանդիսացան պատերազմից առավել տուժած երկրները, որոնց անհրաժեշտ էր ավերակների վրա շուտափույթ վերականգնել տնտեսությունը, ստեղծել արդար ու միասնական տնտեսական համակարգ: Սակայն ժամանակի ընթացքում, իրերի հարաբերությունների և հակասությունների բերումով, այս համակարգը ևս սպառել է իրեն: Այսպես ենք կարծում, որովհետև համաշխարհային ներկա ճգնաժամը հաստատում է, թե 80-ական թվականներին սկիզբ առած տնտեսական-ֆինանսական քաղաքականությունը առավել մեծ շահ է ապահովում միայն զարգացած աշխարհի համար և, թերզարգացած երկրներից դեպի կենտրոններ ֆինանսական հոսքերի ապահովումով, ծառայում միայն այդ աշխարհի հետագա զարգացմանը: 80-ականների վերջին, երբ արդեն փլուզվում էր Խորհրդային Միությունը, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում ձևավորված աշխարհի քաղաքական քարտեզն էր վերաձևվում, գործողության մեջ դրվեց, այսպես կոչ-

ված, վաշինգտոնյան համաձայնագրից բխող տնտեսական, բայց նաև քաղաքական ուղղվածություն ունեցող հստակ քաղաքականությունը: Վաշինգտոնի համաձայնագիրը բոլորիս հայտնի է որպես տնտեսական բարեփոխումների մի ծրագիր, որն ուներ երեք ուղղվածություն: Առաջին՝ հարկային ճգնաժամը զսպելու նոր համակարգի ստեղծում ողջ աշխարհում, երկրորդ՝ տնտեսությունը բացել գլոբալիզացիայի ճանապարհով, բայց այն հաշվով, որ նպաստի թույլ զարգացած երկրների խնդիրների տեղավորմանը զարգացած երկրների հետաքրքրությունների շրջանակում: Եվ երրորդը՝ ողջ աշխարհում շուկայական հարաբերությունների և ազատ շուկայի գաղափարի ամրագրում և հաստատում: Վաշինգտոնի համաձայնագիրը, որ իր գործադրման գագաթնակետին հասավ Թեթչերի և Ռեյգանի օրոք, հիմնված էր Չիկագոյի դպրոցի գաղափարների վրա, որոնք ժամանակի ընթացքում ոչ միայն վերածվեցին տնտեսական բարեփոխումների ծրագրի, այլև դարձան մի դավանանք, որ ծայրահեղորեն և արմատական ձևով սկսեց գործադրվել աշխարհի շատ ու շատ երկրներում: Դա, բնականաբար, պիտի ուժերի հարաբերակցության նոր իրավիճակ ստեղծեր, որի մեջ տնտեսականը տեղը զիջեց ֆինանսականին: Այս նոր իրավիճակում սպառողը դարձավ շուկայական հարաբերությունների գերին և հենց այդ հողի վրա, ըստ մեզ, սկսվեց հավասարության և ընկերային արդարության անկումը: Այդ անկման չափերի մասին մենք կարող ենք պատկերացում կազմել ներկա համաշխարհային տնտեսական ճգնաժամի հարվածներից, ճգնաժամ, որ հավասարապես տիրում է աշխարհի բոլոր երկրներում: Սակայն, սա հետևանք է ոչ միայն անբավարար մի գաղափարական քաղաքականության, այլև արդյունք է տնտեսական և ֆինանսական շուկաների կարգավորման պակասի, օրենքների բացակայության և հարկային ոչ ճիշտ քաղաքականության: Իրականում հսկայական գումարներ էին ներդրվում ամենատարբեր ոլորտներում՝ առանց որևէ պատասխանատվության և պետությունների կողմից հսկողության: Այսօր, սակայն, ժամանակը եկավ փաստելու, որ ֆինանսական և տնտեսական շուկաներում համակարգված քաղաքականություն չի տարվում, ինչը կարող է քաոս ստեղծել:

Ճգնաժամի առաջին ահազանգերը, որ հնչեցին 2007 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներից, հետագայում բերեցին այդ երկրի բանկային և ֆինանսական համակարգի՝ փուչիկի պես ուռճացման: Գներն սկսեցին չհամապատասխանել իրականությանը: Աստիճանաբար հարվածների տակ սկսեցին հայտնվել տնտեսության բոլոր ճյուղերը: Ի՞նչ է տեղի ունենում: Այսօր մենք գտնվում ենք մի այնպիսի իրավիճակում, ուր ոչ զարգացած, Հայաստանի նման երկրներին, որոնցում տակավին ավարտված չեն ժողովրդավարական գործընթացները, ուր քաղաքական ինստիտուցիոնալ գործընթացը տակավին դրված չէ ամուր հիմքերի վրա, տնտեսական ճգնաժամը կարող է ահավոր հարվածներ հասցնել: Այսօր զարգացած աշխարհը, կենտրոնական պետությունները՝ ԱՄՆ-ը, Եվրոմիության առաջատար երկրները վերանայում են իրենց քաղաքականությունը, հիմնականում իրենց գաղափարական մոտեցումները չկարգավորված շուկաներին: Այսօր բոլորն են վերադառնում այն գաղափարին, որ պետությունը բարեբեր դեր ունի այս հարցերում: Քաղաքական միջամտությունն այլևս անխուսափելի է, և պետությունը պետք է ստանձնի միջնորդի դերը, եթե ցանկանում ենք, որ կրկին վերահաստատվի հավասարակշռությունը արտադրության ու շուկայի միջև, իրագործվի սպառողի և, առհասարակ, ժողովրդի հանդեպ արդարացի վերաբերմունքը:

Այսօր մենք մտահոգությամբ ենք վերաբերվում բոլոր այն քաղաքակրթություններին, որոնք հաշվի չեն առնում պետության դերը տնտեսական և ֆինանսական շուկաների կարգավորման գործընթացում: Մեզ համար շատ կարևոր է, որ Հայաստանում որդեգրվի տնտեսական և ֆինանսական մի այնպիսի քաղաքականություն, որը կապահովի այս հարցերում ժողովրդավարության լայն դրսևորում: Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը հնարավոր չէ ճշտել միայն ու միայն տնտեսական ու ֆինանսական շրջանակների ներսում:

Այս ճգնաժամը եկել է մի երկար ժամանակ մնալու համար: Նրա ալիքները կհասնեն բոլորին: Ուստի հատկապես մեզ նման երկրները, որոնք, ինչպես վերևում ասացինք, տակավին քաղաքական ինստիտուցիոնալ երկրներ

չեն, ավելի քան ուրիշները, իրենց ողջ ներուժը համախմբելու անհրաժեշտության առաջ են կանգնած: Մեր դեպքում՝ դա համահայկական բոլոր ուժերի համախմբումն ու մասնակցությունն է ճգնաժամի հաղթահարման գործին: Մենք պետք է ձգտենք, որ Հայաստանի իշխանությունները ևս լայն մասնակցություն ունենան այդ գործում, և այն մոտեցումները, որոնցով այսօր փորձ է արվում պետությանը դուրս դնել տնտեսական ու ֆինանսական գործընթացներից, այսօր վերանայվում են նույնիսկ ԱՄՆ-ում, և տեսնում ենք, որ բազմաթիվ բանկեր պետականանում են, որ պետությունը միջամտում է և գնում ապահովագրական բանկերի կապիտալի կարևոր մասը, որպեսզի այդ բանկերն էլ իրենց հերթին խուճապ չառաջացնեն և ճգնաժամն ավելի հեռուն չգնա: Այս իմաստով, ես համոզված եմ, պետությունն ունի կարևոր դեր՝ մեր հասարակության առավել անապահով խավերի համար հատուկ ֆոնդերի ստեղծման գործում: Նման ֆոնդերն են, որ կկարողանան օգնության հասնել նաև մանր ու միջին ձեռնարկատիրությանը:

Մենք հավատում ենք, որ ընկերային արդարություն, ընկերային զորակցություն ապահովելու համար մեր պետությանը վերապահված են կարևորագույն դերակատարություններ: Դա չի նշանակում, որ պետությունը պետք է վերադառնա 60-70-ական թվականների իր դերակատարություններին: Նա պետք է վերադառնա արդիական հասկացողությամբ՝ շուկայական հարաբերություններ, բաց տնտեսության, արտադրության բնագավառներում նոր օրենքների որդեգրում, որոնք թույլ չեն տա, որ արտարժույթն անիմաստ ձևով դուրս հոսի, որոնք կնպաստեն ունենալ հզոր, պետության աջակցությունը վայելող գյուղատնտեսություն, որի արտադրանքն այսօր կոչված է մեղմելու ներմուծման և արտահանման ծավալների միջև եղած անհամապատասխանությունը:

Այնուհետև «Համաշխարհային ներկա ճգնաժամի բնութագիրը» թեմայով զեկույցի համար ձայնը տրվեց վերլուծաբան Աշոտ Եղիազարյանին:



Անցած դարի յոթանասունական թվականների սկզբին միջազգային ֆինանսական համակարգում սկզբունքային փոփոխություններ տեղի ունեցան: Խզվեց կապը դոլարի և կոշտ ակտիվի՝ տվյալ դեպքում՝ ոսկու, միջև: Սա հետագայում բերեց մի շարք այլ փոփոխությունների թե ֆինանսական և թե տնտեսական համակարգերում: Կարելի է ասել՝ համաշխարհային տնտեսության վրա սկսեց թափվել, այսպես կոչված, դոլարի անձրևը: Սկսեց արագ զարգանալ ֆինանսական հատվածը: 80-ական թվականներին աշխարհի երկրների մեծ մասը, այդ թվում ԱՄՆ-ը և Անգլիան, որդեգրեցին տնտեսական քաղաքականության մի կուրս, որը ենթադրում էր մաքսիմալ ազատություն տնտեսության համար: Շուկային այս աստիճանի ազատություն տալն էլ իր հերթին նպաստավոր պայմաններ ստեղծեց ֆինանսական սպեկուլյացիայի և չարաշահումների համար: Սա, ի վերջո, հանգեցրեց նրան, որ ֆինանսական սեկտորը, որը կոչված էր սպասարկելու միայն տնտեսության մի որոշակի հատվածը, դարձավ ինքնավար, սկսեց զարգանալ իր օրինաչափություններով: Պատկերավոր ասած՝ փոխանակ շունը թափահարեր պոչը, պոչն սկսեց թափահարել շանը: Արդյունքում առաջացավ մեծ ճեղքվածք: Ֆինանսական սեկտորը հասավ մի սահմանի, որից այն կողմ այս փուչիկը, ակներև էր, պայթելու է: Կարծիք կա, որ այս ճգնաժամը նաև նշանակում է սպառողական հասարակության, ընդհանրապես՝ սպառողական փիլիսոփայության ճգնաժամ: Մարդիկ սկսեցին մտածել՝ իմ մեքենան ավելի լավը պետք է լինի, քան հարևանինը, ես էլ պետք է ունենամ միաժամանակ մի քանի բջջային հեռախոս, իսկ այդ ամենին կարելի է հասնել, եթե իմ աղջիկը ամուսնանա բանկիրի հետ: Այսինքն՝ մարդկանց մեջ գլուխ բարձրացրեց սպառողական հոգեբանությունը: Դեռևս Արիստոտելն է նկատել մարդկային հոգեբանությանը ոչ խորթ այս

երևույթը: Խոսելով տնտեսության մասին և այն գնահատելով որպես կարևորագույն լծակ հասարակական հարաբերությունների կարգավորման գործում՝ նա իր խոսքը հասկանալի է դարձնում մեկ ընտանիքի օրինակով: Ինչպես որ տվյալ ընտանիքը կարգավորում է իր ներքին խնդիրները՝ նրա անդամների միջև փոխհարաբերությունները, երեխաների կրթության հարցերը և այլն, նույն մտածելակերպով էլ մոտենում է իր շրջապատի, իր քաղաքի, իր պետության խնդիրներին: Մեծ մտածողն այս երևույթին հակադրում է խրեմատիկան, որն, ըստ Արիստոտելի, հեշտ ճանապարհով փող աշխատելու ուղիներ է մատնանշում: Սա շատ նման է, այսպես կոչված, տնտեսական ալքիմիային՝ փող ունենալ առանց աշխատելու: Մեր օրերում ֆինանսական աշխարհում այնպիսի ներդրումներ կատարվեցին, որոնք աներևակայելի էին իրական տնտեսության բնագավառում: Այսինքն՝ փողն սկսեց փող բերել:

Այսօր դոլարը ընկալվում է որպես հիմնական միջազգային տարադրամ և աշխարհի բազմաթիվ երկրների պետական բանկերի պահուստային գումարների հիմնական մասը հաշվարկվում է դոլարով: Ասել, թե դոլարը որևէ այլ արժույթով փոխարինելու և այդ կերպ դրությունը շտկելու միտում կա, ճիշտ չի լինի: Ընդհակառակը: Ընթացող հակաճգնաժամային գործընթացները ցույց են տալիս, որ այն միջոցառումները, որ ձեռնարկվում են ԱՄՆ-ում ֆինանսական հատվածի կայունացման նպատակով, դարձյալ ենթադրում են փողի մեծ զանգվածի ստեղծում: Այսինքն՝ փողի զանգվածը մեծացնել այնքան, որպեսզի հնարավոր լինի փակել ֆինանսական հատվածում գոյացած ճեղքերը: Արդեն իսկ հայտնի որոշակի հաշվարկներով պարզվել է, որ այդ նպատակների համար անհրաժեշտ է մոտ յոթ տրիլիոն դոլարի չափով դրամական զանգված: Բնական է, որ այդ զանգվածն առաջին հերթին կգնա բանկերի կապիտալը լրացնելու և ճեղքվածքները փակելու վրա և հետո միայն կհայտնվի շուկայում: Դժվար չէ հասկանալ, որ այս դեպքում տեղի կունենա հիպերինֆլյացիա, և դոլարը խիստ կարժեզրկվի: Կարծիքներ կան, որ, չնայած բազմաթիվ ռիսկերին, պետք է այդպես էլ վարվել: Ամենայն հավանականությամբ ԱՄՆ-ը հենց դրան էլ կգնա, որովհետև այդ կերպ հնարավորություն կունենա էժան գնով դոլար ձեռք բերել և այդ միջոցով փակել ֆինանսական հատվածի ճեղքվածքներն ու իր բյուջեի արտաքին պարտքերը: Սա ամերիկյան տնտեսության ոճն է՝ պարտք վերցրու և փակիր նախորդ պարտքդ: Ըստ էության դոլարի զանգվածի մեծացմանը այնքան էլ դեմ չեն Հին մայրցամաքի առաջատար երկրներն ու միջազգային բազմաթիվ կազմակերպություններ: Դավոսյան հանդիպման ժամանակ, օրինակ, բոլորն էլ ընդունում էին, որ կարևորը իրացվելիության խնդիրն է: Խոշոր երկրների համար այդ դեպքում հեշտ կլինի ծածկել ֆինանսական ճեղքերն ու մեծացնել բյուջեն, բայց փոքր երկրներն այդ հնարավորությունները չունեն, և դա կբերի դրամական միջոցների հոսքին՝ պերիֆերիաներից դեպի ֆինանսական կենտրոններ: Միջազգային արժութային հիմնադրամն այսօր այնպիսի գումարներ չունի, որ կանգնեցնի միակողմանի հոսքը: Նրա տրամադրության տակ կա ընդամենը

200 միլիարդ դոլար: Սորոսն այս դեպքում առաջարկում է կրկին աշխուժացնել միջպետական ոչ կանխիկ հաշվարկների համակարգը, որին ժամանակին դեմ էր ԱՄՆ-ը: Դրանք մոտավորապես մեկ տրիլիոնի հասնող միջազգային ներդրումային ծրագրեր են: Այժմ մեծ երկրներին առաջարկվում է հրաժարվել այդ գումարի իրենց լիմիտներից՝ դրանք ամբողջությամբ թողնելով թույլ զարգացած երկրներին, որոնք կկարողանան թե կարճաժամկետ և թե երկարաժամկետ ծրագրեր իրականացնել: Վերջին հաշվով, եթե վիճակը վատ է պերիֆերիաներում, ուզենք, թե չուզենք, դա անդրադառնում է նաև մետրոպոլիայի վրա:

Ընդմիջումից հետո «կլոր սեղանի» մասնակիցներին քննարկվող հարցերի շուրջ իր տեսակետներն ու առաջարկները ներկայացրեց «Պոլիտէկոնոմիա» հետազոտական կենտրոնի նախագահ, տնտեսագիտության թեկնածու Անդրանիկ Թևանյանը:

Հայաստանում ստեղծված ֆինանսա-տնտեսական այն իրավիճակը, որի ականատեսն ենք այսօր, և բացասական այն տենդենցները, որոնք կան, ոչ միայն և ոչ այնքան պայմանավորված են միջազգային տնտեսական ճգնաժամի գործոնով, որքան մեր կառավարության տնտեսական քաղաքականությամբ: Որպեսզի ամբողջական պատկերացում կազմենք Հայաստանում տիրող տնտեսական իրավիճակի մասին, եկեք հետ գնանք մինչև 2007 թվականի խորհրդարանական ընտրություններ, որից հետո էլ, ըստ էության, Հայաստանում սկիզբ դրվեց տնտեսական նոր քաղաքականությանը: Երբ ողջ խորհրդարանն իր հսկիչ փաթեթով հայտնվեց մեկ կուսակցության ձեռքում,- դա Հանրապետական կուսակցությունն է,- կտրուկ փոփոխության ենթարկվեցին տնտեսական քաղաքականության և տրամաբանությունը, և փիլիսոփայությունը: Եթե հիշում եք, 2000 թվականի մայիսից սկսած, երբ արդեն վարչապետ էր Անդրանիկ Մարգարյանը և փաստացի իշխանությունը կենտրոնացվել էր Ռոբերտ Քոչարյանի ձեռքում, ընդունվեց պարզեցված հարկի մասին օրենքը, ըստ որի՝ այն սուբյեկտները, որոնց ընդհանուր տարեկան շրջանառությունը չէր գերազանցում 50 մլն. դրամը, որպես հարկ վճարում էին ոչ թե ավելացված արժեքի հարկ և շահութահարկ, որ կազմում էր մոտ 40 տոկոս, այլ ընդհանուր շրջանառության 3,5-5 տոկոսը՝ նայած գործունեության բնույթին: Սա, ըստ էության, բավականին թեթև հարկման համակարգ էր փոքր և միջին բիզնեսի համար, և արդյունքն իրեն սպասեցնել չտվեց: Եթե 2000 թվականին կար պարզեցված հարկ վճարող մոտ 1000 սուբյեկտ, ապա 2007 թվականին դրանց թիվը հասել էր արդեն 27 հազարի: Այս թվերը խոսում են այն մասին, որ փոքր և միջին բիզնեսը զարգանալու հիանալի հնարավորություններ էր ստացել: 2007 թ. խորհրդարանական ընտրություններից հետո, երբ տեղի ունեցավ իշխանության փաստացի փոփոխություն, Սերժ Սարգսյանը փոխեց տնտեսական կոնցեպցիան, ինչի արդյունքում առաջին հարվածը հասցվեց փոքր ու միջին բիզնեսին: Ըստ էության, նախ՝ վերացվեց պարզեցված հարկի մասին օրենքը, և նշածս սուբյեկտների մեծ մասին կրկին տեղափոխեցին ընդհանուր հարկման դաշտ, և ապա՝ նորընտիր Ազգային ժողովն ընդունեց, իմ կարծիքով, բավականին ռիսկային բյուջե, որի ծախսային մասը հասցվեց 2,5 միլիարդ դոլարի: Հիշեցման կարգով ասեմ, որ նախորդ տարվա բյուջեի ծախսային մասը կազմում էր ընդամենը 1,7 միլիարդ դոլար: Ճիշտ է, բյուջեն կատարվեց, սակայն դա հիշեցնում էր այն իրավիճակը, երբ ասում են, թե գործողությունը հաջող անցավ, բայց հիվանդը մահացավ: Այդ կարճ ժամանակահատվածում բազմաթիվ փոքր ու միջին սուբյեկտներ դադարեցրին իրենց գործունեությունը: Իմ կարծիքով, 2008 թ. ընտրությունները, որոնք այսքան պրոբլեմներ առաջացրին և որոնցում Լևոն Տեր-Պետրոսյանը ձայների անհավանական քանակություն ստացավ, հետևանքն էր այն բանի, որ պետությունը սկսել էր վարել փոքր ու միջին բիզնեսը վերացնելու քաղաքականություն: Փոքր ու միջին բուրժուազիան, փաստորեն, ձայնը տվեց այն թեկնածուին, ով խոստանում էր ջարդուփշուր անել այդ համա-

կարգը: Մի խոսքով՝ տնտեսական այդ քաղաքականությունը հանգեցրեց քաղաքական ճգնաժամի: Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ ճգնաժամը մեզանում ավելի վաղ է սկսվել: Եթե միջազգային տնտեսական ճգնաժամը չլիներ էլ, դրա զուտ հայկական տարբերակը, միևնույն է, արդեն ընթացքի մեջ էր և շարունակվելու էր:

2009 թվականի համար մենք արդեն ունենք ծախսային մասով մոտ 3,1 միլիարդանոց բյուջե: Սա, հավատացեք, լուրջ մարտահրավեր է բիզնեսին: Բիզնեսը չի կարող կատարել այդ բյուջեն, և դրան կնպաստի նաև միջազգային ներկա տնտեսական ճգնաժամը: Ճգնաժամն ազդեց նախ՝ Հայաստան մտնող արտարժույթի հոսքերի ծավալների վրա և ապա՝ Հայաստանին զրկեց պսևդոնավթարդյունահանող երկիր լինելու իրողությունից: Թող սա զարմանալի չթվա: Հայաստանը, փաստորեն, վերջին հինգ տարում դարձել էր նավթարդյունահանող երկիր: Բանն այն է, որ արտագնա աշխատանքի մեկնած մեր համաքաղաքացիների մի զգալի մասը ներգրավված է ՌԴ տնտեսության և հատկապես շինարարության մեջ, որոնց հաջողությունները մեծ չափով պայմանավորված էին միջազգային շուկայում նավթի գների բարձր կայունությամբ: Դրանով էլ պայմանավորված էին մեր քաղաքացիների կայուն եկամուտները, որոնք հոսում էին Հայաստան: Այդ ճանապարհով Հայաստանը, փաստորեն, ինքնաբերաբար վերածվում էր նավթադոլարներից օգտվող երկրի: Մի քանի միլիարդ դոլար էր տրանսֆերտների տեսքով գալիս Հայաստան և հենց այդ գումարներն էին դառնում մեր տնտեսական աճի լոկոմոտիվները, որոնք հիմնականում հայտնվում էին շինարարության և ծառայությունների ոլորտում: Այստեղ ևս անկումն ակնհայտ է: Եթե 2006 թվականին շինարարության ծավալները ՀՆԱ-ի աճի կառուցվածքում կազմել են մոտավորապես 36 տոկոս, ապա 2007 թվականին այդ ցուցանիշը հավասար էր 17 տոկոսի, իսկ 2008 թվականի նույն տվյալը պաշտոնապես հայտարարվել է 1,7 տոկոս: Երկու տարվա կտրվածքով՝ մոտ երեսունանգամյա անկում: Սրան գումարվեցին նաև պղնձի և մոլիբդենի միջազգային գների անկումը, դրամի անհարկի արժևորումը և որպես դրա ուղղակի հետևանք՝ արտահանման ծավալների նկատելի նվազումը: Կրկնում եմ, սա ես բացատրում եմ ոչ այնքան միջազգային տնտեսական ճգնաժամով, որքան ՀՀ կառավարության վարած տնտեսական քաղաքականությամբ, որը ես կանվանեի թոշակառու պետության տնտեսական հայեցակարգ: Տեսեք՝ ինչ է տեղի ունենում: Բյուջեի ծավալների մեծացումն իրականում բիզնեսին հնարավորություն չի տալիս նորմալ զարգանալու, իսկ թոշակառուների համար զուտ քարոզչական նպատակներով սարքվող փուչիկներն ընդամենը բլեֆ են, և թոշակառուների կյանքը դրանից չի լավանում, որովհետև մյուս կողմից անհամեմատ ավելի է վատանում թոշակառուին պահող գործարար որդու կամ թոռան կյանքը:

Բոլորովին վերջերս կառավարությունը հայտարարեց, որ մեր թիրախը լինելու է խոշոր բիզնեսը: Այստեղ ես համաձայն չեմ թիրախ բառի հետ: Վերջին հաշվով բիզնեսը, լինի խոշոր թե միջին ու մանր, Հայաստանի թշնամին չէ, այլ Հայաստանը պահող ձեռքը: Այդուհանդերձ, չնայած իրենց իսկ հայտարարությանը, կրկին թիրախ են դարձնում փոքր ու միջին բիզնեսը: ՀԴՄ-ների համատարած տեղադրումը և ողջ ազգին ղումարբազության հասցնելն ու հարկային տեսուչ դարձնելը դեռևս հեռու են խոշոր բիզնեսի դեմ պայքարելու արդյունավետ միջոցներ համարվելուց: Կարող են ոմանք ինձ հակադրվել, թե ՀԴՄ-ների տեղադրումն օգնում է ի հայտ բերելու ստվերային շրջանառությունները: Հասկանալի է, բայց մյուս կողմից էլ՝ փոքր ձեռնարկատիրոջը ձեռնտու չէ ցույց տալ իրական առևտուրը, որովհետև մեծածախ շուկայում տվյալ ապրանքի համար նրան հաշիվ-ֆակտուրա չեն տալիս, և դրամարկղային կտրոն տալով՝ ինքն իրեն զրկում է շահույթից: Փոխանակ այս վիճակից ելք գտնելու, գործի է դրվում պետական մահակը՝ զանազան տուգանքների տեսքով: Փաստորեն նաև այս միջոցառման արդյունքում է հարվածի տակ հայտնվում փոքր ու միջին բիզնեսը: Իմ կարծիքով, եթե այս գործընթացը շարունակվի, Հայաստանում փոքր և միջին բիզնեսն ընդհանրապես կվերանա: Վերջում, երբ արդեն բիզնեսի փոքր ու միջին հատվածը հայտնվի հոգեվարքի մեջ և խոշոր բիզնեսը մնա մենակ, իշխանությունը, սպիտակ ձիու վրա նստած, կհայտնվի ժողովրդին և կհայտարարի, որ սկսել է պայքարը խոշոր բիզնեսի դեմ: Սա, ար-

դեն, Խորհրդային Միության արշալույսից մեզ հայտնի կուլակաթափությունն է: Ի վերջո մենք կունենանք մեկ մարդու էկոնոմիկա: Ըստ էության, միջազգային տնտեսական ճգնաժամն ուղղակի փրկօղակ է մեր իշխանություններին համար, որին էլ նրանք վերագրում են մեր տնտեսության մեջ եղած թյուրիմացությունները: Որպեսզի ասվածը չհնչի որպես ինքնանպատակ քննադատություն, ասեմ, որ ելքեր այնուամենայնիվ կան: Կցանկանայի անել նաև մեկ-երկու առաջարկ, որոնք գուցեև ընդունվեն:

Առաջին՝ պետք է գնալ բյուջեի սեկվեստրի և, հատկապես, պետական գնումների ոլորտ, որպեսզի բիզնես-դաշտն իր վրա ավելի քիչ ճնշումներ զգա, կամ էլ՝ երկրորդ մոդելը՝ անցնել բյուջեի ֆինանսավորման դեֆիցիտային համակարգին, այսինքն՝ մեծացնել բյուջեի դեֆիցիտը: Մեր բյուջեում այն այնքան էլ մեծ չէ, և, եկամուտների մասը կրճատելով, առանց վախենալու ինֆլյացիոն երևույթներից, կարելի է թեթևացնել բիզնես-դաշտի ծանրաբեռնվածությունը: Երրորդ՝ կարելի է փոքր բիզնեսի պարագայում ժամանակավորապես հրաժարվել ՀԴՄ-ների կիրառումից և գանձել միայն հաստատագրված վճար: Չորրորդ՝ պարտադիր է հակամենաշնորհային օրենսդրության ընդունումը: Դա ենթադրում է ունենալ մի անկախ մարմին՝ անհրաժեշտ լիազորություններով, որպեսզի հստակ գործառույթներ իրականացնի հակամենաշնորհային բնագավառում: Այսօր մենք մրցակցության ապահովման համակարգ, ճիշտ է, ունենք, բայց հակամենաշնորհային համակարգի տրամաբանությունը միանգամայն տարբեր է: Ժամանակի հետ, երբ արդեն կարգավորված կլինի հարկային դաշտի փաստաթղթաշրջանավորման խնդիրը, պետք է աստիճանական անցում կատարել պրոգրեսիվ հարկման համակարգին, ըստ որի տնտեսավարողները հարկ կվճարեն համամասնության կարգով. փոքրը՝ ավելի ցածր տոկոսադրույքներով, միջինը՝ նրանից բարձր, իսկ խոշորն՝ ավելի բարձր, և այլն:

Դրամավարկային քաղաքականության մեջ, թույլ չտալով ապրանքների կտրուկ թանկացում, անհրաժեշտ է զգուշորեն պահել փոխարժեքների լողացող կուրսը, հասնել այն բանին, որ աստիճանաբար դրամը մոտենա իր իրական արժեքին: Դա կարելի է անել տեղական արտադրողին նպաստելով միայն:

Ապա քննարկման կարգով ձայն խնդրեց ՀՀ ԱԺ պատգամավոր Արա Նռանյանը.

Այս ճգնաժամը ես կանվանեի լիբերալիզմի ճգնաժամ, որովհետև այսօր կան բոլոր հիմքերը ասելու, որ ազատական գաղափարախոսությունն է հայտնվել ճգնաժամի մեջ: Մենք մինչև օրս տեսնում ենք, որ կենսամակարդակի առումով մեծ տարբերություններ կան երկրների միջև: Տեսնում ենք, որ առավել թույլ զարգացած երկրներում մարդն ավելի շատ է աշխատում, բայց ապրում է ավելի վատ, ապրում է ավելի կարճ, քան ԱՄՆ-ում կամ Եվրոպայի համեմատաբար զարգացած երկրներում: Բայց վրա հասավ համաշխարհային տնտեսական ճգնաժամը և պարզվեց, որ զարգացած երկրներում առկա բարձր կենսամակարդակը լուրջ հիմքերի վրա չի կառուցված և այդ երկրները դրան հասել են առաջին հերթին ոչ թե աշխատանքի, այլ շատ հետաքրքիր ֆինանսական համակարգի շնորհիվ: Այն կարող ենք բնորոշել որպես բանկային ռեսուրսների շռայլ օգտագործում՝ համապատասխան ֆինանսական ռեսուրսների բացակայության պայմաններում: Խոշոր ապահովագրական գործարքների իրականացումը, սակայն, հանգեցրեց այն բանին, որ ֆինանսական փուչիկն ուռավ, մեծացավ և վերջում եկավ մի պահ, երբ հասկացան, որ համապատասխան ապահովագրական գումարներ իրենք չունեն: Իմ կարծիքով՝ այս գործընթացները կհանգեցնեն կենսամակարդակների եթե ոչ հավասարեցման, ապա գոնե մոտեցման և, որ ամենակարևորն է, մի իրավիճակի, երբ մարդիկ կաշխատեն և կվարձատրվեն իրենց աշխատանքին համեմատ: Սա արդեն նկատելի է աշխարհի բազմաթիվ երկրների կառավարությունների որդեգրած տնտեսական քաղաքականության մեջ, որով առաջին պլանի վրա են դրվում ոչ թե ընկերությունների շահերը, այլ ազգաբնակչության կենսամակարդակի խնդիրներն ու պաշտպանվածության հարցերը: Եթե այս տեսանկյունից դիտարկենք Հայաստանում տիրող իրավիճակը, կտեսնենք, որ մենք կամ դոփում ենք տեղում, կամ էլ, լավագույն դեպքում հանդես ենք գալիս իրադարձությունների հետևից գնացողի դերում: Ամեն լավ գաղա-

փար, ասենք՝ ստեղծված իրավիճակում երևույթների վրա դրական ազդեցության առումով պետության դերի բարձրացումը, չգիտես ինչու, ի վերջո ծառայեցվում է մի մարդու կամ մի քանիսի սեփական շահերին: Վերցնենք, օրինակ, գորգագործության ասպարեզը: Առաջին հայացքից թվում է, թե այս խիստ ինքնատիպ ոլորտի նկատմամբ պետական հոգածություն է հանդես բերվել: Այդ մասին մենք նույնիսկ բարձրաձայնեցինք և գաղափարը պաշտպանեցինք վարչապետի հետ հանդիպման ժամանակ: Բայց հանկարծ պարզվում է, որ բնագավառին տրվող արտոնություններից օգտվել կարող են միայն մեկ-երկու ընկերություններ, նրանք, որոնք գնում են նկատելի խոշորացման: Ստացվում է, որ պետական միջոցներ են ներդրվում միայն այն նպատակով, որ ինչ-որ կոնկրետ բիզնեսներ ծաղկեն:

Ես չեմ կարող չհամաձայնել նաև հաճախակի շրջանառվող այն մտքի հետ, որ արդեն իսկ ընթացքի մեջ են սեփականության վերաբաշխման գործընթացները: Իշխանության կողմից ակնհայտ փորձ է արվում ձևավորելու նոր օլիգարխիա: Եթե մենք նախկինում կարծում էինք, որ փոքր ու միջին բիզնեսի հաշվին խոշոր բիզնեսի զարգացմանն ուղղված պետական աջակցության այս քայլերը նպաստում են ձևավորված օլիգարխիայի ամրապնդմանը, ապա այժմ դժվար չէ տեսնել, որ դրանց նպատակը նոր օլիգարխիայի ձևավորումն է: Պետության աջակցությամբ այս նոր խավը կարող է այնքան հզորանալ, որ նրանց մոտ նույն Գագիկ Ծառուկյանն ու Սամվել Հարությունյանը կդիտվեն իբրև փոքր ու համեստ գործարարներ: Չի բացառվում նաև, որ այդ նոր օլիգարխները լինեն դրսից:

Վերջում կցանկանայի մի քանի խոսք ասել նաև տեղական արտադրության ոլորտում տիրող իրավիճակի մասին: Դեռ մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամի Հայաստան մուտք գործելն էլ զգացվում էր, որ այս ոլորտում մենք կանգնած ենք լուրջ դժվարությունների առաջ: Տեղական արտադրության որոշ ճյուղեր, որոնք աննախընթաց վերելք էին ապրել վերջին տասը տարիներին և նպաստել ներմուծվող շատ ապրանքների փոխարինմանը տեղականով, 2007 թվականի վերջին տնտեսական ցուցանիշների անկում արձանագրեցին 25-30 տոկոսի սահմաններում: 2008 թվականին, 2007-ի համեմատությամբ, ևս 25-30 տոկոսի անկում նկատվեց: Դրա պատճառը ևս ստեղծված իրավիճակից չբխող տնտեսական քաղաքականությունն է՝ պետության կողմից դոլարի ոչ ռեալ փոխարժեքի սահմանումն ու ներմուծման պարտադիր խրախուսումը:

ՀՀ ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյանի ելույթը, որ վերջինն էր «կլոր սեղանի» ծրագրով, հիմնականում նվիրված էր ՀՀ ԱԺ-ի ՀՅԴ պատգամավորական խմբակցության առաջարկներին՝ արված թե բյուջեի քննարկման ժամանակ և թե դրանից հետո, երբ արդեն ակնհայտ է, որ տնտեսական ու ֆինանսական ճգնաժամային գործընթացները, այնուամենայնիվ, Հայաստանը շրջանցել չեն կարող:

Կարծում եմ, մեզ՝ բոլորիս, օգտակար կլինի մեկ անգամ ևս անդրադառնալ ՀՀ վարչապետի տեսակետներին, որոնք հնչել են միջազգային տնտեսական ճգնաժամի հետ կապված քննարկումներում: Եթե դրանք դիտարկենք ժամանակագրական առումով, ապա հեշտությամբ կնկատենք նրա մոտեցումների փոփոխության դինամիկան: Այստեղ ներկաներից, հավանաբար, շատերն են հիշում, որ դեռևս բյուջեի առաջին քննարկման ժամանակ,- դա 2008 թ. հոկտեմբերի 24-ն էր,- վարչապետն իր տեսակետները զարգացնում էր՝ ելնելով կառավարության մինչ այդ հաստատված ծրագրի դրույթներից ու առաջնահերթություններից: Բյուջեն, ըստ էության, դիտարկվում էր որպես մի փաստաթուղթ, որ պետք է ապահովեր այդ ծրագրի գերակայությունները: Սակայն շատ չանցած, նույն թվականի նոյեմբերի 12-ին վարչապետը հանդես եկավ մի ելույթով, որը հետագայում պետք է համարվեր հակաճգնաժամային ծրագիր: Դա բավականին ուշագրավ մի ելույթ է, որտեղ պարզորոշ նկատվում են

կառավարության ղեկավարի մտահոգությունները՝ առնվազն թղթի վրա ներկայացված: Այստեղ վարչապետը առաջ է քաշում հիմնական մոտեցումները, որոնք պետք է կիրառել որպես ճգնաժամի առաջին դասերից արվող հետևություններ: Այսպես՝ ֆինանսական հատվածում սահմանել խիստ վերահսկողություն և ապահովել հոսքերի բացահայտման ունիվերսալ գործիքների առկայություն: Կարծում եմ՝ այստեղ որևէ առարկություն չի կարող լինել: Այնուհետև՝ թափանցիկության կանոնների պահպանում, այդ թվում խոշոր ձեռնարկությունների գործունեության թափանցիկության և հասարակության կողմից վերահսկողության ապահովում, պատժամիջոցների կիրառման հնարավորություն նկատելի ռիսկերի դրսևորման դեպքում, իրական և ֆինանսական հատվածներում ռիսկերի բացահայտման միասնական մեթոդաբանության մշակում, վերահսկող մարմինների համախմբվածության անհրաժեշտություն, դրամավարկային և վարկաբյուջետային քաղաքականությունների համակարգման նոր սկզբունքների մշակում, մակրոտնտեսական կայունության խաթարման անթույլատրելիություն և վերջապես ամենակարևորը՝ սոցիալական համերաշխության և վստահության մթնոլորտի ապահովում:

Վարչապետի այս խոսքերը, որպես համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջին դասեր, սկսած այն պահից, որ նա ներկայացրեց, այսօր էլ արդիական են համարվում և փորձ է արվում իրագործել: Ի պատասխան այս մոտեցումների, թեև բյուջեի վերանայումներ տեղի չունեցան, ընդունվեցին նոր ծրագրեր: Ես կցանկանայի այստեղ ներկայացնել բյուջեի և ընդհանրապես ստեղծված իրավիճակի վերաբերյալ ՀՅԴ խորհրդարանական խմբակցության մոտեցումները:

Գնահատելով 2009 թվականի պետական բյուջեն՝ մենք արձանագրեցինք, որ այն կառուցված է 9,2 տոկոս տնտեսական աճի կանխատեսմամբ, եկամուտների 21,37 և ծախսերի 15,01 տոկոս աճով: Բյուջեի ծախսային մասում սոցիալական ծախսերի 47,1 տոկոս, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտների 22,5 տոկոս և տնտեսության ճյուղերի 13,5 տոկոս բաշխվածությամբ: Մենք կառավարության ուշադրությունը հրավիրեցինք հետևյալ հանգամանքների վրա, որոնք ուղղակիորեն կապված են բյուջեի կատարման հետ: Առաջին՝ տնտեսական ամենակարևոր փաստաթուղթը կառուցված չէ միջազգային տնտեսական ճգնաժամի մարտահրավերներից բխող ռիսկերի կանխարգելման, նվազեցման և չեզոքացման սկզբունքների հիման վրա և, որոշակի իմաստով, իր մեջ կրում է նախորդ ժամանակաշրջանի իներցիան: Երկրորդ՝ բյուջե-2009-ը չէր մշակվել ծրագրային բյուջետավորման սկզբունքի ամբողջական գործադրմամբ: Մենք նաև արձանագրել ենք, որ տնտեսական աճի 9,2 տոկոս կանխատեսումը պարունակում է ռիսկի բարձր աստիճան: Տնտեսական աճի նախատեսված մեծության չափով, այս դեպքում, վտանգվելու են եկամուտների հավաքագրման և ծախսերի հետ կապված գործընթացները: Այս և սրանցից բխող մի քանի այլ գնահատականներ մենք տվել ենք դեռևս 2008 թվականի նոյեմբերի 27-ին: Այժմ այն առաջարկների մասին, որոնք մենք կարևոր ենք համարում համաշխարհային տնտեսական ճգնաժամի մարտահրավերները դիմագրավելու համար: Ըստ մեր խմբակցության՝ անչափ կարևոր է կիրառել բյուջեի եկամտային դիվերսիֆիկացված քաղաքականություն, հարկային և մաքսային վարչարարության այնպիսի մեթոդներ, որոնք չհանգեցնեն տարակարծիք մեկնաբանությունների, տնտեսական խաթարումների և քաղաքական շահարկումների: Հաշվի առնելով նախորդ տարիների բյուջեների վերաբերյալ Վերահսկիչ պալատի կողմից ներկայացված տվյալները, կառավարությունը պետք է առավելագույնս ձեռնպահ մնա հավելյալ հավաքագրվող եկամուտների կամ բյուջեի դեֆիցիտի մեծացման միջոցով նոր ծախսային ծրագրերի իրականացումից, առանց Ազգային ժողովում լրացուցիչ քննարկումներ կազմակերպելու: Երրորդ՝ անհրաժեշտ է խստագույնս հետևել բյուջեով նախատեսված ծրագրերի ճշգրիտ կատարմանը, իսկ դրանց անհնարինության կամ ծրագրերի ծավալների փոփոխության դեպքում հարկ է հետագա քննարկումներին մասնակից դարձնել ոչ միայն Ազգային ժողովին, այլև հասարակական կազմակերպություններին: Չորրորդ՝ մասնավոր տրանսֆերտների և աշխատատեղերի կանխատեսվող կրճատումներով պայմանավորված տնտեսական

հետևանքները մեղմացնելու նպատակով, ի հավելումն կառավարության կողմից ձեռնարկվող գործողությունների, մենք առաջարկում ենք քննարկել և իրացնել նաև հետևյալ գործողությունները.

Փոքր և միջին բիզնեսի աջակցության ծրագրերը մշակել ու գործադրել տարածքների մասնագիտացման և տնտեսության ոլորտների ու ռեսուրսների հարաբերական առավելությունների հիմքի վրա: Խրախուսել և տնտեսական աջակցության սխեմաներ կիրառել տնտեսվարող այն սուբյեկտների համար, որոնք ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, նորարարական մոտեցումներով և մասնագիտական կրթության ծրագրերով ձգտում են բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը՝ առանց առնվազն կարճաժամկետ հատվածում աշխատատեղերի կրճատման: Մշակել և գործադրել աշխատուժի կազմակերպված ժամանակավոր արտահանման ծրագրեր, պետություն-մասնավոր համագործակցության հայեցակետին համապատասխան: Իրականացնել ազգաբնակչության եկամուտների իրական բարձրացման քաղաքականություն, որպես առաջնահերթություն դիտարկելով առաջնային եկամուտների, այդ թվում աշխատավարձերի բարձրացումը, հանդես գալ նվազագույն աշխատավարձի վերանայման առաջարկությամբ՝ հիմքում դնելով կենսապահովման նվազագույն բյուջեն կամ դրան ներկայումս փոխարինող նվազագույն սպառողական զամբյուղը, որի համաձայն նվազագույն աշխատավարձը կարող է սահմանվել 40 հազար դրամ: Հանրային ծառայողների վարձատրության ոլորտում մշակել և ներդնել միասնական ռազմավարություն: Վերանայել աղքատության հաղթահարման ռազմավարությունը, որը ներկայումս կոչվում է կայուն զարգացման ռազմավարություն, նպատակ ունենալով բարձրացնել պետության աջակցող դերն ու պատասխանատվությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում, իսկ նյութական աղքատության հաղթահարման ուղենիշ դարձնել կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը: Պետության կողմից տնտեսական միավորների կապիտալների մասնակցության հարցերի քննարկումների ժամանակ առաջնահերթ համարել ռազմավարական ապրանքատեսակների արտադրության կամ ներմուծման ոլորտում հանդես գալու հնարավորություն ունեցող կազմակերպությունների ստեղծումը կամ այդ ոլորտում մասնակցության ձեռք բերումը: Արտահանման խրախուսման նպատակով աջակցել ազգային արտադրողներին՝ վերջիններիս ապրանքատեսակներն արտաքին շուկաներում իրացնելու հարցում, մասնավորապես ձևավորել միջազգային պահանջներին համապատասխանող, որակի միջազգային ստանդարտներից բխող հայկական ապրանքատեսակների համախումբ, որոնց իրացման համար այլ երկրների հետ կնքել առևտրային տարածքների տրամադրման պայմանագրեր, այդ երկրներում հայկական ապրանքատեսակների և ընկերությունների իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասությամբ օժտված մարմիններ: Կենտրոնական բանկի հետ համատեղ քննարկել և իրականացնել արտահանմանն աջակցող արտարժութային քաղաքականություն: Այսօր մենք կրկին փաստում ենք, որ կարգավորվող, լողացող կուրսի տակտիկայի զուգորդումը գնաճի զսպման՝ Կենտրոնական բանկի որդեգրած քաղաքականության հետ չի ապահովում ցանկալի արդյունք: Խաթարվում է վճարային հաշվեկշիռը, գնաճը դառնում է անկանխատեսելի և չվերահսկվող: Կենտրոնական բանկի հետ համատեղ քննարկել և իրականացնել էժան վարկերի քաղաքականություն: Վարկային «էլիտար» քաղաքականությունից անցում կատարել տնտեսությանը և բնակարանաշինությանը աջակցող վարկային քաղաքականության: Մենք կարևոր ենք համարում Կենտրոնական բանկի կողմից այնպիսի քաղաքականության գործադրումը, որը կերաշխավորի առևտրային բանկերի ղեկավար անձնակազմերի չափազանց բարձր վարձատրությունների զսպումը, ինչպես նաև բանկերի օպերացիոն ծախսերի նվազեցումը, ինչը վճռորոշ ազդեցություն կարող է ունենալ բանկային տոկոսադրույքների նվազեցման հարցում: Տնտեսության մեջ մրցակցային կարգերի հաստատման նպատակով հարկ է գործադրել հակամենաշնորհային ակտիվ քաղաքականություն:

Թվարկածս առաջարկությունները ներկայացնելիս մենք հաշվի ենք առել, որ տնտեսական քաղաքականությունը պետք է միտված լինի առաջարկի և պահանջարկի համակարգային խթանման քաղաքականությանը: Վարչապետը մեզ հետ իր վերջին

հանդիպման ժամանակ գոհունակությամբ նշեց, որ այս առաջարկների մեծ մասն, ըստ էության, արդեն իսկ իրականացվում է: Սակայն, մենք տեսնում ենք, որ իրականացվում են ընդամենը այս գաղափարների վերածնված տարբերակները:

Այդուհանդերձ, պետք է արձանագրեմ, որ կառավարությունը փորձում է իրականացնել հակաճգնաժամային որոշ ծրագրեր: Դրանցից ամենանշանակալին, թերևս, այն է, որ կառավարությունը որոշում է ուղղակի բյուջետային վարկերի տեսքով աջակցություն ցուցաբերել մասնավոր սեկտորին, նրան ազատել որոշակի հարկատեսակներից կամ երկարաձգել այդ հարկատեսակների վճարման ժամկետները: Այս հարցում մեր առարկությունը միայն այն է, որ այս մոտեցումը լինի ոչ թե ըստ սուբյեկտների, այլ ոլորտային՝ հիմնվելով Հայաստանի տնտեսության մրցունակ ոլորտների բացահայտման և դրանց խրախուսման վրա, լինի ոչ թե կոնկրետ այս կամ այն սուբյեկտին ճանաչելով կամ ընտրողաբար, այլ կիրառվի այս կամ այն ոլորտում, այս կամ այն տարածքում, ինչպիսին, ասենք, մեր մարզերն են, այս կամ այն տնտեսական գոտիներում միջոցառումներ իրականացնելու միջոցով: Կառավարության ներկա գործողություններում ոչ պակաս կարևոր քայլ ենք համարում հայրենական արտադրատեսակների ավելացումը խթանող քաղաքականությունը, որն առայժմ կիրառվում է ընդամենը երկու փոքր գործիքների միջոցով, այն է՝ մաքսատուրքերի ավելացումը և որոշակի վերաբերմունքը ակցիզային հարկի նկատմամբ:

Կցանկանայի խոսել նաև, այսպես կոչված, կեղծ մարտահրավերների և կեղծ լուծումների առաջացման վտանգի մասին: Որո՞նք են դրանք: Առաջին՝ լսվում են հայտարարություններ, թե պետք է վերաիմաստավորել պետության դերը տնտեսության մեջ: Մարդիկ, ովքեր անում են այս հայտարարությունը, իրականում ոչ թե հետապնդում են պետության դերի կարևորումը տնտեսության մեջ, այլ ցանկանում են ընդգծել, ու պետությունն ի վիճակի չէ իրական կառավարող լինել տնտեսության մեջ, տնտեսությունը ազգաբնակչությանը ծառայեցնելու միջոց լինել: Եվ սա պատահական թեզ չէ: Այն առաջ է քաշվել 90-ական թվականների սկզբին և դարձել մեր տնտեսության փլուզման հիմնական պատճառներից մեկը: Երկրորդ՝ քաղաքական նպատակադրումներից ելնելով՝ առաջարկվում են որոշակի լուծումներ, որոնք տնտեսության զարգացման հետ ամենևին կապ չունեն: Խոսքը վերաբերում է թե ենթակառուցվածքներում մեծ ներդրումներ անելու անհրաժեշտության և թե ողջ ռեսուրսը առավել մեծ ավելացված արժեք ստացող ոլորտներում աշխատատեղերի ավելացման վրա ներդնելու առաջարկություններին ու հայտարարություններին: Սրանք պարզ քաղաքական նպատակադրումներ են՝ քողարկված տնտեսական առաջարկների և մոտեցումների շղարշով: Ինչո՞ւ: Ներդրումներ ենթակառուցվածքներում միշտ է պետք անել՝ դրանք չպայմանավորելով ճգնաժամային իրավիճակով: Բանն այն է, որ այս բնագավառի ներդրումները հիմնականում երկարաժամկետ ծրագրեր են և ապագայում, չնայած հարափոփոխ իրավիճակներին, իրենց դրական արդյունքը տալու են: Մենք առաջարկում ենք ենթակառուցվածքների զարգացման ոլորտում կիրառել ոչ ստանդարտ քայլեր: Դրանցից մեկն, օրինակ, հետևյալն է. չխուսափելով բյուջեի դեֆիցիտի մեծացումից՝ միջոցներ ուղղել հատկապես սոցիալական ծախսումներին: Մեր համոզմամբ՝ մինչև չձևավորվի իր նվազագույն ծախսումների համար անհրաժեշտ միջոցների վրա վստահ հասարակություն, նա չի կարող արժեքներ ստեղծել տնտեսության մեջ: Որպես հաջորդ քայլ՝ չպետք է խուսափել արտաքին աշխարհից միջոցներ ներգրավելուց: Ընդհակառակը, չպետք է վարանել, այլ պետք է համարձակ գնալ այդ քայլին, առանց վախենալու, թե կարող ենք հանկարծ ստանձնել մի ֆինանսական պարտավորություն և վաղը չկարողանանք դա կատարել: Այստեղից էլ բխում է հաջորդ քայլը. ստացված միջոցներն իսկապես ուղղել Հայաստանի տնտեսության մրցունակությունն ապահովող ոլորտներին:

Կեղծ մոտեցում ենք համարում նաև շրջանառության մեջ դրված ռուբլու գոտում ընդգրկվելու գաղափարը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ նման առաջարկի ի հայտ գալուն նպաստեց վարչապետի այն դիտարկումը, թե քանի որ Հայաստանը գտնվում է բարձր դոլարիզացիայի մակարդակում, կարելի է փորձել դոլարիզացիայի մի զգալի հատված տեղափոխել ռուբլու դաշտ: Սա, ըստ մեզ, մեկ օրում և մեկ որոշումով իրագործվելիք բան չէ և

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

պահանջում է երկարամյա գործողությունների մի համալիր, որ կիրառել են բազմաթիվ երկրներ: Ահա թե ինչու, մենք մտածում ենք, որ Հայաստանը ռուբլու գոտի մտցնելու առաջարկն ընդամենը արտարժութային ոլորտի պատասխանատուների կողմից որոշակի հարցերից խուսափելու միջոց է:

Ամփոփելով ասեմ, որ կեղծ մարտահրավերների շարքում դիտարկում ենք նաև այն պնդումները, թե մենք խուսափեցինք ճգնաժամի առաջին ալիքից, որովհետև մենք զարգացած կապիտալի շուկա չունեինք, և դա լավ էր: Սա անհեթեթություն է: Իրականում եթե մենք ունենայինք այդ շուկան, շատ ավելի հեշտ կդիմագրավեինք այս իրավիճակը, որովհետև ճշգրտումները տեղի են ունենում հենց կապիտալի շուկայում և ոչ թե մարդկանց մտքերում և թղթի վրա:

«Կլոր սեղանի» ավարտին ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն: Ստորև, ըստ հերթականության, ներկայացնում ենք նաև մեր կարծիքով առավել հետաքրքիր ելույթներն ու զեկուցաբերներին ուղղված հարցումները:

Վարդան Բոստանջյան

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

Ուշադիր լսելով այս ելույթները, որոշ վերապահումներով ընդունելով նաև այստեղ արված բազմաթիվ առաջարկությունները, կցանկանայի այդուհանդերձ հարց ուղղել բանախոսներին: Երբ այս ամենը մենք հաստատագրում ենք հանրությանը, նրան թվում է, որ եթե մի քիչ էլ պնդենք մեր առաջարկությունների վրա, իշխանությունները դրանք ուզած-չուզած կընդունեն, և իրավիճակը կշտկվի: Բայց, որքան որ ես նկատում եմ, նման բան տեղի չի ունենում: Մենք բավականին խելոք ազգ ենք և, ցանկության դեպքում, ինչպես տեսնում եք, լավ առաջարկների ամբողջություններ կարողանում ենք կազմել: Բայց իրենք՝ իշխանությունները, չեն ընդունում դրանք: Ուզում եմ հարցնել՝ ի՞նչ է պետք անել նման իրավիճակում: Կցանկանայի, որ այս հարցը ուղղված լիներ նաև պարոն Մարիո Նալբանդյանին: Նա կարո՞ղ է մեզ ասել՝ աշխարհում հնարավո՞ր է այսպիսի բան, որ իշխանությունը չուզենա որևէ լավ բան անել:

Մարիո Նալբանդյան

Ներկայումս այն վիճակն է, որ կառավարությունները փորձում են իրենք իրենց միջոցներով հարցերը լուծել: Եթե բացառենք ԱՄՆ-ի պարագան, որտեղ ընդդիմությունը կառավարությանը հստակ ֆեռք մեկնած փորձեց այս ճգնաժամից միասնաբար դուրս գալ, ոչ Ֆրանսիայում, ոչ Անգլիայում և ոչ էլ նույնիսկ Գերմանիայում չենք նկատում միասնաբար հարցերը լուծելու ցանկություն: Ընդդիմությունն ընդհանրապես աշխարհի շատ երկրներում պասիվ է: Նրանց տնտեսագետները ընդամենը գալիք ընտրությունների հեռանկարով են քննադատում կացությունը և փորձում են իրենց գաղափարական տարաձայնություններով տարածություն պահել իշխանություններից: Ասել է թե ինչ-որ ֆևով հարցերը լուծելու մենաշնորհ է տրված կառավարություններին: Ես չեմ կարծում, որ նույն ճամփան է բռնել նաև Հայաստանը: Հայաստանը պետք է գնա համահայկական, ազգային ճիգով այս տագնապը հաղթահարելու ճանապարհով: Մենք իրավունք չունենք ֆեռնածալ նստել և մյուս երկրների ընդդիմության նման մտածել, թե միայն կառավարության գործն է դուրս գալ ստեղծված իրավիճակից:

Անդրանիկ Թևանյան

Ինձ համար ևս ընդունելի են այստեղ արված առաջարկների մեծ մասը, սակայն թույլ տվեք չհամաձայնել ճգնաժամի հաղթահարման գործում պետության դերի բարձրացման շուրջ արված եզրահանգումներին: Պետություն ասվածը մեր այսօրվա իշխանությունն է, որ իմ հասկացողությամբ կազմված է միայն նախագահի ինստիտուտից, վարչապետից և էկոնոմիկայի նախարարից: Նրանք պարզապես ի վիճակի չեն լուծումներ գտնելու, և ես մտավախություն ունեմ, երբ ասում եք նրանց տրամադրության տակ ավելի մեծ միջոցներ կամ լծակներ դնենք: Նրանք այս պահին նման են այն բժշկին, ով, գործից գլուխ չհանելով, էլեկտրիկին է խնդրում վիրահատել հիվանդին: Այս դեպքում, իմ կարծիքով, ռիսկերն ավելի են մեծանում:

Արծվիկ Մինասյան

Պարոն Թևանյան, մենք ընդդիմությունից տարբերվում ենք հենց նրանով, որ վստահում ենք իշխանությանը: Ընդդիմությունը չի ուզում պայքարել ներսում: Նրա նպատակը իշխանության կազմալուծումն ու կազմաքանդումն է: Իսկ մենք ասում ենք՝ քանի դեռ շանս կա, քանի դեռ հնարավորությունները չենք սպառել, պայքարենք և իրականացնենք

տնտեսությունն առողջացնելու առաջնահերթությունները: Ի դեպ, եթե վերը բերված մեր առաջարկները դիտարկեք նաև միջազգային փորձի տեսանկյունից, կտեսնեք, որ բազմաթիվ երկրներում՝ և առաջավոր, և թույլ զարգացած, դրանց շատ նման միջոցառումներ արդեն կիրառության փուլում են: Իսկ ինչ վերաբերում է պարոն Բոստանջյանի այն հարցին, թե ինչու է մեր կառավարությունն ընդդիմանում և ամբողջությամբ չի ընդունում մեր խմբակցության առաջարկները, կարող եմ ասել, որ դրա համար նա ամբողջությամբ պետք է լիներ դաշնակցական կառավարություն: Քանի որ մեր կառավարությունն այդպիսին չէ, մենք պայքարում ենք, որ մեր առաջարկներն ընդունվեն:

Մարիո Նալբանդյան

Պարոն Մինասյան, Ձեր ելույթում ասացիք, որ պետք է համարձակորեն գնալ արտաքին աշխարհից նորանոր միջոցներ ներգրավելու քայլերին: Երբ տակավին վերանայման կարիք ունի ներքին արտադրության և արտահանման քաղաքականությունը, որքանո՞վ է նպատակահարմար արդեն եղած արտաքին պարտքերին նոր պարտքեր ավելացնել, մանավանդ որ մենք պետք ունենք ներքին ներուժի դասավորման և կարգավորման:

Արծվիկ Մինասյան

Այդպիսի գործիք արդեն ստեղծված է, կա, դա համահայկական բանկն է: Համահայկական բանկի շնորհիվ համահայկական ներուժի, այդ թվում նաև ափյուռքի միջոցների ներդրման հնարավորությունն արդեն տրված է:

Վարդան Բոստանջյան

Ես կփորձեմ մի փոքր այլ կերպ մոտենալ այստեղ քննարկվող հարցերին, որոնցից շատերի պատասխանները, ինչ թվում է, թաքնված են հեղինակային տարածքի մի շարք երկրների, այդ թվում նաև Հայաստանի անցած անկախության ճանապարհի ողջ երկայնքով: Մեր դժվարությունները, մեր տնտեսության մեջ եղած բազմաթիվ անհեթեթությունները, առաջին հերթին, պայմանավորված են այն բանով, որ մենք այդպես էլ չունեցանք ռազմավարական զարգացման կոնցեպցիա ոչ տնտեսական, ոչ էլ ֆինանսական մասով: Ինչ իշխանություն էլ գա պետության գլուխ, այս պայմաններում չի կարող նորմալ ղեկավարել: Մենք կարող ենք, իհարկե, անկախության անցած տարիները համարել անցման պահ, և հանախ այդպես էլ անում ենք, բայց ինչո՞ւ է այսօր էլ շարունակում գոյատևել այդ պահին հատուկ մի երևույթ, որ կոչվում է ստվերային տնտեսություն: Այն չի կարող ինքնուրույն հանքյան առաջանալ: Պարզ է, չէ՞, որ ներքևները, ժողովուրդը չի կարող ստվերային տնտեսություն ստեղծել: Դա անում են ուրիշները: Իսկ ինչո՞ւ են անում, ինչո՞ւ է մինչև օրս այն շարունակում գոյատևել: Իմ համոզմամբ՝ իշխանություններն ուղղակի շարունակում են կատարել սովետական ժամանակների, այսպես կոչված, կառավարող էլիտային բնորոշ քայլեր: Ինչպե՞ս կարող է Հայաստանի նման աղքատ երկիրն իր տարեկան բյուջեի մեջ նախատեսել պետական կառավարման ապարատի պահպանության ծախսեր՝ 12-15 տոկոսի չափով: Ինչո՞ւ է, օրինակ, մեր բյուջեի ծախսային մասով նրա երկու հինգերորդը տրամադրվում պետական գնումներին, երբ դրանց արդյունքում հանրապետության ներսում որևէ արտադրություն չի խթանվում: Մեր երկրում ստվերային տնտեսության պահպանմանն ամենից շատ երևի թե նպաստում է այսօրվա հարկային քաղաքականությունը, որը կարելի է առանց խղճի խայթի անվանել հարկային տեռոր: Այս բնագավառում ամեն ինչ արվում է այնքան նուրբ ու հաշվենկատ, որ ստվերը չտուժի և ամբողջ բեռի տակ հայտնվեն հարկային դաշտում գործող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Այստեղ խոսք գնաց նաև դրամի լողացող կուրսի անցնելու մասին: Ես, որպես տնտեսագետ և քաղաքացի, չեմ կարողանում հասկանալ, թե ինչ կարող է դա տալ Հայաստանին, երբ Ռուսաստանի նման երկիրն է հազիվ պահպանում իր ազգային արժույթի գոյությունը: Պատկերացրեք մի այսպիսի իրավիճակ. մեկը, ենթադրենք, դրսում հազար դոլար է աշխատել և ցանկանում է այդ գումարն ուղարկել Հայաստան: Պարզվում է՝ դա այնքան էլ հեշտ չէ, որովհետև մեր պետությունը, հենց սահմանի վրա, նրան ասում է. «Մինչև հինգ հարյուրն ինձ չտաս, այդ գումարը ներս չի մտնի»: Ասելիքս այն է, որ մեր ազգային արժույթը, որով փոխանակվում է մուտք գործող դոլարը, գլոբալիզացիայի ներկա պայմաններում վերածվել է ընդամենը ավտոբուս նստելու կտրոնի՝ կամ կա, կամ՝ չկա: Ըստ էության, մեր դրամային իշխանությունները համարժեք չեկեր բաց չեն թողնում, որպեսզի տեղի ունենա նորմալ տնտեսական շրջանառություն:

Ժողովրդավարության փորձը Հայաստանում.

հարցադրումներ

Սիւզան Խարտալեան



Սկիզբը «Դրօշակ» N.2, 2009թ.

Ժողովրդավարութիւնը կարելի դարձնող սկզբունքներ

Գործընթացներու եւ կանոններու ցանկ մը կրնայ նպաստել ճշդորոշելու համար թէ ինչ է ժողովրդավարութիւնը, բայց այդ ցանկը չօգներ հասկնալու թէ ժողովրդավարութիւնը իրականութեան մէջ ինչպէս կը գործէ: Անշուշտ, այս հարցի ամէնէն պարզ պատասխանն է՝ «ժողովուրդի համախոհութեամբ»:

Թէեւ աւելի համալիր պատասխանը հետեւեալն է. ժողովրդավարութիւնը կը գործէ ընտրազանգուածի լիազորութիւնը ստացած քաղաքական գործիչներու ձեռքով, որոնք կ'առաջնորդուին *պայմանական համախոհութեամբ* եւ կ'ենթակայեն *սահմանափակ անորոշութեան* պայմաններու տակ: Ի՞նչ կը նշանակէ սա գործնականին մէջ. ժողովրդավարութեան մը ներքեւ քաղաքական ներկայացուցիչները, նրուազագոյնը անպաշտօնօրէն, պիտի գան այն համաձայնութեան, որ մեծամասնութեան քուէները շահած խմբաւորումը պիտի չշահագործէ ընտրութիւններու արդիւնքն ու յաղթանակի ընձեռած ժամանակաւոր գերակայութիւնը եւ կորսնցնող կողմին առաջ փակէ իշխանութեան դռները, ազդեցութիւն բանեցնելու հնարաւորութիւնները: Մասնակցութեան հնարաւորութիւն ընծայելու այս կեցուածքի դիմաց, ժամանակաւորապէս պարտուող կողմը պիտի յարգէ եւ ճանաչի յաղթողի պարտաւորեցուցիչ որոշումներ կայացնելու անխախտելի իրաւունքները:

Քաղաքացիներէն կ'ակնկալուի յարգել եւ ենթարկուիլ մրցակցութեան արդիւնքով կայացած որոշումներուն, պայմանով որ այդ որոշումները արտացոլեն հաւաքական այն նախասիրութիւնները, որոնք բիւրեղացան արդար եւ թափանցիկ ընտրութիւններու եւ շարունակական բանակցութիւններու ընդմէջէն:

Այսեղ մարտահրաւէրը կը կայանայ ոչ թէ նպատակներու շարքի մը շուրջ համաձայնութեան գալու, այլ յստակ կանոններու շուրջ համախմբուելու դժուար գործին մէջ: Կոնսենսուսի գալու այս բանակցութիւնները եկէք պայմանականօրէն կոչենք «ժողովրդավարութեան սակարկութիւն»:

Սակարկութեան ձեւերը տարբեր են, նայած թէ որ հասարակութեան մասին է խօսքը: Այդ սակարկութեանը ստանալիք ֆորմը կախեալ է հասարակութեան մէջ առկայ ընկերային երկփեղկումներէն, փոխադարձ վստահութեան առկայութեան աստիճանէն, արդարութեան ստանդարտէն եւ մանաւանդ կոմպրոմիսի գալու տրամադրութենէն: Սակարկութեան ստանալիք ձեւն ու բովանդակութիւնը ուղղակի պատկերն է կենսական նշանակութիւն ունեցող հարցերու շուրջ յամեցող տարակարծութիւններուն:

Բոլոր ժողովրդավարութիւնները կը դիմագրաւեն ինչ որ աստիճանի անորոշութիւն: *Ո՞վ պիտի ընտրուի* եւ *ընտրուողը ի՞նչ խնդիրներ պիտի հետապնդէ* հարցերը միշտ կան նոյնիսկ այն կայացած պետութիւններուն մէջ, ուր քաղաքական մի հոսանք շարունակաբար յաղթական դուրս կուգայ, եւ կամ քաղաքական նոյն ուղին կը հետապնդուի տարիներ շարունակ (օրինակ՝ Իտալիա, Սկանտինաւեան ընկերվար-ժողովրդավար երկիրները): Այսուհանդերձ, մէկ կարեւոր նկատողութիւն՝ փոփոխութիւններ մտցնելու հնարաւորութիւնը միշտ կայ: Սակայն այս անորոշութեան պահը, որ յատուկ է բոլոր ժողովրդավարութիւններուն, ծայր աստիճան սահմանափակ է: Հնարաւոր չէ, որ որեւէ մէկ դերակատար հենց այնպէս մրցակցութեան մէջ մտնէ եւ բարձրացնէ իրեն դուր եկող խնդիրներ,- այդ ընելու համար կան նախօրոք հաստատուած կանոններ, որ պէտք է յարգել: Չի կարելի նաեւ որեւէ կամայականօրէն քաղաքական ուղի մը որդեգրել. անոր համար եւս կան պատշաճ պայմաններ: Ժողովրդավարութեան ինստիտուտը կ'արտօնէ միայն «նորմալ չափի», սահմանափակ քաղաքական անորոշութիւն: Չափի այդ սահմանները կը տարբերին երկիրներու միջեւ: Մեզի ծանօթ սեփականութեան, արտայայտութեան ազատութեան եւ այլ իրաւունքներու սահմանադրային երաշխիքները այդ սահմանագծումին մի արտայայտութիւնն են: Բայց ամէնէն վաւերական եւ էֆեկտիւ սահմանագծումը կը գոյանայ մրցակցութեան եւ քաղաքացիական համագործակցութեան հանդիպման կէտին: Այսինքն անգամ մը, որ պայմանական համախոհութեան կանոններու շուրջ համաձայնութիւն ստացուի, շեղումները կը մնան կանխատեսելիի եւ ընդունելիի սահմաններուն մէջ:

Օրերաշիւ ուղեցոյցի վրայ այս շեշտաւորումը կը հակադրուի գրականութեան մէջ տիրող այն գծին, որ կը կարեւորէ «քաղաքացիական մշակոյթը»: Վերի սկզբունքները կը հենին զգուշութեան կանոններուն վրայ, եւ ոչ թէ հանդուրժողականութեան, չափաւորութեան, փոխադարձ յարգանքի, արդար խաղի, կոմպրոմիսի տրամադրութեան եւ իշխանութիւններուն վստահելու վաղուց «արմատացած» սովորութիւններու վրայ: Սղասել, որ այս սովորոյթները խոր եւ յարատեւող արմատներ արձակեն մեր հասարակութեան մէջ, կը նշանակէ ընդունիլ պետութեան ամրացման շատ երկար գործընթաց՝ սերունդներու վրայ երկարող տասնամեակներու գործընթաց, ինչը ձախողութեան պիտի դատապարտէ ժողովրդավարութեան մեր փորձը: Համախոհութիւն եւ հակակշռուած անորոշութիւն կրնան առաջ գալ նաեւ իրարու հակադրուած եւ իրարու չվստահող գոր-

ծոններու միջեւ, իսկ քաղաքացիական մշակոյթի արմատացած բարիքները՝ հանդուրժողականութենէն մինչեւ իշխանութեան նկատմամբ վստահութիւն, դիտենք որպէս ոչ թէ ժողովրդավարութիւն արտադրող, այլ ժողովրդավարութեան արտադրանքը կամ արգասիքը:

Ո՞րն է տարբերությունը. որոշ դրոյթներ միտումնաւոր դուրս պահած եմ ժողովրդավարութեան մեր սահմանումէն, հակառակ անոր, որ այդ դրոյթները յաճախ կ՚առընչուին ժողովրդավարութեան թէ տեսաբանութեան եւ թէ պրակտիկային հետ: Անկասկած անոնք կարեւոր են ժողովրդավարութեան ենթատեսակներու զանազանման համար:

Որովհետեւ չկայ ժողովրդավարութիւն բնորոշող հատկանիշներու եւ արժէքներու ունիկալ մէկ ամբողջութիւն, պետութիւններ՝ որոնք կը հեռանան authoritarian rule-էն, կրնան տարբեր կէտեր, իմա՝ բաղադրամասեր խառնելով, առաջացնել տարբեր ձեւերի ժողովրդավարութիւններ: Անհրաժեշտ է անդրադառնալ, որ այս կէտերը ինքնակատարելագործումի չափանիշեր չեն, այլ միայն հնարաւոր կոմբինացիաներու մի ցուցակ, ժողովրդավարութեան տարբերակներ: Այսպէս՝

1) *Consensus-ի պարագային* ոչ բոլոր քաղաքացիները կրնան կամ կ՚ուզեն համաձայն գտնուիլ քաղաքական մի ուղղութեան կամ պետութեան դերակատարութեան շուրջ: Թէեւ հակառակը շատ պիտի դիւրացնէր ժողովրդավարութիւն կառավարելու գործը:

2) *Մասնակցութիւն.* ոչ բոլոր քաղաքացիները կարող են ակտիւորէն եւ հաւասար չափով մասնակցիլ քաղաքական կեանքին, թէեւ օրէնքը պիտի ապահովէ այդ իրաւունքը անկախ այդ հանգամանքէն:

3) *Հասանելիութիւն.* ղեկավարները կրնան նոյնքան հաւասար կշիռ չտալ հասարակութեան կողմէ ներկայացուած բոլոր նախասիրութիւններուն, թէեւ քաղաքացիութիւնը կ՚ենթադրէ, որ բոլոր անհատները եւ խմբաւորումները պիտի ունենան իրենց նախասիրութիւնները արտայայտելու հնարաւորութիւն:

4) *Արձագանք.* ղեկավարները կրնան ոչ միշտ հետեւիլ այն ուղղութեան, որ քաղաքացիներու նախընտրութիւնն է, սակայն երբ այդ գծից շեղին, անոնք պարտաւոր են հաշուետու ըլլալ իրենց արարքներուն համար, եւ այդ հաշուետուութիւնը կատարուի արդար եւ համապատասխան պրոցեսներու ճամբով:

5) *Մեծամասնութեան իշխանութիւն.* ոչ միշտ քաղաքական դիրքերու բաշխումները կամ օրէնքներու ձեւակերպումը տեղի կ՚ունենան միայն ձայներու մեծամասնութեան հիման վրայ, թէեւ այս սկզբունքէն շեղումները պէտք է որոշակի գործընթացներով նախապէս պաշտպանել եւ ապա վաւերացնել:

6) *Խորհրդարանական գերիշխանութիւն.* օրէնսդիր իշխանութիւնը միակը չէ, որ օրէնքներու հեղինակ է եւ կամ օրէնքէն բխող պարտաւորութիւնները ճշդորոշող միակ իրաւասու մարմինը: Եւ հոն, ուր գործադիր, դատական եւ կամ այլ հանրային մարմիններ այդ իրաւասութիւնը վերցնեն, իւրաքանչիւր հասատութիւն պարտաւոր է հաշուետու ըլլալ իր արարքներուն համար:

7) *Կուսակցութիւն-կառավարութիւն.* իշխողները ոչ անպայման կարող են նշանակուիլ եւ կամ պաշտօնի կոչ կազմակերպութիւն եւ ծրագրային ամուր հիմք ունեցող կուսակցութիւններու կողմէ, սակայն հոն, ուր այդ տեղի չունենար, այնտեղ անհնար է գործուն, ազդու կառավարութիւն ունենալ:

8) *Բազմակարծութիւն (Pluralism).* քաղաքական պրոցեսը կարող է հիմնուած չըլլայ բազմակարծութեան վրայ եւ կամ ինքնակամ ու ինքնավար խմբաւորումներու վրայ, սակայն այնտեղ, ուր գործում է մոնոպոլիան եւ խմբաւորման պարտադիր անդամակցութիւնը, այնտեղ շահեկան կողմերը ուղղակի կը կապակցուին պետութեան, ինչի հետեւանքով կը դադրի հանրայինի եւ սեփականի միջեւ սահմաններու անջատումը:

9) *Ֆեդերալիզմ.* տարածքային իշխանութեան բաժանումը կարող է ընդհանրապէս շերտաւորումներ չունենայ, նաեւ գոյութիւն չունենայ տեղական ինքնավարութիւն, եւ կամ այդ հարցը առհասարակ չնշուի սահմանադրութեան մէջ, սակայն բոլոր ժողովրդավարութիւնները կը յատկանշուին այս կամ այն չափով ուժերու բաշխումով եւ տերիտորիալ կամ ֆունկցիոնալ միաւորներու գոյութեամբ:

10) *Նախագահականութիւն.* երկրի գլխաւոր ղեկավարը կարող է ըլլայ մի մարդ, որ թերեւս ուղղակի չէ ընտրուած քաղաքացիներուն կողմէ, բայց իշխանութեան որոշ կեդրոնացում յատկանշական է բոլոր ժողովրդավարութիւններու, նոյնիսկ եթէ խօսքը կը վերաբերի հաւասական իշխանութեան, որ միայն անուղղակիօրէն հաշուետու է ընտրազանգուածին:

11) *Checks and Balances:* անհրաժեշտ չէ իշխանության տարբեր ճիւղերը սիստեմաթիք իրարու դէմ աշխատեցնել, իրարու հակադրել. թէեւ տարբեր կառավարութիւններ, ինչպիսի բնոյթ ալ ունենան՝ գերիշխան խորհրդարան, գերադաս կեդրոնաձիգ գործադիր մարմին կամ գերակայ դատական իշխանութիւն, վերջին հերթին բոլորն ալ հաշուեցու են քաղաքացիութեան առաջ:

Վերը նշուած կէտերէն իւրաքանչիւրը կը նկատուի ժողովրդավարութեան բաղադրամաս, իսկ այդ կէտերը միայն ցուցիչներ են այս կամ այն ձեւի ժողովրդավարութեան, ինչպէս նաեւ օգտակար սանդարներ՝ գնահատելու համար կառավարութիւններու/վարչակարգերու բնոյթը:

Սխալ պիտի ըլլայ այս կէտերը ներառել ժողովրդավարութեան ընդհանուր սահմանումին մէջ, պարզ այն պատճառով, որ այդ կէտերու ներառումը կը նշանակէ ժողովրդավարութեան ամերիկեան տարբերակը վերածել կառավարման ունիվերսալ մոդելի:

Արդարեւ՝ Եւրոպայի խորհրդարանական, ընկերվարական, միասարր, եւ կեդրոնաձիգ կառավարման դասաւորումները ունին իրենց իւրայատուկ առաքինութիւնները, որոնք կրնան օրինակ ծառայել Հայաստանի նման անորոշութեան դէմ պայքարող նոր ժողովրդավարութեան:

Ինչ չէ...
ժողովրդավարութիւնը

Փորձեցինք արդի ժողովրդավարութեան ընդհանուր իմաստը վեր առնել, առանց այն նոյնացնելու մասնաւոր կանոններու եւ հաստատութիւններու հետ կամ սահմանափակելու իւրայատուկ մի մշակոյթով կամ զարգացման մակարդակով:

Նաեւ ապացուցեցինք, որ ժողովրդավարութիւնը կարելի չէ պարզեցնել եւ նոյնացնել հերթական ընտրութիւններու կայացումի հետ եւ կամ հաւասարեցնել պետութեան դերակատարութեան ինչ որ մի հասկացողութեան հետ: Սակայն ոչ մի բան ըսուեցաւ այն մասին, թէ ժողովրդավարութիւնն *ինչ չէ,* առաւել եւս՝ թէ ժողովրդավարութիւնը *ինչ չի կրնար արտայայտել:* Ինչ որ չափով հասկանալի է, որ բոլորս կը մատնուինք ժողովրդավարութենէն շատ բաներ ակընկալելու փորձութեանը եւ կ'երեւակայենք թէ ժողովրդավարութեան իրագործումը պիտի լուծէ քաղաքական, ընկերային, տնտեսական, վարչական, մշակութային եւ շատ այլ հարցեր: Դժբախտաբար, իրականութիւնը այս չէ:

Նախ եւ առաջ ժողովրդավարութիւնները տնտեսական իմաստով ոչ անպայման աւելի էֆեկտիւ են, քան այլ ձեւի կառավարութիւններ:

Տնտեսական աճի, խնայողութեան, եւ ներդրումներու համեմատութիւնները ոչ անպայման աւելի բարձր են, քան ոչ ժողովրդավար պետութիւններէն ներս: Սա ճշմարտութիւն է յատկապէս անցումային շրջանին, երբ պետական-վարչական ընտրանին եւ ունեւոր դասը պատրաստ են հակադարձելու իրենց սեփականութիւններն ու մենաշնորհները պաշտպանելու համար *իսկական* կամ *երեւակայածին* սպառնալիքներու դիմաց:

Ժամանակի ընթացքին, ժողովրդավարութեան երկարաժամկէտ արդիւնքներն անպայմանօրէն դրական են. եկամուտի աւելի արդար բաշխում, կրթութեան բնագաւառի բարձրացում, արդիւնաբերութեան ու ստեղծագործութեան ոլորտներու զարգացում եւայլն: Այս բոլորի աճն ի վերջոյ միանալով կը բարելաւեն տնտեսութիւնն ու հասարակութեան կատարողութիւնը: Բայց անտեղի է ակնկալել, որ այս բոլորը իրագործուին անմիջապէս, եւ իրենց հետ մեքենաբար կարճ ժամանակամիջոցի մէջ բերեն ժողովրդավարութիւն:

Ժողովրդավարութիւնները վարչական իմաստով աւելի արդիւնաւէտ չեն: Բարեկարգումները կրնան ոչ միայն շատ աւելի դանդաղ ընթանալ անցեալին հետ բաղդատած, այլ անոնք նաեւ ծախսալից են, իսկ որոշում կայացնելու պրոցեսը բազմապատիկ աւելի բարդ: Աւելցնենք նաեւ, որ յաճախ ժողովրդային դժգոհութեան մակարդակը կը շարունակէ մնալ բարձր, որովհետեւ անհրաժեշտ փոփոխութիւնները, կոմպրոմիսները ոչ ոքի գոհունակութիւն չեն պատճառեր: Մանաւանդ եթէ յիշենք, որ կորսնցնողները ազաս են բողոքելու:

Հակառակ ակնկալութիւններուն, մարդկանց կը թուի որ ժողովրդավարութիւնը իր հետ չբերաւ յաւելեալ համախոհութիւն, օրինականութիւն, կայունութիւն եւ կառավարելի երկիր: Սա մասնակիօրէն արդիւնք է ժողովրդավարական կարգերու իւրայատուկ՝ արտայայտուելու ազատութեան իրաւունքին (բոլորը ազաս են բողոքելու), սակայն բողոքի ձայները նաեւ կ'արտացոլեն նոր օրէնքներու եւ նոր հաստատութիւններու շուրջ հասարակութենէն ներս համեցող տարակարծութիւններու ուրումը: Սկզբնական շրջանին

նաեւ մարդոց համար անորոշ են մէկ կողմէ կոմպրոմիսի եւ միւս կողմէ օրէնքի հարկադրանքի միջոցներու միջեւ տարբերութիւնները, մինչեւ որ դերակատարները սովորեն անոնց գործածութեան ձեւերը: Խմբաւորումներ եւ անհատներ պիտի ուզեն փորձել որոշ կանոններ, օրէնքներ շահագործել, տեսնել թէ ինչ չափով կրնան հաստատութիւններու դէմ բողոքել եւ պահանջել իրենց «բաժինը»: Համակարգի դէմ կուսակցութիւններու, խմբաւորումներու առկայութիւնը, ուրեմն, զարմանալի պիտի չըլլայ, ոչ ալ դիտուի իբրեւ ժողովրդավարութեան կայացման ձախողութիւն:

Կարեւորը այն է, որ այս խմբաւորումները տրամադի՞ր են (նոյնիսկ որոշ տարակուսանքով) խաղին մասնակցելու՝ ժողովրդավարութեան բնորոշ սահմանափակ անորոշութեան եւ պայմանական համախոհութեան սկզբունքները յարգելով:

Կառավարելիութեան խնդիրը մարտահրաւէր է ոչ միայն ժողովրդավար, այլ բոլոր վարչակարգերու համար: Փորձառութիւնը ցոյց կուտայ, որ ժողովրդավարութիւնները եւս կրնան կորսնցնել կառավարելու իրենց կարողութիւնը: Զանգուածները կրնան յուսախաբ ըլլալ անբաւարար արդիւնքով, բայց շատ աւելի վտանգաւոր է *գործընթացները* աղաւաղելու ղեկավարներու փորձութիւնը, որ ի վերջոյ, կը քայքայէ պայմանական համախոհութեան եւ սահմանափակ անորոշութեան սկզբունքները:

Հաւանաբար, ամէնէն ճգնաժամային պահը կուգայ, երբ քաղաքական գործիչները կը սկսին հարմարուիլ կայացած ժողովրդավարութեան դերերուն եւ յարաբերութիւններուն: Շատերը իրենց ակնկալութիւնները կը տեսնեն խորտակուած, ուրիշներ կ՚անդրադառնան, որ մրցակցութեան նոր կանոնները նպաստաւոր չեն իրենց սեփական շահերի համար: Եւ դեռ ուրիշներ, նոյնիսկ, մեծամասնութեան մէջ կը տեսնեն ուղղակի սպառնալիք:

Վերջապէս, ժողովրդավարութիւնները թէեւ պիտի ունենան բաց հասարակութիւն, բայց ոչ անպայման բաց տնտեսութիւններ: Յաջողած եւ կայացած շատ մը ժողովրդավարութիւններ պատմականօրէն ունեցած են փակ սահմաններ եւ վարած protectionism-ի քաղաքականութիւն: Երկրի տնտեսութեան զարգացումը ապահովելու համար անոնք լայնօրէն օգտագործած են հանրային հաստատութիւնները:

Այստեղ պատշաճ չէ հարցականի տակ առնել ժողովրդավարութեան եւ դրամատիրութեան միջեւ երկարակեաց համատեղելիութեան կարեւոր խնդիրը: Բայց կասկածելի է, որ ազատական տնտեսութեան նպատակներու քաջալերումը, ինչպիսին են անհատի սեփականութեան եւ շահ ապահովելու իրաւունքը, շուկաներու վերապահուած անվիճելի դերակատարութիւնը, քաղաքականութեան եւ բիզնեսի միջեւ վէճերու թաքուն լուծումները, կառավարական կանոնավորման բացակայութեան պայմաններուն ազատ արտադրութեան իրաւունքը, հանրային հաստատութիւններու սեփականաշնորհումը, կարող են յանգիլ ժողովրդավարութեան կայացման:

Ժողովրդավարութիւնները եւս կարիք ունին հարկ հաւաքելու, որոշ գործողութիւններ կանոնագրելու: Յատկապէս՝ երբ մեր հասարակութիւնը հագեցուած է մոնոպոլիայով եւ oligopolies-ներով:

Քաղաքացիներն ու իրենց ներկայացուցիչները կրնան պատշաճ նկատել հաւասարակշռութեան իրաւունքները՝ պաշտպանուելու անհատներու ոտնձգութիւններէն, եւ որոշ սեփականութիւններ կարող են մնալ հանրային:

Կարճ ասած, տնտեսական ազատութեան միտքը, որ առաջ կը մղուի մեր երկրի համար, հոմանիշ չէ քաղաքական ազատութեան, առաւել եւս՝ այդ միտումները կրնան խափանել ժողովրդավարութեան գործընթացը: Ժողովրդավարութիւնը անպայման իր հետ չի բերեր տնտեսական աճ, ընկերային խաղաղութիւն, վարչական արդիւնաւէտութիւն, քաղաքական ներդաշնակութիւն, ազատ շուկաներ, եւայլն: Ժողովրդավարութիւնը, մանաւանդ, չի նշանակեր գաղափարախօսութեան անխուսափելի աւարտ:

Յուսալով, որ Հայաստանը կ՚ունենայ քաղաքական այնպիսի հաստատութիւններ, որոնք խաղաղ մրցակցութեան պայմաններուն մէջ կրնան ազդել կառավարութեան քաղաքականութեան վրայ, կարենան ուղղորդել ընկերային եւ տնտեսական հակամարտութիւնները, ունենան իսկական ներկայացուցչական բնոյթ բնակչութեան բոլոր խաւերու ձայնը լսելի դարձնելով, եւ վերջապէս, հաստատութիւններ, որոնք վճռական են հաւասարակշռութեան պահանջքներուն ընթացք տալու: Մեր երկիրը ցարդ չէ յաջողած այս խոսնումները իրագործելու: Մենք ունինք հնարաւորութիւն՝ հաստատութիւններ եւ կանոններ վերափոխելու, յարմարեցնելու նոր պայմաններուն, մեր պայմաններուն:



ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐՅԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետությունում
Սերբիայի Հանրապետության Պատվո հյուպատոս

...Բելգրադ, Դալմատինսկա 78: Փայտե հնամաշ մի ցանկապատ, դրանից ներս՝ մի փոքրիկ բակ ու կղմինդրե տանիքով մեկ հարկանի կառույց...

1930-40-ական թվականներ... Երանելի ժամանակներ էին բելգրադահայերի համար: Նրանք սեփական միջոցներով գնել էին այդ տունը և հայապահպան ու բարեգործական նպատակներով հավաքվում էին այնտեղ, պատմում միմյանց Հայաստանի ու հայրենակիցների մասին, երբեք սակայն չխզելով կապը մայր երկրի հետ:

«Հայկական տուն» էին կոչել այդ շինությունը, ուր հնչում էին ժողովրդական ու գուսանական երգեր, անմահ Կոմիտասի շարականները, ուր գրել ու կարդալ էր սովորեցնում Հունաստանի Սալոնիկ քաղաքից Բելգրադում հաստատված նուրբ ու համակրելի Նոյեմի Մանաշյանը, ուր Հայոց պատմություն էր դասավանդում Ասատուր Մկրտչյանը: Նույնիսկ մի փոքրիկ երգչախումբ ուներ «Հայկական տունը», որ ղեկավարում էր երաժշտության քաջ գիտակ Գրիգոր Մորջիկյանը: Այստեղ էին հանդիպում միմյանց բելգրադահայեր Հարություն Բաղդասարյանը, Տիրան Սուքիասյանը, Վահան Տոտոմյանցը, Վահան Մինախորյանը, Վարդան և Մարի Բարոնյանները, Սեֆերյանները, Դավթյանները, Օսկանյանները, Աստվածատրյանները... Հավաքվում ու մտորում էին իրենց տարաբախտ ու աշխարհասփյուռ ազգի, կորցրած հայրենիքի մասին:

Բելգրադի Դալմատինսկա փողոցում գտնվող այդ տունն, ավա՜ղ, արդեն չկա: Բելգրադահայերի հիշողության մեջ նրա անունն է մնացել միայն: Արդեն 1950-60-ական թվականներին հայապահպան այդ փոքրիկ օջախը մարեց ու կորցրեց իր երբեմնի նշանակությունը, քանի որ բելգրադահայ գաղութը տարիների ընթացքում տկարացավ ու տարրալուծվեց, տեղի հայերից շատերը սփռվեցին աշխարհով, իհարկե, եղան նաև այնպիսիք, ովքեր կարոտից բռնեցին հայրենադարձության ճամփաները և հանգրվանեցին մայր հայրենիքում...

Բելգրադահայ գաղութի վերջին շառավիղները

Սերբահայերի մասին այս փոքրիկ պատմությանը ծանոթ էի, բայց 1988 թվականին բելգրադահայ Մարի Բարոնյանից ուրիշ մանրամասներ էլ իմացա: Ավա՜ղ, արդեն հանգուցյալ, տիկին Մարին մի ողջ կյանք ապրել էր Սերբիայում ու լավ ծանոթ էր տեղի փոքրաթիվ հայ գաղութի անցուդարձին: Ակնից էր՝ Սուրմեյան գերդաստանից: Տեսել էր հարյուրավոր գաղթական հայ ընտանիքներ: 1922-ին ամուսնու՝ Վարդան Բարոնյանի հետ ինքն էլ գաղթել էր Արևմտյան Հայաստանից ու բնակություն հաստատել Սերբիայում: Ծանոթ էր շատ հայ ընտանիքների, որոնք եղեռնից փրկված նոր հանգրվան էին գտել Բելգրադում, Վալևոյում, Վրնյաչկա Բանյայում, Նիշում, Կնյաժևացում, Սկոպլեում, Սերբիայի ու Մակեդոնիայի այլ քաղաքներում:

- Հոս, Բելգրադին մեջ, շատ հայտնի մարդ մը կապրեր՝ Սողոմոն Թեհլիրյան անունով, որ 1921-ին Թալեաթ փաշային զարնած է,- բարեհունչ արևմտահայերենով պատմում էր տարեց հայուհին,- լսա՞ծ եք անոր մասին:

- Ո՞ր հային ծանոթ չէ այդ անունը,- պատասխանում եմ,- Երևանում նրա մասին շատ է գրվել:

- Թեհլիրյան կապրեր Դալմատինսկա փողոցում, ուր կգտնվեր «Հայկական տունը»,- շարունակում է Մարի Բարոնյանը,- այնպես որ այդ փողոցը հայերուս համար կարևոր նշանակություն ունեցած է: Սողոմոնի տղաքն ալ Սերբիա ծնած են: Մեծը՝ Շահենը Բելգրադ կապրի, կուզե՞ք տեսնվիլ:

Մարի Բարոնյանի պատմածներից դեռ շատ առաջ Սողոմոն Թեհլիրյանի մասին հետաքրքիր ու արժեքավոր պատմություններ եմ լսել նաև բելգրադաբնակ հայազգի ճանաչված աստղագետ Վահե Օսկանյանից, որը Բելգրադի «Զվեզդարա» աստղադիտարանի տնօրենն էր, հրաշալի մտավորական ու գիտնական: Վահեի հայրը՝ Սամվելը, Սողոմոն Թեհլիրյանի ազգականներից էր: Օսկանյանների ընտանիքը 1966-ին թողնելով Բելգրադը հայրենադարձվեց և բնակություն հաստատեց Երևանում: Արդեն չկա այդ հրաշալի ու լուսավոր մարդը՝ աստղագետ Վահե Օսկանյանը, բայց նրա պատմությունները Թեհլիրյանի մասին այսօր էլ, ինչպես երեք տասնամյակ առաջ, թրթռում են ականջիս...

Տիկին Մարիի հետ քայլում եմ Բելգրադի հին թաղամասերով ու փողոցներով, որոնց մայթերը մինչ օրս էլ կրում են Թեհլիրյանի ոտնահետքերը: Նա ցույց է տալիս այն շենքը, ուր պիտի կայանար հանդիպումն ու զրույցը Սողոմոնի որդու՝ Շահենի հետ: Փորձում էի պատկերացնել, թե ինչպիսին է լինելու հանդիպումը և կամ ինչ է պահպանել որդու հիշողությունը հոր մասին:

Շահենի տանն եմ: Խոսում ենք մերթ հայերեն ու մերթ սերբերեն: Թեև զրույցի ընթացքում երբեմն դժվարությամբ է մտաբերում հայերեն այս կամ այն բառը, բայց հիմնականում մաքուր հայերենով կարողանում է շարադրել իր մտքերը: Այն ամենը, ինչ գիտի ու հիշում է, պարտական է նախ մորը՝ թիֆլիսահայ Անահիտ Թաքիկյան-Թեհլիրյանին, և ապա՝ հունահայ Նոյեմի Մանաշյանին, որը «Հայկական տանը» մեսրոպատառ հայերենով վառ է պահել բելգրադահայ գաղութի կյանքը և որին Շահենը հարգանքով ու երախտագիտությամբ է հիշում:

Ընտանեկան լուսանկարները, նամակները, հուշերը և մասունք դարձած որոշ ձեռագրեր տանում են մեզ հեռու՝ Արևմտյան Հայաստանի Ներքին Բագառիճ գյուղը, ուր 1896 թվականի ապրիլի 2-ին ծնվել է նրա հայրը՝ Սողոմոն Թեհլիրյանը: Այստեղ, բելգրադյան այս տանը, հավերժ ապրում է հայազգի մեծ վրիժառուի հիշատակը, նրա ոգին ու շունչը: Ալբոմի լուսանկարները տասնամյակների ընթացքում խունացել ու մաշվել են: Ալբոմից զատ Շահենը լուսանկարներով լի մի նոր ծրար

Սողոմոնի որդին՝ Շահենը Բաբկեն Սիմոնյանի հետ
Բելգրադ,Նոյեմբեր,2006 թ.



Սողոմոնի որդիները՝ Շահենը և Զավենը Վահե Օսկանյանի հետ
Բելգրադ,Նոյեմբեր, 1940-ականներ

է բերում, պատմում, որ այդ լուսանկարներն արել է հորեղբորորդին՝ ամերիկաբնակ Վազգեն Թեիլիրյանը, որը 1987 թվականին եղել է Արևմտյան Հայաստանում, շրջել հայրենի վայրերում ու իր սուրբ պարտքը կատարել՝ այցելել նաև նախնյաց ծննդավայրը՝ Ներքին Բագառիճ, ուր ժամանակին գործել է Հայկազյան վարժարանը, իսկ տեղի Սուրբ Հակոբ եկեղեցու կամարների տակ հնչում էին հայոց հոգևոր մեղեդիներ: Մարդիկ ուխտի էին գնում, մոմեր վառում ու լուռ աղոթք մրմնջում...

...Հայաստան աշխարհից մասունքներ մնացած լուսանկարնե՞ր: Մասունքներ կորուսյա՞լ, բայց սուրբ ու պաշտելի՞ երկրից...

Ահա Պոլսի Հայոց պատրիարքարանը, Բաղեշի հայկական թաղամասերը, եկեղեցիները, հին ու նեղլիկ



Սողոմոնի Թեյլիրյանի ծննդավայրը՝ Ներքին Բագառիճը
(1987 թվականի լուսանկար)

փողոցները, բակերն ու պատշգամբները: Ահա և ավերակ Բագառիճը՝ ամայի, գուցեև անմարդաբնակ: Եկեղեցիները՝ քարուքանդ, որոնցում արդեն քանի՞ տասնամյակ լռել են զանգերի ղողանջները, հայոց հինավուրց երգերը...

Ցեղասպանությանը՝ դեմ առ դեմ

...1884 թվականին Սողոմոնի հայրը՝ Խաչատուրը թողնում է Բագառիճն ու եղբոր հետ գնում Սերբիա, ուր մի քանի անգամ արդեն եղել էր և մտերիմներ ուներ: Այնտեղ նա առևտրական գործունեություն էր սկսել, զբաղվում էր սրճավաճառությամբ: 1905-ին նա կրկին վերադառնում է Երզնկա ու այնտեղ մնում մինչև 1914 թվականը: Սողոմոնը հաճախում է Երզնկայի բողոքականների, իսկ 1911-ից՝ Պոլսի Կեդրոնական վարժարանները: Բալկանյան պատերազմը նոր էր սկսվել, շատ ուսուցիչներ մեկնել էին ռազմաճակատ, այդ իսկ պատճառով առաջին դասարանի դասավարությունը վստահում են Սողոմոնին, սակայն 1913-ին նա հեռանում է Երզնկայից ու մեկնում Սերբիա, որտեղից մտադրվել էր մեկնել Գերմանիա՝ ուսումը շարունակելու: 1914-ին Սողոմոնի հայրը և ավագ եղբայրը՝ Սեդրակը հեռանում են Երզնկայից ու կրկին գնում Սերբիա, մշտական բնակություն հաստատում Վալևոյում:

Գերմանիայում Սողոմոնի սովորելու երազանքն այդպես էլ չի իրականանում: Սարաևոյում Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը առիթ է դառնում առաջին աշխարհամարտի, ապա վրա է հասնում արյունոտ 1915 թվականը:

1914-ի վերջերին Սողոմոնը գնում է Թիֆլիս, ուր տեղեկանում է, որ այնտեղ են գտնվում երզնկացի Թաթիկյան հայրենակիցները: Այցելում է նրանց ու այնտեղ էլ մտերմանում ապագա կնոջ՝ Անահիտի հետ: Թիֆլիսում նա անդամագրվում է Անդրանիկի բանակին, որի կազմում կռվում է մինչև 1918 թվականը:

Երիտթուրքական նորաթուխ կառավարությունը Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի գլխավորությամբ 1915-ի ապրիլին արդեն սկսել էր իրականացնել հայերի տեղահանությունն ու աքսորը: Թուրքական կառավարության կարգադրությամբ գազանաբար սպանվեցին ոչ միայն արևմտահայության հոծ զանգվածներ, այլև օսմանյան բանակի բոլոր հայ զինվորականները: Ռուսական հե-

տախուզությունը 1915 թվականի մարտի 15-ին և ապրիլի 3-ին Թուրքիայի վերաբերյալ հաղորդում է. «Ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ, պարբերական կոտորածներ Էրզրումում, Զեյթունում ու շրջակայքում: Արյունալի ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություններ, թալան, սպանություններ՝ Ակնում և ամբողջ Փոքր Ասիայում: Ժողովրդի տնտեսական քայքայում, ընդհանուր կոտորածներ»:

Ցեղասպանության քաղաքականության ալիքը հետզհետե ընդգրկեց Օսմանյան կայսրության հայաբնակ բոլոր վայրերը: Թե տեղում և թե բռնության ճամփաներին՝ Միջագետքի անապատներում, Դեր-Զորում, որը դարձավ 200 հազար անմեղ հայ զոհերի գերեզմանը, թե Տիգրիսի ու Եփրատի ափերին, հարյուր հազարավոր հայեր խոշտանգվեցին, վայրագաբար մորթվեցին ու կախաղան հանվեցին: Տասնյակ հազարավոր երեխաներ որբացան գաղթի ճամփեքին: Պապենական հողերը թողած շուրջ մեկ միլիոն մարդ դատապարտված էր բնաջնջման:

Ավերակ էր նաև Բագառիճը, ուր ապրում էին Թեհլիրյան գերդաստանի ավելի քան 85 անդամները: Օրը հունիսի 10-ն էր: Հալածված ու լացակումած երզնկացիները ստիպված թողնում էին իրենց պապենական տները: Թեհլիրյաններն էլ մի սայլի վրա տեղավորում են եղածչեղածը ու ճամփա ընկնում անհայտ ուղղությամբ: Նրանք նոր էին հեռացել Երզնկայից, երբ թուրք ոստիկանները հարձակվեցին այդ մեծ գերդաստանի վրա: Ամեն ինչ տեղի ունեցավ Սողոմոնի աչքի առջև: Գնդակահարվում ու մորթվում էին երզնկացիները, հարազատները: Նրա աչքի առջև կացնով ջարդում են եղբոր՝ Ավետիսի գլուխը, գնդակահարում մորը, բռնաբարում քրոջը... Ինքն էլ գլխից վիրավորված ընկնում է գետնին: Գիտակցությունը կորցրած 1-2 օր նա մնում է ընկած, բայց երբ ուշքի է գալիս՝ տեսնում է շուրջբոլորը սպանված հարազատներին ու հայրենակիցներին: Նրանց մեջ գտնում է գնդակահարված մորը, կացնահարված եղբորը, իսկ քրոջ հետքն այդպես էլ չի գտնում: Ուժասպառ Սողոմոնը մի կերպ վեր է կենում ու նկատում, որ վիրավոր սրունքից արյուն է գալիս: Հարազատներին կորցնելուց հետո նա հեռանում է Երզնկայից: Մի քանի ամիս թափառելուց հետո հասնում է Պարսից աշխարհ, այնտեղից՝ Թիֆլիս: Տեղի հայկական եկեղեցում նրան հագուստ և ուտելիք են տալիս: Որոշ ժամանակ նա մնում է Թիֆլիսում, բայց տեղեկանալով, որ ռուսները 1916-ին գրավել են Երզնկան, որոշում է կրկին տուն վերադառնալ: Գալիս է Երզնկա, այցելում տեղի վարժարանը, ուր ուսում էր առել: Վարժարանն ավերված էր ու վերածվել էր որբանոց-հիվանդանոցի: Որբերի մեջ նա երկար փնտրեց հարազատներին, բայց ոչ ոքի չգտավ: Ողջ Երզնկայից ընդամենը 2-3 հայ ընտանիք էր մնացել: Սողոմոնը երկար շրջեց ավերակ քաղաքի փլատակներում, այցելեց հայրական տունը, ուր ամեն ինչ կործանված էր, թալանված ու այրված:

Հատված Թեհլիրյանի հուշերից. «Հանրակացարան էր դարձել մեր տունը, բայց ներսը մարդ չկար: Թիկունքում շենքի մի մասը քանդված էր: Վերևի հարկում, ցախատունը, մառանը, խոտի, ալյուրի, մրգի բաժինները, ինչպես նաև թոնրատունն ու խոհանոցը լցված էին անծանոթ իրերով: Չորս սենյակները բռնված էին զինվորի աղքատիկ անկողիններով: Մեր տունը պատմական հիշատակարանի բնույթ էր ստացել: Իմ փոքրիկ ննջասենյակից հայտնվեց մի զինվոր, չհասկացա ինչ ասաց: Կոկորդս սեղմվում էր, հազիվ էի զսպում արցունքներս: Իջա ներքև ու դուրս եկա: Բնակարանը երիզող բոլոր ծառերը հին ու հավատարիմ բարեկամների պես շարքով կանգնած ինձ էին նայում: Այստեղ այլևս կյանք չկար: Երազի պես չքացել էին մանկության բոլոր հուշերը: Միայն պարտեզի խորքում անվթար մի անկյուն էր մնացել, ուր մանուկ օրերին եղբայրս՝ Ավետիսը նստում ու շարականներ էր երգում: Սարսուռը ցնցեց ինձ, զարհուրանքով ետ նետվեցի ու ընկա: Երբ ուշքի եկա՝ թանձր մթնշաղ էր: Դողահար դուրս եկա պարտեզից: Գլխիս մեջ քաոս էր, ուր էի գնում, չգիտեի, ջերմի պես մի դող մերթ ընդ մերթ ցնցում էր ինձ:

Թառիկյանների բակում նկատեցի մեկին: Ի՞նչ էր՝ ցնորք, թե իրականություն: Շատ նման էր եղբորս՝ Միսաքին: Այնպիսի մի անակնկալ էր, որ հազիվ վստահություն ունեցա ձայն տալ: Նա էր, Միսաք եղբայրս: Սերբիայից իմ հեռանալուց մեկ տարի անց նա կարողացել էր դուրս գալ այդ երկրից, Ռումինիայով անցնել Կովկաս: Մենք, երկու եղբայր, իրար հանդիպեցինք Քանաքեռում՝ 1915-ի նահանջից հետո՝ Անդրանիկի բանակում»:

1918-ի մարտերից մեկում Սողոմոնը վիրավորվում է ու տեղափոխվում Թիֆլիս, մի քանի ամիս մնում այնտեղ: Հետո տեղի Ներսիսյան դպրոցում սկսում է ռուսե-

րեն սովորել: Երկու տարի նա անց է կացնում Թիֆլիսում, միաժամանակ ծառայում մասնավոր մի տանը, բայց ուշի-ուշով հետևում Թուրքիայում կատարվող իրադարձություններին: 1919-ին հատուկ հանձնարարությամբ նա մեկնում է Պոլիս՝ Թալեաթի հետքերով: Չի գտնում: Ու նորից սկսվում է թափառական կյանք՝ Սալոնիկ, Սերբիա, Փարիզ, ապա՝ Ժնև ու Բեռլին...

Նա հաճախ, մտաբերելով հարազատների սահմռկեցուցիչ սպանությունները, ցնցվում էր խենթության աստիճանի: Եվ եթե նույնիսկ փայփայում էր ազգականներին գտնելու երբեմնի հույսը, դա էլ էր մարել նրա մեջ: Միակ հույսը Թալեաթին գտնելն էր: Միայն նրա մահը կարող էր փոքրիշատե մեղմել ու ամոքել Սողոմոնի ապրած խոր կսկիծը: Այդ մղձավանջը հանգիստ չէր տալիս նրան: Ամեն գիշեր իրար էին հաջորդում ցավատանջ երազները, ու նա հաճախ էր տեսնում մորը, որը հորդորում էր որդուն երբեք չընկրկել ոճրագործին սպանելու գաղափարից:

...Այն հեռավոր 1921-ին

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո, 1919-ի հունիսին Պոլսում հանցագործներ էին ճանաչվել եղեռնի բոլոր կազմակերպիչները, իսկ Թալեաթն ու Էնվերը թուրք դիվանագետների խոստովանությամբ դատապարտվել էին մահվան:

Դեռ 1918-ին թողնելով Պոլիսը, Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը փախչում են Գերմանիա՝ փրկելու իրենց կյանքը՝ կարծելով, թե անհայտ ու անծանոթ պիտի մնան: Էնվերն առաջարկում է Թալեաթին հեռանալ Գերմանիայից ու փոխադրվել այլ երկիր: Կարևորություն չտալով այդ առաջարկին, Թալեաթը որոշում է մնալ Բեռլինում՝ փայփայելով մի օր Թուրքիա վերադառնալու հույսը: Էնվերն ու Ջեմալը հեռանում են Բեռլինից ու ժամանակավորապես փրկում իրենց կյանքը:

Ուրիշի անվան տակ, կեղծ փաստաթղթերով Թալեաթն ապաստան էր գտել բարեկամ ու դաշնակից Գերմանիայում՝ հույս ունենալով, որ անհայտ պիտի մնա: Թալեաթը լրիվ կերպարանափոխվել էր, ֆեսի փոխարեն գլխարկ էր կրում, թուրքական տարազի փոխարեն՝ եվրոպական հագուստ:

1920 թվականին Փարիզում Թալեաթին գտնելու Սողոմոնի փորձերն անարդյունք էին: Նա թողնում է Փարիզը ու նոյեմբերին գնում Ժնև, իսկ մեկ ամիս հետո՝ Բեռլին: Տարբեր աղբյուրներից իմացել էր, որ Թալեաթը գտնվում է Բեռլինում: Մի բան էր մնում ճշտել՝ նրա հասցեն:

Օրերն անցնում էին: 1921-ի փետրվարին Սողոմոնը տեղեկանում է, որ շուտով պետք է հավաքվեն իթթիհատական առաջնորդները իրենց հերթական խորհրդակցությանը: Նա ամեն կերպ ձգտում էր ճշտել այդ լուրը, որովհետև համոզված էր, որ Թալեաթն այդ առիթով անպայման կհայտնվի Բեռլինում: Մի քանի մտերիմների հետ նա պարբերաբար հսկում էր Շառլոտենբուրգից Բեռլին մեկնող գնացքները՝ ենթադրելով, որ հենց այդ կայարանից են մեկնելու Բեռլինի պատգամավորները, որովհետև իթթիհատական կազմակերպության հավաքատեղին գտնվում էր Շառլոտենբուրգում: Եվ ահա, գնացքի մեկնելուց ընդամենը մի քանի րոպե առաջ, հայտնվեց հաղթանդամ, կլոր ու փքուն դեմքով մի մարդ: Սողոմոնն անակնկալից ցնցվեց: «Տեր իմ, ի՜նչ նման է Թալեաթին, պակասում են միայն ֆեսն ու բեղերը: Նա է, նա»: Վայրկենապես սարսուռ անցավ մարմնով: Նա ոչ մի ակնթարթ աչք չէր կտրում «ենթադրյալ Թալեաթից», հայացքը սևեռել էր նրան, փորձում էր մտաբերել մոտի լուսանկարը և ընդհանուր նմանություններ գտնել: Սողոմոնը նկատեց, թե ինչպես «կասկածելին» մոտեցավ վագոնին, ձեռնափայտով ծեծեց լուսամուտը, որի մոտ վայրկենապես հայտնված ոմն անձնավորությանը դիմեց հետևյալ խոսքերով. «Հայկականը չմոռանաք»:

Գնացքը մեկնեց ու «ենթադրյալ Թալեաթը» իրեն շրջապատողների հետ դուրս եկավ կայարանից: Այս ու այն փողոցով իջնում էին նրանք: Մի փոքր դադար տալուց հետո կրկին շարժվեցին ու մտան Հարդենբերգ փողոցի թիվ 4 տունը: Սողոմոնը մի քանի օր անընդհատ հետևում էր այդ տունը ներսուդուրս անողներին ու հաճախ տեսնում «ենթադրյալ Թալեաթին»: Արդեն ոչ մի կասկած չկար, մնում էր իրականացնել մտադրությունը, բայց ինչպե՞ս:

Օրը կիրակի էր, մարտի 2-ը: Իրիկնադեմին Սողոմոնը խորասուզված էր մտքերի մեջ, երբ հևիհև ներս ընկավ ընկերներից մեկը՝ ձեռներեց ու աչքաբաց մի երիտասարդ, որին նա ծանոթ էր Բեռլինի համալսարանից:

- Կարող եմ ողջունել քեզ, Սողոմոն, Հարդենբերգ

փողոցի թիվ 37 տանը 2-3 օրից մի բնակարան է ազատվելու, որն ուղիղ նայում է թիվ 4 տանը:

Սողոմոնն սթափվեց, աչքերն ուրախությունից փայլեցին: Նա վեր թռավ տեղից, գիրկն առավ ընկերոջը, ապա ընկավ մտքերի մեջ: Երկու օր անց փոխադրվեց Հարդենբերգ փողոցի թիվ 37 տան առաջին հարկում գտնվող բնակարանը՝ այրի Դիտմանի մոտ: Արդեն նա կարող էր հետևել Թալեաթի յուրաքանչյուր քայլին: Մոտեցել էր որոշակի գործելու պահը:

Մարտի 15-ի առավոտյան նա սովորականից շուտ ելավ: Արևն ընկել էր դիմացի շենքի լուսամուտին: Նա ուզում էր մոտենալ պատուհանին, երբ հանկարծ դիմացի պատշգամբում հայտնվեց Թալեաթը: Սողոմոնը ասես շանթահարվեց, ուշադիր նայեց նրան, սկզբում անհավատալի թվաց: Թալեաթը մի երկու քայլ առաջ անցավ, դեսուդեն նայելով զննեց փողոցը ու կարծես մտքերի ծանրությունից գլուխը կախեց: Գուցե զգում էր, որ այնքան էլ հեշտ չէ կյանքը իր կազմակերպած ցեղասպանությունից հետո: Հայոց մեծ եղեռնից տարիներ էին անցել, բայց վախը նրան հանգիստ չէր տալիս: Նա, կարծես, տեղյակ էր Հայ Յեղափոխական Դաշնակցության վճռի մասին: Թալեաթը ջանացել էր գլխատել նաև այդ կուսակցության ղեկավարներին, ովքեր հետո պիտի վրեժ առնեին այդ մարդակեր թուրքից ու նրա համախոհներից:

Սողոմոնը ուշի-ուշով հետևում էր նրա ամեն քայլին ու շարժումին: Քիչ հետո մուտքի մոտ երևաց Թալեաթն ու շարժվեց Հարդենբերգ փողոցի ուղղությամբ: Զինված Սողոմոնը վայրկենապես նետվեց փողոց, հանդարտ ու մանրաքայլ շարժվեց դեպի Թալեաթը: Նա վայրկյան առ վայրկյան սպասում էր, թե երբ է գալու թուրք մարդակերին սպանելու երազած ու երանելի պահը: Նա մերթ հետևում էր ոճրագործին, մերթ հիշում խոշտանգված հարազատներին:

Սողոմոնը մայթից իջնում է փողոց, անցնում դիմացի մայթը, հավասարվում նրան: Հետո արագ քայլերով բավականին առաջ է գնում, անցնում դեպի նույն մայթը, որով քայլում էր Թալեաթը: Սողոմոնը շեշտակի ետ է շրջվում մարդասպանին երես առ երես: Վերջապես եկել էր բաղձալի պահը: Դեմ առ դեմ էին դուրս եկել թուրք ոճրագործն ու հայազգի վրիժառուն: Սողոմոնը երկար էր սպասել այդ հանդիպմանը ու գիտեր, որ քիչ հետո պիտի կատարի իր սուրբ առաքելությունը:

Թալեաթ փաշա

Սողոմոն Թեհլիրյան, 1920թ., Փարիզ

- Թալեաթ...- բացականչեց Սողոմոնը:

Թալեաթը շրջեց գլուխը, նայեց Սողոմոնին ու աչքերի մեջ մեկեն առկայծեց մահվան սարսուռը: Նա մի քայլ առաջ գնաց, թեքվեց, որ խուսափի, բայց իզուր... ատրճանակից դուրս պրծած գնդակը փշրեց ոճրագոր-

ծի գլուխը: Հարվածից նա վայրկենապես տապալվեց գետնին, իսկ մայթին լճանում էր սև, թանձր արյունը...

Սողոմոնը արգելակվեց, ձեռքից վայր գցեց ատրճանակը: Նա հանգիստ էր, փոթորկուն հոգին հանդարտվել էր: Կրկին մտաբերում էր հարազատներին ու ասես մենախոսում Թալեաթի դիակի առջև. «Այժմ, սիրելի մայր, ես՝ Սողոմոն որդիդ, կարող եմ հանգիստ լինել, քանզի կատարել եմ պատվիրանդ, փշրել ոճրագործի գլուխը, վրեժ լուծել հարազատներիս ու հայրենակիցներիս փոխարեն»: Սողոմոնին համակել էր հոգեկան բավարարվածության այնպիսի մի զգացում, որ նա երբեք չէր ապրել: Ծանր մղձավանջը չքացել էր, հանգիստ ու թեթևացած էր զգում, թեև գիտեր, որ այդ ամենին հաջորդելու է դատարանը:

Պատժեք, եթե մեղավոր եմ

Հատված Բեռլինի դատարանի գաղտնի խորհրդական Շուլցի հարցաքննությունից (թարգման՝ Գևորգ Գալուստյան):

- Ուրեմն Պարսկաստանի՞ց եք:

- Ո՛չ, պարսկահպատակ չեմ,- ասացի, երբ հասավ այդ կետին:

- Երեկ այդպես եք հայտարարել,- զարմացած ինձ նայեց քննիչը:

- Այո՛, եկել եմ Բեռլին պարսկական անցագրով, բայց թուրքահպատակ եմ, Երզնկայի Բագառիճ գյուղից:

- Ինչո՞ւ այդ կեղծիքին դիմեցիք:

- Կեղծիք չէ, այլ՝ անհրաժեշտություն: Ջարդերից հետո ոչ մի հայ չի կարող թուրքական անցագիր ստանալ:

- Ո՞ւր եք ուսանել:

- Երզնկայի ազգային վարժարանում:

- Այդ դպրոցի վկայականը բավակա՞ն էր այստեղ համալսարան ընդունվելու համար:

- Ո՛չ, ուզում էի ազատ ունկնդիր լինել:

- Գերմաներեն գիտե՞ք:

- Այո՛, որքան կարելի է սովորել երեք ամսվա ընթացքում:

- Գիտե՞ք, թե ով է Ալի Սալիհ Բեյը, որին սպանել եք երեկ՝ Հարդենբերգ փողոցի թիվ 17 տան մայթի վրա:



Դատավարություն, Բեռլին, հունիսի3,1921 թ.

- Այո՛, Թալեաթ փաշան:

- Ի՞նչը ձեզ հարկադրեց գործելու այդ ոճիրը:

- Ոճրագործը ես չեմ, այլ՝ Թալեաթը: Նա բնաջնջեց մեր ժողովրդին, ես կարող եմ ձեզ պարզել նրա գործած սարսափները՝ Պոլսից մինչև Դեր-Զոր:

- Ովքե՞ր ձեզ օգնեցին սպանելու Թալեաթ փաշային:

- Ո՛չ ոք:

- Ո՞ր կազմակերպության հրահանգով կատարեցիք այդ գործը:

- Անձնապե՛ս:

- Անձնական ի՞նչ հաշիվ ունեիք Թալեաթ փաշայի հետ:

- Շա՜տ մեծ: Նրա հրամանով էր, որ բոլոր հայերի հետ միասին սպանվեցին մայրս, եղբայրս, ազգականներս: Այդ օրից ի վեր ես ապրել եմ միայն Թալեաթից վրեժ լուծելու հույսով:

- Երբվանի՞ց էիք հետապնդում այդ գաղափարը:

- 1915-ից սկսած, բայց Թալեաթի հետքը գտնելու աշխատանքը ձեռնարկել եմ երեք տարի առաջ...

Թալեաթը (ձախից երրորդը) ավստրիացի և գերմանացի դիվանագետների հետ: Բեռլին,Նոյեմբեր,1917 թ.



Թեհլիրյան գերդաստանը:Մեջտեղում նստածը Սողոմոնի հայրն է՝Խաչատուրը: Կանգնած, ձախից՝Անահիտ Թաթիկյան-Թեհլիրյան, Սողոմոն Թեհլիրյան: Երեխան՝ Սողոմոնի որդի Շահենն է: Վալևո, 1926 թ.

- Ինչպե՞ս իմացաք, որ Թալեաթ փաշան Բեռլինում է:

- Պատահաբար, մի թերթի մեջ կարդացի:

- Իսկ ինչպե՞ս գտաք Թալեաթ փաշային Բեռլինում:

- Փետրվարի վերջին կենդանաբանական այգու մոտ մի օր հանկարծ թուրքերեն խոսակցություն լսեցի: Երիտասարդ երեք թուրքերից մեկը փաշա անվանեց հաղթանդամ մի մարդու, որ զրուցում էր նրանց հետ: Բաժանվելու պահին երեքը համբուրեցին նրա ձեռքը: Հաղթանդամը շատ էր նման Թալեաթին, որին ճանաչում էի թերթերում տպագրված նկարներից: Հետապընդեցի նրան մինչև Հարդենբերգ փողոցի թիվ 4 տունը: Մի քանի օր հետո սենյակ վարձեցի նրա տան դիմաց: Վերջին 10 օրում առիթներ ունեցա ստուգելու, որ փաշա կոչվածը Թալեաթն է: Մարտի 15-ին, երբ տանից դուրս եկավ, խփեցի:

- Ուրեմն դուք ընդունո՞ւմ եք, որ սպանությունը կատարել եք կանխամտածված:

- Իհա՛րկե:

- Ես հասկանում եմ, որ վրեժի գաղափարը կարող էր ձեզ մղել այդ գործին, բայց մի՞թե ձեր խիղճը չի տանջում սպանությունը կատարելուց հետո:

- Ընդհակառակը, սիրտս լցվում է գոհունակությամբ, որ վերջապես մեկ միլիոն անմեղ զոհերի վրեժը լուծված է:

- Ուրեմն դուք եկել եք Բեռլին ոչ թե ուսանելու, այլ Թալեաթ փաշային սպանելո՞ւ:

- Բեռլինում մեքենագիտություն սովորելու մասին երազում էի դեռ պատերազմի նախօրեին, բայց ամեն բան տակնուվրա եղավ...

- Գիտե՞ք, որ օրենքով ձեզ մահապատիժ է սպառնում:

- Այո, բայց գործս հաջողությամբ կատարելուց հետո ինչ ուզում է թող լինի:

- Ե՞րբ որոշեցիք ձեռնարկել սպանությունը:

- Մորս անհայտ գերեզմանով երդվել էի սպանել Թալեաթին: Երբ ձեռքս ընկներ, անպայման պիտի սպանեի:

- Պատմեք, թե ինչպե՞ս սպանեցիք Թալեաթ փաշային:

- Մարտի 15-ի առավոտյան պատուհանից հանկարծ տեսա, որ Թալեաթը դուրս եկավ փողոց ու գնաց դեպի վար: Ատրճանակս առա, վրա հասա: Զուգահեռ մայթով արագ գնացի, առաջ անցա: Երբ բավականին ետ մնաց, անցա մյուս մայթը, ետ դարձա՝ նրան դիմացից խփելու համար, բայց 1-2 քայլ հետո նա հանկարծ զգաց, սարսափահար նայեց, ուզեց թեքվել, խուսափել, երբ գնդակը գամեցի գլխին...

(շարունակելի)

Յոզդատի գավառի և Տրապիզոնի նահանգի տեղահանության ու կոտորածների դատավարություններն ըստ «Ալեմդար» օրաթերթի

Մելինե Անումյան

Հանրահայտ փաստ է, որ իթթիհատականների՝ հայերի բնաջնջման քաղաքականությունը թուրքերի կողմից պաշտոնապես դատապարտվել է դեռևս 1919-1920 թվականներին թուրքական ռազմական արտակարգ ատյանների միջոցով:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդած ամիսներին պարտված Օսմանյան կայսրության սուլթանը և անընդմեջ փոփոխվող սադրազմները, միջազգային հանրության ճնշման ներքո, որոշեցին պատժել պատերազմի տարիներին կատարված հանցագործությունների (մասնավորապես՝ հայերի տեղահանության և կոտորածների) հեղինակներին:

1919-1920 թվականների ընթացքում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով տեղի ունեցան մոտավորապես 29 տարբեր դատական պրոցեսներ, որոնցից գլխավոր են համարվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների, «Հատուկ կազմակերպության» ղեկավարների, կառավարության անդամների և կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարությունները: Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կատարվեցին նաև առանձին անհատների դատավարություններ: Դրանց մասին տեղեկություններ հրապարակվեցին տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում հրատարակվող ինչպես թուրքալեզու, այնպես էլ հայալեզու, ֆրանսալեզու և հունալեզու մամուլում: Դատավարությունները ներկայացրած օրաթերթերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Թաքվիմ-ի վաքայի» («Իրադարձությունների օրացույց») պետական պաշտոնա-

Նյութեր թուրք պատմաբանների համար

Տրապիզոնի հայկական թաղը, 1920-ականներին

թերթը, որում տպագրվել են գլխավոր դատավարությունների ամբողջական արձանագրությունները: Պետք է նշել, որ ժամանակաշրջանի մամուլը որոշակի դերակատարում է ունեցել նաև մի քանի հանցագործների բացահայտման խնդրում:

Դատավարություններին առավել ակտիվորեն արձագանքող օրաթերթերից է եղել նաև 1912-1921 թվականներին Ստամբուլում հրատարակվող «Ալեմդար» օրաթերթը, որի համարներում տեղ են գտել ինչպես դատավարությունների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություններ, այնպես էլ վերլուծական բնույթի հրապարակումներ: «Ալեմդարը» մանրամասնորեն ներկայացրել է նաև Յոզղատի գավառի և Տրապիզոնի նահանգի հայերի կոտորածների պատասխանատուների դատավարությունները:

Յոզղատի գավառի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում: Դատավարությունը (18 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը: Մեղադրյալները սկզբնապես եղել են 3 հոգի՝ Յոզղատի մութասարիֆի տեղակալ, Բողազլյանի գայմագամ Մեհմեդ Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի պետ, մայոր Մեհմեդ Թևֆիկը և պետական պաշտոնյա Ֆիազ Ալին: 17-րդ նիստում վերջինիս գործն առանձնացվել է՝ հետագայում քննվելու նպատակով, բայց մնացել է թղթի վրա: Ամբաստանյալների շահերն էին ներկայացնում 6 դատապաշտպաններ:

Դատավճիռը կայացվել է ապրիլի 8-ին, համաձայն որի ամբաստանյալներից Բողազլյանի գայմագամ Քեմալ բեյը դատապարտվել է մահվան, իսկ ժանդարմերիայի պետ Թևֆիկը՝ 15 տարվա տաժանակիր ախտորի:

Տրապիզոնի դատական գործը (20 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. մարտի 26-ից մինչև մայիսի 20-ը: Դատավճիռը կայացվել է մայիսի 22-ին: Ամբաստանյալներն էին հարկային տեսուչ, «Կարմիր մահիկ» հիվանդանոցի հոգաբարձու Մեհմեդ Ալին, ոստիկանապետ Նուրին, գործակալ Մուստաֆան, գայմագամ Թալաաթը, հյուրանոցատեր Նիազին, առողջապահության տեսուչ Ալի Սաիբը, ինչպես նաև «Հատուկ կազմակերպության» տրապիզոնյան մասնաճյուղի ղեկավար, հետագայում նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Յուսուֆ Ռըզան: Ամբաստանյալների շահերն էին ներկայացնում 6 դատապաշտպան: Տրապիզոնի դատավարության 16-րդ նիստում Յուսուֆ Ռըզայի գործն առանձնացվել է և հետագայում քննվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատական պրոցեսում: Տրապիզոնի դատավարության ընթացքում հեռակա կարգով քննվում էին նաև Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Նայիլ բեյի գործերը: Ընդունված դատավճռով Ջեմալ Ազմին և Նայիլը հեռակա կարգով դատապարտվել են մահվան, Մեհմեդ Ալին՝ 10, իսկ Մուստաֆա էֆենդին և Նուրի բեյը՝ 1 տարվա բանտարկության: Դատարանի կազմը, Նիազի էֆենդու և Թալաաթ բեյի մեղավորությունը հաստատող փաստերը շրջանցելով, արդարացրել է նրանց, իսկ առողջապահության տեսուչ Ալի Սաիբ բեյի դատապարտությունը, իբրև թե «որոշակի հանցանշան չլինելու պատճառով», կարճվել է: Հետագայում նրա դեմ առանձին դատաքննություն է կատարվել՝ Տրապիզոնի «Կարմիր մահիկ» հիվանդանոցում գազի և այլ միջոցներով հայերի թունավորման մեղադրանքով:

Ինչպես հայտնի է, թուրքական պաշտոնական պատմագրությունը, անտեսելով Հայոց ցեղասպանությունը հաստատող բազմալեզու և բազմաբնույթ գրականությունը՝ տարբեր երկրների արխիվներից քաղված փաստաթղթերը, ականատեսների վկայություններն ու հուշերը, ինչպես նաև թուրքական ռազմական արտակարգ ատյանների կողմից ընդունված դատավճիռները, որոնք ակնհայտորեն բացահայտում

են տեղահանության բուն նպատակը՝ հայերի բնաջնջումը, շարունակում է ժխտել Մեծ եղեռնի փաստը: Թուրքական պատմագրության պաշտոնական վարկածի համաձայն՝ 1915-1916 թվականներին կատարվածը ոչ թե ցեղասպանություն էր, այլ՝ ընդամենը տեղահանություն: Ըստ թուրք պատմաբանների, կոտորածները տեղահանության ընթացքում տեղական պաշտոնյաների կողմից ցուցաբերված անփութության և պաշտոնի չարաշահման արդյունք են եղել: Թեև վերոհիշյալ վարկածը բազմիցս հերքվել է ոչ միայն հայ, այլ նաև այլազգի բազմաթիվ պատմաբանների կողմից բերված փաստերով, թուրք պատմաբանները համառորեն չեն հրաժարվում իրենց տեսակետից:

Յոզգատի և Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկայությունները, ցուցմունքները, ինչպես նաև հետաքննության ընթացքում ձեռք բերված պաշտոնական փաստաթղթերը կրկին հաստատում են, որ կոտորածները ոչ թե եղել են տեղական պաշտոնյաների չարաշահման արդյունք, այլ կազմակերպվել են կառավարության կողմից:

Նախ նշենք, որ թե՛ Յոզգատի, թե՛ Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում հանդես եկած վկաները հիմնականում եղել են թուրքեր և այլ ազգությունների պատկանող մահմեդականներ: Բացի այդ, Տրապիզոնի դատավարության ընթացքում վկայություններ են տվել բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են Վանի նախկին նահանգապետ Նազըմը, Էրզրումի նախկին նահանգապետ Թահսինը, ռազմածովային նախարար Ավնին, իրավական տեսուչ Քենանը, Տրապիզոնի և Լազըստանի զորքերի շտաբի պետ, գնդապետ Մուհբարը, լեյտենանտ Ահմեդը և ուրիշներ:

Յոզգատի դատավարության ընթացքում բացահայտվում է, որ հայերի քարավանները հսկելու նպատակով ուղարկված պաշտոնյաները տեղի բնակչությանը հրահրել են հայերի դեմ: Այսպես, մարտի 25-ի նիստում դատախազ Հարալամբու էֆենդին ամբաստանյալ Քեմալ բեյին հարցնում է, թե հայերի քարավանները հսկելու և կարգուկանոնը պահպանելու նպատակով ուղարկված Աբդուլլահը ինչու է խառնակչություններ հրահրել բնակչության մեջ: Դատախազը եզրակացնում է, որ պետական պաշտոնյաների առկայության պայմաններում պետության կողմից նման անձանց ուղարկելը հատուկ նպատակ էր հետապնդում.

«Դատախազ - *Աբդուլլահ անվամբ մեկին ճանաչո՞ւմ եք:*

Քեմալ բեյ - *Չերքակալվածներից է, չէ՞, ճանաչում եմ:*

Դատախազ - *Քարավանը հսկողներից է եղել:*

Քեմալ բեյ - *Այո՛:*

Դատախազ - *Նա ինչո՞ւ է բնակչության մեջ խառնակչություններ հրահրել, եթե կառավարությունը նրան էր վստահել կարգուկանոնը պահպանելու խնդիրը:*

Քեմալ բեյ - *Անտեղի երևույթ ի հայտ չգալու համար:*

Դատախազ - *Պետական պաշտոնյաների առկայության պայմաններում նրանց ևս ուղարկելը հատուկ նպատակ (maksad-I mahsus) էր հետապնդում»*[1]:

Նույն նիստում նախագահի կողմից հիշատակվում է Յոզգատի հոգևոր առաջնորդի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, համաձայն որի մուֆթին փորձել է խրատել Քեմալին, իսկ վերջինս ասել է. «Դու կառավարությունից բարեգո՞ւթ ես (Sen hukmetten merhametli misin?)»:

Բողազլյանի գայմագամ Քեմալ բեյի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն, ինքը ստորադասներին հրամայել էր տեղահանությանը վերաբերող հրամանների մի մասը կարդալուց հետո այրել: Այդ մասին Քեմալին հի-

Յոզգատի և Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկայությունները, ցուցմունքները, ինչպես նաև հետաքննության ընթացքում ձեռք բերված պաշտոնական փաստաթղթերը կրկին հաստատում են, որ կոտորածները ոչ թե եղել են տեղական պաշտոնյաների չարաշահման արդյունք, այլ կազմակերպվել են կառավարության կողմից:

Յոզղատի դատավարության մարտի 27-ի դատալսման ժամանակ հայերի կոտորածները հաստատող վկայություններ է տալիս գնդապետ Մեհմեդ բեյը՝ մասնավորապես հայտնելով, որ ինքն անձամբ տեսել է, թե ինչպես են հայերին կոտորում կացիններով և դաշույններով :

ջեցվեց նաև մարտի 25-ի նիստում: Թեև Քեմալ բեյը փորձեց հերքել իր իսկ ցուցմունքը, սակայն դատախազ Հարալամբու էֆենդին հաստատեց այն.

«Նախագահ - *Նախաքննության ընթացքում Ձեր կողմից տրված ցուցմունքների համաձայն՝ տեղահանությանը վերաբերող փաստաթղթերի մի մասն ընթերցելուց հետո այրելու հրաման եք տվել, իսկ մնացածը որտե՞ղ է:*

Քեմալ բեյ - *Բոլորն էլ պահպանվել են, էֆենդի՛: Ճիշտն ասած, այդ օրը շատ հոգնած էի, (ճանապարհին) ութսուն հոգով մի վագոնում էինք: Եվ քանի որ քունս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:*

Դատախազ - *Ես, Հետաքննչական հանձնաժողովի անդամ հանդիսանալով, հայտնում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը, 3-4 ժամ մտածելուց հետո է գրել»:*

Դատաքննության ընթացքում ամբաստանյալները փորձում էին իրենց արդարացնել՝ վկայակոչելով կառավարության կողմից ստացված հրամանները: Դատալսումների ընթացքում նրանց կողմից տրված ցուցմունքների համաձայն՝ կառավարությունը գոյության միջոցներ չէր տրամադրել հայերի քարավաններին.

«Նախագահ - *Քեմալ բեյը հայտնեց, որ տեղահանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրով զբաղվում էր ժանդարմերիայի հրամանատարը:*

Թևֆիկ բեյ (ժանդարմերիայի նախկին պետ) - *Ինչպե՞ս: Եթե կառավարությունը միջոցներ չէր տրամադրում, ես ի՞նչ կարող էի անել, իմ գրպանի՞ց միջոցներ հատկացնեի, դրա մասին կառավարությունը պետք է հոգար:*

Նախագահ - *Դուք պետական պաշտոնյա՞ եք:*

Թևֆիկ բեյ - *Իհարկե պետական պաշտոնյա եմ:*

Նախագահ - *Տեղյակ չէի՞ք, որ բնակչության շարքերում չունևորներ կային:*

Թևֆիկ բեյ - *Ի՞նչ իմանայի, էֆենդի՛: Մարդկային պարտքս կատարելով սիրված էի նրանց կերակրել. այդպես էլ վարվեցի:*

Նախագահ - *Եթե, մարդկային պարտքը կատարելու փոխարեն, Ձեր պաշտոնական պարտականությունները կատարեիք, ավելի ճիշտ չէ՞ր լինի:*

Թևֆիկ բեյ - *Մտքովս չանցավ դրամ պահանջել»*[2]*:*

Յոզղատի դատավարության մարտի 27-ի նիստի ժամանակ նույն փաստարկով է իրեն փորձում արդարացնել ամբաստանյալներից Քեմալ բեյը.

«Նախագահ - *Ճի՛շտն ասա, հայերին բնաջնջելու մտադրությունները* (itlaf ettirmek agraz) *անձնակա՞ն, թե՞ մեկ այլ դրդապատճառ ունեին:*

Քեմալ բեյ - *Քա՛վ լիցի, փաշա՛, հայերին բնաջնջելու հրաման երբեք չեմ տվել:*

Նախագահ - *Մի՞թե Յոզղատը գործողությունների թատերաբեմից դուրս էր:*

Քեմալ բեյ - *Ո՛չ, էֆենդի՛:*

Նախագահ - *Ինչո՞ւ մի խումբ փախստականներ բռնագաղթեցվեցին առանց փոխադրամիջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում:*

Քեմալ բեյ - *Միջոցներ չկային, էֆենդի՛, ես կատարել եմ կառավարության կողմից ստացված հրամանը»*[3]*:*

Յոզղատի դատավարության մարտի 27-ի դատալսման ժամանակ հայերի կոտորածները հաստատող վկայություններ է տալիս գնդապետ Մեհմեդ բեյը՝ մասնավորապես հայտնելով, որ ինքն անձամբ տեսել է, թե ինչպես են հայերին կոտորում կացիններով և դաշույններով (balta ve bicak ile Ermenilerin kesildigini bizzat gordugunu beyan etti)*:*

Նույն նիստում վկաներից Սկյուտարի մութասարիֆ Մեհմեդ Ալի բեյը չի բաց-

ռում կոտորածներին պաշտոնյաների և տեղի բնակչության մասնակցության հավանականությունը, սակայն, ըստ վկայի ցուցմունքի, այն հնարավոր էր կառավարության կողմից տրված գաղտնի հրամանի (hukumetin bir emri hafisi) դեպքում միայն:

Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկաների ցուցմունքների շնորհիվ լիովին հաստատվեց, որ այստեղ տեղի ունեցած ջարդերը, թունավորումները, ջրախեղդ անելու գործողություններն ուղղորդվել են Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի կողմից, որն իր հերթին հրահանգներ էր ստացել կենտրոնական կառավարությունից: Ջեմալ Ազմին, որ Տրապիզոնի նահանգապետի պաշտոնում է եղել մինչև 1917 թվականը, իր դաժանության շնորհիվ վաստակել էր «Դագանակով զինված մութասարիֆ» («Sopali mutasarrif») մականունը:

Տրապիզոնի դատավարության 1919 թ. ապրիլի 3-ի նիստում ընթերցված մի կնոջ գրավոր ցուցմունքների համաձայն՝ Ջեմալ Ազմին ժանդարմներին հայ տղամարդկանց նավերով Քում Քալե տեղափոխելու հրաման էր տվել: Տեղափոխության ընթացքում բոլորին ոչնչացրել էին (hepsinin itlaf edildigini)՝ մի մասին գնդակահարելով (kursunla), մյուսներին՝ ջրախեղդ անելով (denize atilmak suretiyle): Իսկ երեխաներին, Նիազի էֆենդու ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել (denize atildigini)[4]:

Ապրիլի 30-ի նիստում վկաներից Վանի նախկին կուսակալ Նազըմ բեյը ցուցմունքներ է տալիս Ջեմալ Ազմիի կողմից կատարված ոճրագործությունների և Նուրի ու Մեհմեդ Ալի բեյերի կողմից հայ կանանց և երեխաներին ծովը նետելու մասին[5]:

Միևնույն նիստի ընթացքում Ջեմալ Ազմիի դեմ ցուցմունքներ է տալիս նաև Տրապիզոնի վերաքննիչ դատարանի նախագահ Հիլմի բեյը:

Ռազմական ատյանի նախագահը, հայերի կոտորածներին անդրադառնալով, շեշտում է տեղի դատախազի միջամտության անհրաժեշտությունը, սակայն վերաքննիչ դատարանի նախագահը հայտնում է, որ տվյալ դեպքում նույնիսկ դատախազը չէր կարող միջամտել:

Մայիսի 10-ի նիստում Ջեմալ Ազմիի ոճրագործությունների մասին վկայություններ է տալիս իրավական տեսուչ Քենան բեյը՝ մասնավորապես նշելով, որ նահանգապետը ջրախեղդ է արել բազմաթիվ հայերի և հույների, իսկ Բաֆրայի գայմագամը սպանվել է կոտորածների հրահանգները չկատարելու հետևանքով[6]:

Մայիսի 13-ին տեղի ունեցած դատալսման ժամանակ հիվանդանոցում հայերի թունավորման (Ermenilerin hastahanede zehirlendigi) և Սամսունում ու շրջակայքում բազմաթիվ հայերի սպանության (Samson ve civarinda bircok Ermenilerin katledildigini) դեպքերի մասին վկայություններ է տալիս հեծելազորային լեյտենանտ Ավլի Հարուն բեյը, որը նախկինում եղել էր «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերի հետ համագործակցած գերմանացի սպա Շբանգեի համհարզն ու թարգմանիչը[7]:

Ապրիլի 26-ի նիստում Ալի Սաիբ բեյի կողմից հիվանդանոցում կատարված թունավորումները հաստատող ցուցմունքներ է տալիս վկաներից տիկին Մանիկը[8]: Նույն դատալսման ընթացքում ընթերցվում է նաև տրապիզոնցի Մուրադի գրավոր վկայությունը՝ Նիազի էֆենդու կողմից լքված գույքի յուրացման վերաբերյալ:

Չնայած վերոհիշյալ վկայություններին՝ Նիազի էֆենդին և բժիշկ Ալի Սաիբ բեյը, իբրև թե «որոշակի հանցանքան չլինելու պատճառով», ազատ են արձակվում:

Առողջապահության տեսուչ Ալի Սաիբ բեյի դեմ նոր դատաքննությունը վերսկսվում է 1919 թ. հուլիսի 8-ից: Առաջին նիստում ընթերցվում է Տրապիզոնի առողջա-

Իսկ երեխաներին, Նիազի էֆենդու ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել :

պահական ծառայության տեսուչ Զիա Ֆուադի զեկույցը, համաձայն որի Ալի Սաիբը բազմաթիվ հայ երեխաների էր սպանել՝ մորֆին ներարկելու միջոցով: Բայց և այնպես, դատարանն արդարացնում է ոճրագործին:

Տրապիզոնի դատավարության ընթացքում մեկ այլ հետաքրքիր վկայություն էլ է եղել՝ Կովկասից գաղթած մահմեդական և քրիստոնյա վրացիների՝ հայերի կոտորածներին մասնակցելու վերաբերյալ: Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ժողովուրդի ձայնը» քաղաքական-հասարակական օրաթերթը տեղեկացնում է, որ Տրապիզոնի դատավարության 14-րդ նիստում ընթերցված ռազմածովային նախարար Ավնի փաշայի գրավոր վկայության համաձայն, Կովկասից Տրապիզոն գաղթած քրիստոնյա և մահմեդական վրացիներից այստեղ կազմվել է «Legion georgienne» («Վրացական լեգեոն») անունը կրող հատուկ մի գունդ, որը ճանապարհներին հարձակումներ է գործել հայերից բաղկացած քարավանների վրա. «Ծովային նախարար Ավնի փաշա, գրաւոր երկար վկայութեամբ մը կը յայտնէր թէ Տրապիզոնի մէջ ամէն բան կուսակալին ձեռքն էր և ինք իրաւասութիւն չունէր որևէ գործի խառնուելու: «Թէշքիլաթը մախսուսէ», ըսաւ փաշան, պէտք չէ շփոթել Ճէմալ Ազմիի կազմած չէթէներուն հետ, որոնք ամէն տեսակ ոճրային գործերու մէջ շատ տխուր դեր մը կատարեցին: Կուսակալը ուզածին պէս կը տեղափոխէր հայ բժիշկներն ու առողջապահական պաշտօնեաները, որոնցմէ ոմանց մահուան լուրը կ առնէինք: Տրապիզոնի մէջ «Legion georgienne» անունով մասնաւոր գունդ մը կազմուած էր, Կովկասէն փախած իսլամ և քրիստոնեայ Վրացիներէ: Ասոնք ալ ճամբան շատ գէշութիւններ ըրին Հայերուն»[9]:

Յոզդատի և Տրապիզոնի դատավարություններին առնչվող վերլուծական հոդվածներից հիշատակման է արժանի հատկապես «Ալեմդարի» 1919 թ. ապրիլի 25-ի համարում հրապարակված քաց նամակը, որն օրաթերթի տնօրեն Ահմեդ Քադրին ուղղել էր ռազմական ատյանի նախագահ Նազըմ փաշային[10]: Հոդվածի սկզբում Ահմեդ Քադրին իր զարմանքն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ Յոզդատից ախտորված բազմաթիվ հայերի կոտորածների կազմակերպիչները և իրականացնողները, ըստ ռազմական ատյանի, ընդամենը 2 հոգի են եղել, այն դեպքում, երբ միայն իրեն հայտնի են այդ խնդրի հետ առնչություն ունեցած առնվազն 20 հոգու անուններ: Հոդվածի հեղինակը հայտնում էր, որ մոտ 40-50 նավաստիներ իրեն պատմել են Ջեմալ Ազմիի և իթթիհատականների կատարած վայրագությունների մասին: Այսպես օրինակ, Տրապիզոնում հայ կանանց և երեխաներին լցրել են նավակները և, շրջահայացորեն ափից բավականին հեռացնելուց հետո, ջրախեղդ արել: Իսկ երբ խեղդվողները փորձել են կառչել նավերի եզրից, կացնով կոտրել են նրանց մատները (sandallarin kenarina dokunmak isteyenlerin balta ile parmaklari dograniyormus):

«Ալեմդարի» տնօրենն իր հոդվածում նշում էր մի քանի պաշտոնյաների մասին, որոնք պաշտոնազրկվել էին կառավարության կողմից՝ կատարված չարագործությունների վերաբերյալ համապատասխան մարմիններին տեղեկացնելու պատճառով: Այսպես օրինակ, Տրապիզոնի մասային տեսուչ Բեսիմ բեյը պաշտոնից հեռացվել էր Ջեմալ Ազմիի արյունարբության մասին տեղեկացնելու պատճառով (Bu adam o esnada Cemal Azminin hunharligini lazim gelen makamata yazdigindan dolayi memuriyetinden uzaklastirilmistir.): Նման ճակատագրի էր արժանացել նաև իրավական տեսուչ Քենան բեյը, որն ազատվել էր աշխատանքից արդարադատության նախարար Հալիլի կողմից: Պաշտոնազրկման պատճառ էր հանդիսացել այն հանգամանքը, որ Քենան բեյը հանդես էր եկել հայերի ողբերգական դեպքերի կապակ-

«Թէշքիլաթը մախսուսէ»

ցությամբ անմիջապես հետաքննություն կատարելու պահանջով (Bu kahraman zat Ermeni facianin derhal taht-i muhakemeye alinmasi talep eylediginden dolayi o vakit Adliye naziri bulunan Halil Bey tarafindan geri cagirilmistir):

Ահմեդ Քադրին հոդվածում իր զարմանքն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ ինքը, սովորական քաղաքացի լինելով հանդերձ, ավելի լավ էր տեղեկացված Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների սարսափահարույց (tiylerini irpertecek derecelerde) մանրամասներին, քան դատարանը: «Ալեմդարի» տնօրենը ռազմական ատյանի նախագահին հարցնում էր, թե ինչով էր պայմանավորված դատարանի անտարբերությունը խնդրի նկատմամբ:

Հոդվածագիրը ռազմական դատարանի նախագահ Նազըմ փաշային ուղղված իր բաց նամակն ավարտում էր ականատեսների վկայություններին առավել լուրջ վերաբերվելու խնդրանքով և հանցագործներին պատժելու կոչով:

Հետաքրքիր է, որ հոդվածի որոշ հատվածի տպագրումն արգելվել էր գրաքննության կողմից:

«Ալեմդարի» 1919 թ. ապրիլի 17-ի համարում Զելալեդդին Արիֆ բեյի գլխավորությամբ ամբաստանյալ նախարարների պաշտպանությունն իրականացնող 16 փաստաբաններին բաց նամակ էր հղել «Ալեմդարի» պատասխանատու խմբագիր Ռեֆի Զևադ Ուլունայը: Հոդվածում վերջինս իր զարմանքն էր արտահայտում ոճրագործներին պաշտպանելու՝ փաստաբանների մտադրության կապակցությամբ: Ռեֆի Զևադը նախարարների դատապաշտպաններին կոչ էր անում հրաժարվել նրանց պաշտպանությունից՝ «պատմության մեջ բարի անուն թողնելու համար»:

Հատկանշական է, որ «Ալեմդարի» թե / տնօրեն Ահմեդ Քադրին, թե / պատասխանատու խմբագիր Ռեֆի Զևադ Ուլունայը հետագայում՝ ֆեմալական Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից 1924 թ. հունիսի 7-ին ընդունված որոշման հիման վրա ազատվել են երկրից: Ինչ վերաբերում է ամբաստանվող նախարարների շահերի պաշտպան, իրավագիտության պրոֆեսոր Զելալեդդին Արիֆ բեյին, նա հետագայում գրավել է Անկարայի Ազգային ժողովի, ինչպես նաև արդարադատության նախարարի պաշտոնները:

Այսպիսով, «Ալեմդար» օրաթերթում հրապարակված վկայությունները մեկ անգամ ևս հավաստում են, որ հայերի կոտորածները հրահանգվել և ուղղորդվել են թուրքական կառավարության կողմից, իսկ տեղահանության իրական նպատակն է եղել ամբողջ հայության բնաջնջումը:

Նյութեր թուրք պատմաբանների համար

1 Alemdar, Istanbul, 26 Mart, 1919.

2 Նույն տեղում:

3 Alemdar, Istanbul, 28 Mart, 1919.

4 Alemdar, Istanbul, 4 Nisan, 1919.

5 Alemdar, Istanbul, 1 Mayis, 1919.

6 Alemdar, Istanbul, 11 Mayis, 1919.

7 Alemdar, Istanbul, 14 Mayis, 1919.

8 Alemdar, Istanbul, 27 Nisan, 1919.

9 Ժողովուրդի ձայնը (Քաղաքական եւ հասարակական օրաթերթ), խմբագրատես՝ Տիգրան Զաւէն, 6 մայիսի, 1919 թ., թիւ 172:

10 Alemdar, 25 Nisan, 1919, Ahmed Kadri, Divan-i Harbi Reisi Nazim Pasa Hazretlerine Acik Mektup.

Պատմության ենգափոխության դէմ

Կ. Բասենցի

Գարեգին Նժդեհ

Անդրանիկ

Զատ շուկայական յարաբերութիւնների պայմաններում պատմական դէմքերին ու դէպքերին անդրադառնալը, նրանց մասին խորքային ճանաչողութիւն ձեռք բերելը եւ տարածելը ժամանակի կորուստ է եւ «դեմոդէ» գործ: Սրան գումարենք նաեւ նէոբոլշեւիկեան դեռեւս տիրապետող մտակեցուածքը ու կը ստանանք ազգային գիտակցութիւնը խաթարող այլանդակ մի վիճակ, ուր «պատկառելի քաղաքական վերլուծաբանը», որ տարիներ զոմբիացուած, արտասուաթոր աչքերով նայել ու նայել է, երեւի մի վաթսուն անգամ, «Զանգեզուր»-ը, «Սարոյեան եղբայրները» կամ «Նուագախմբի տղաները», այժմ համարւում է մոդեռն, գլոբալացուած «մտաւորական», եւ «ազատամտութեան» (այս հասկացութիւնն էլ այլանդակուեց) պատմուճանը հագած, դարձել է դեմոկրատիայի ու մարդու իրաւունքների ջերմ պաշտպան:

«Մոդեռն» մտաւորականը իրեն «մարդու իրաւունք» է վերապահում հեգնել, ծաղրել մեր պատմութիւնը՝ Սիմոն Զաւարեանից, Ռոստոմից ու Արամից մինչեւ Դրօ եւ դեռ չգիտես ուր: Նրան հաստատ զգուշացրել են, որ յանկարծ չդիպչի Հայաստանի «առաջին», «երկրորդ», «երրորդ» Հանրապետութիւններին կամ Նժդեհին, ու այս խեղճ ու կրակ մտաւորականը, մանրակրկիտ հետագծերի վրայ փէշերը հաւաքած, խաղեր տալով, մի կերպ հեզաճկուն անցնում է Նժդեհի ու Անդրանիկի կողքից ու միանգամից վրայ տալիս օրինակ՝ Արամին... Չէ՞ որ այժմ Արամին «մորթելու» պատուէրն է տրուել նրան:

Բոլշեւիկներին յաջողուեց Դաշնակցութիւնից պոկել Անդրանիկին, ՀՀԾ-ն էլ փորձեց պոկել Նժդեհին, հիմա էլ որոշ իշխանամէտ գործիչներ, նոյն մտակեցուածքով, ձգտում են պոկել Գէորգ Չաւուշին ու Սողոմոն Թեհլիրեանին եւ նրանց իւրացնել, կպցնել չգիտես թէ ում:

Սոցռէալիզմի գեղարուեստական դիպուկ ոճով նկարագրում են, թէ ինչպէս ակտիւ ու թռվռան, ջահել Սողոմոնը, իր ընտանիքի վրէժը լուծելու համար, գեղեցիկ մի օր, մի ատրճանակ գտաւ (սովորութիւն չկայ ասել, թէ որտեղից), ինքն իր գլխու գնաց, հասաւ Բեռլին

ու տեղն ու տեղը գետին փռեց Թալեաթին: Կամ՝ Անդրանիկը հէնց այնպէս, թերեւս առանց լուրջ պատճառի, յայտնուեց Առաքելոց վանքում: Իսկ թէ ինչպէս նրա շուրջ հաւաքուեցին զինուած ֆիդայիներ, շրջափակման մէջ ընկան, յետոյ ճեղքեցին շղթան ու մի կերպ դուրս պրծան՝ ոչ ոք կարծես չգիտի: Հարցերը շատ պարզունակ են հիմնաւորում. կար միայն ազգային ազատագրական պայքարը, եւ չկար ուրիշ ոչ մի բան՝ նպատակ, գաղափարախօսութիւն, կազմակերպութիւն, ղեկավարութիւն եւ այլն: Հիմնաւորումը յիշեցնում է մարքսիզմ-լենինիզմի հին յանկերգը, համաձայն որի այդ բոլորը պատմական դէտերմինիզմի օրինաչափութեամբ՝ բուրժուա-դեմոկրատական յեղափոխութեան դրսեւորումներ էին: Ընդամենը մի քանի «լաւ» դէմքեր, ֆիդայիներ կային մէջտեղում, որոնք կամ զոհուեցին հոկտեմբերեան «յեղափոխութիւնից» առաջ, կամ էլ առհասարակ առանցքային ղեկավարներ չէին: Նրանք ով էլ որ լինէին, մեխանիկօրէն, միեւնոյն պայքարն էին մղելու. Սերոբ Աղբիւր, Գէորգ Չաւուշ, Անդրանիկ: Միայն թէ յանկարծ մէկը չհամարձակուէր տալ Քրիստափորի, Ռոստոմի, Արամի, Ռուբէնի անունը: Այ դա չպիտի պատահէր...

Պահ, բա Գարեգին Նժդե՞հը, ոնց յայտնուեց մերօրեայ նէոբոլշեւիկների տեսադաշտում... Նա, նրանց պատկերացմամբ, ի ծնէ «պրոֆեսիոնալ» յեղափոխական էր, ով միայն իր ցեղի գեներով առաջնորդուելով, միանգամից սկսեց կռուել: Կռուեց, կրռուեց ու վերջապէս յաղթեց թշնամու չորս ռեժիմներին՝ երիտթուրքերին, քեմալականներին, ցարին ու բոլշեւիկներին (մոռանում են նշել նաեւ Համիդի ու Իրանի միապետ Մոհամեդալիշահի անունները): Իրօք միամիտ լինենք կարծելու, թէ Գարեգին Նժդեհն էլ, պատահականօրէն, յայտնուեց նէոբոլշեւիկների տեսադաշտում:

Սոցռէալիզմի ոգով գրուած նման հեքիաթներ դեռ շատ են գրուելու: Հեքիաթներ, որոնց գլխաւոր հերոսներն ատոմացուած, առանձին-առանձին դէմքեր են, առանց գաղափարական պատկանելութեան, առանց միմեանց հետ օրգանական, միջդիսցիպլինար կապի: Հեքիաթներ, որոնք միմեանցից խզուած պատկերներ են մատուցում մեր ազատագրական պայքարի պատմութիւնից: Նպատակն այն է, որ պատմութիւնը նենգափոխող այդ հոշոտման մեքենայի տակից դուրս գան ապաղաշնակցականացուած ստանդարտ տուփիկներ ու խնամքով շարուեն պաշտօնական դարաններում՝ յետագայ սերունդներին ապակողմնորոշելու համար:

Անտարակոյս, այս երեւոյթը գաղափարախօսական վակուումի ախտանիշ է: Նենգափոխման ու վերանկարագրման մեթոդիկան ժառանգուել է բոլշեւիզմից, միֆերը, նոր դէմքերն ու դէպքերը, վարպետօրէն, ծաղկաքաղ են արուում Դաշնակցութիւնից, իսկ հրամցման ձեւերը համապատասխանեցուում մոդեռնիզմին:

Գէորգ Չաւուշ



Արամ Մանուկեան

Չզարմանանք: Արդի կապիտալիզմի ու սովետական ամբողջատիրութեան տրամաբանութեան հիմունքները, ինչպէս նաեւ նէոլիբերալիզմի ու նէոբոլշեւիզմի գաղափարախօսական սկզբնաղբիւրները շատ հեռու չեն իրարից: Պրոլետարական դիկտատուրայի եւ լիբերալ-դեմոկրատիայի տեսական հիմնաւորումները շատ նման են միմեանց:

Տարբերութիւններն առաւել ձեւական են, նմանութիւնները՝ էական:



ՎՃՌԱԿԱՆ ԺԱՄԻՆ

Անձնական յուշեր ու ապրումներ

Յովհաննէս Քաջազնունի

Սկիզբը «Դրօշակ» N. 1 , 2, 2009 թ.

Հետեւեալ օրը, դեկտեմբեր երկուսի առաւօտեան - չեմ յիշում ինչ գործով - գնացի ֆինանսների մինիստրութեան շէնքը, Հ. Տէրտէրեանին տեսնելու:

Փոխանակ Տէրտէրեանի՝ սխալմամբ մտայ Ս. Ա-ի սենեակը:

Երբ ինձ տեսաւ, կարծես զարմացաւ:

- Ի՞նչ բանի վրայ ես,- հարցրեց,- չե՞ս պատրաստւում:

- Ի՞նչ պատրաստութիւն... ես տեղիցս չեմ շարժուելու:

- Անխելքութիւն ես անում... բոլշեւիկները քո ասած պտուղը չեն. այնպիսի մի ռէժիմ են հաստատելու այստեղ, որ հազար անգամ պիտի ափսոսաս Նիկոլայի ժամանակները... Ես գնում եմ:

Բարի ճանապարհ ցանկացայ Ս-ին ու անցայ Տէրտէրեանի սենեակը:

* * *

Դաշնակցական ֆրակցիայի սենեակի դուռը կիսաբաց էր: Ներս մտայ:

Սենեակի մէջ տեղը մի քանի մարդ, խմբուած մեծ սեղանի շուրջը, եռանդուն աշխատանքի վրայ էին. կարմիր դրօշակներ էին պատրաստում, ինչ որ պլակատներ գրում-ներկում...

Կարծեմ մի քիչ շփոթուեցին, երբ յանկարծակի ներս մտայ:

Աւ. Օ-ն էր այստեղ, Ռ. Ք-ին, Հ. Ս-ը* - երեքն էլ պարլամենտի անդամներ: Կային եւ ինձ անծանօթ դէմքեր, երկու-երեք մարդ:

- Այս ի՞նչ էք անում, հարցրի - առաջին վայրկեանին իսկապէս գլխի չընկայ, թէ ինչ են անում:

- Ոչինչ,- ասաց Աւ. Օ-ը, ըստ սովորութեան ծռմռելով երեսը,- այնպէս... սրանք մեր ընկերներն են, ձախակողմեան դաշնակցականները... դրօշակներ ենք պատրաստում... Դաշնակցութեան աշխատաւորական հատուածի կողմից...

Չգիտեմ, ի՞նչն էր այդ բոպէին աւելի զզուելի ինձ համար, կատարուող գո՞րծը, Աւ-ի խօսքե՞րը, թէ՞ նրա երեսի ծուռ ժպիտը...

- Ի՞նչ էք այդքան շտապում,- ասի,- ժամանակ դեռ ունէք... կարծեմ կարող էիք մի քանի ժամ էլ սպասել - գոնէ այնքան, որ պարլամենտի անդամները դուրս գային այս շէնքից...

Դուռը զարկի, դուրս ելայ սենեակից:

Հարեւան պահեստում Զ-ը շարունակում էր աղմկել: Գուցէ հէնց այս «հատուածին» լսելի լինելու համար էր, որ այնքան զօռ էր տալիս կոկորդին:

* * *

Նոյն օրը ձերբակալեցին ինձ:

Երեկոյեան ժամի մօտ ութն էր, երբ բախեցին մեր դուռը:

Մեծ աղջիկս Հրաչեան, որ ապրում էր ինձ հետ նոյն սենեակում,** - գնաց բանալու:

Ասաց, որ անծանօթ մարդիկ են, ինձ են հարցնում:

Դուրս եկայ նախասենեակ:

Երկու երիտասարդ, տասնոց մաուզերները կողքերին, սպասում էին ինձ նախասենեակում: Երկու ուրիշը, նոյնպէս զինուած մաուզերներով, կանգնած էին սանդուխի գլխին:

Հարցրի, թէ ինչ են ուզում:

- Ընկեր Լեգրանը խնդրում է, որ մի քանի րոպէով հանդիպէք իրեն:

- Այս ուշ ժամի՞ն:

- Այո, հէնց հիմա... Աւտոմոբիլը սպասում է ձեզ ներքեւում:

- Աւտոմոբի՞լը...

Շատ սիրալիր էր ընկեր Լեգրանը: Բայց՝ մաուզերաւոր չորս ընկերներ իբրեւ ուղեկից - սա կարծես մի քիչ աւելի էր, քան կարող էր պահանջել նոյն իսկ չափազանցրած սիրալիութիւնը...

Յամենայն դէպս, տատանուելու կամ ուշացնելու տեղը չէր. անծանօթների խնդիրը շատ քաղաքավարի էր, բայց եւ պատրաստի մաուզերները՝ շատ պերճախօս:

Հագայ վերարկուս:

Կարգադրութիւններ չունէի անելու, որովհետեւ հարկ եղածը կարգադրել էի արդէն - չէի կասկածում, որ պիտի գան: Մի րոպէ մտածեցի՝ ասեմ աղջկանս, որ տեղեկութիւն տայ Դրոյին... Բայց ոչինչ չասի, ամաչեցի:

Երիտասարդները շատ քաղաքավարական ձեւերով - իսկոյն յիշեցրին ցարական ժանդարմներին - նստեցրին ինձ աւտոմոբիլ:

Հետս խօսողը - սա ղեկավարն էր երեւում - մի բան ասաց շոֆերի ականջին - հասցէ տուեց, անշուշտ - ու ապա տեղ բռնեց իմ կողքին:

Երկուսը նստեցին դիմացը, ատրճանակները ձեռներին պատրաստ: Չորրորդը կանգնեց աւտոմոբիլի թեւի վրայ, նոյնպէս ատրճանակը ձեռին...

Երբէք չէի կարող ենթադրել, թէ այդքան զէնք ու այդքան նախազգուշութիւններ են հարկաւոր ընկեր Լեգրանի տունը ինձ ապահով հասցնելու համար... Չէի գիտցել իմ արժէքը:

Աւտոմոբիլը կանգնեց Աբովեան եւ Թարխանեան փողոցների անկիւնում:

Հրաւիրեցին, որ իջնեմ:

- Մի՞թէ ընկեր Լեգրանը փոխել է բնակարանը, հարցրի խիստ միամտօրէն:

- Այո... այսինքն՝ ոչ... Բայց դուք մի քիչ կը սպասէք այստեղ, մինչեւ մենք տեղեկացնենք... Համեցէք:

Մտանք ներս:

Նախասենեակում պատահեցինք մի ռուս - կարմիր բանակի սպաներից պիտի լինէր - զինուորականի, որ քնաթաթախ աչքերով, հին լաստիկները անկօշիկ ոտներին ու ծխամորճը բերանը դանդաղօրէն իջնում էր վերեւի յարկից:

Իմ բարեկամը սկսեց արագ-արագ փսփսալ զինուորականի ականջին:

Քնաթաթախ ռուսը լսում էր առանց հետաքրքրութեան, յորանջում էր ու մէկ խօսողին ուղղում իր անգոյն հայեացքը, մէկ ինձ:

Վերջը հարցրեց.

- Իսկ դուք ինքներդ ո՞վ կը լինէք:

Երիտասարդը վերսկսեց արագ փսփսոցը: Ականջիս հասան «ժամանակաւոր չէ-կա» ու «լիազօր ագենտ» բառերը, ուրիշ բան չհասկացայ... Ասենք, այդքանն էլ լիուլի բաւական էր ինձ մխիթարելու համար:

Զինուորականը նորից ու կսկուած յորանջեց:

- Էհ, դուք գիտէք, ասաց անխռով ձայնով,- արէք ինչպէս ուզում էք:

Ապա մէջքը դարձրեց ու՝ շլփշլփացնելով լաստիկները՝ հանդարտօրէն հեռացաւ:

Լիազօրը հրաւիրեց ինձ սենեակ, ասաց որ ինքը իսկոյն կը վերադառնայ ու անհետացաւ:

Սենեակը ուր մտայ ես, զօրանոցի տեսք ունէր: Մի տասնեակ մահճակալներ կարգով շարուած էին պատերի երկարութեամբ: Երեք-չորս զինուոր, հագուստները վրաներին, քնած էին մահճակալների վրայ: Մէկն էլ,- թերեւս հերթապահը - վառարանի առջեւ նստած, չորացնում էր գուլպաները, տաքացնում բոբիկ ոտները:

Սենեակի ճիշտ մէջտեղը, կապ չեմոդանի վրայ, թանկագին մուշտակը հագին, նստած էր... Բախշի Իշխանեանը:

Իսկոյն կռահեցի - դժուար չէր կռահելը - որ Բախշին փախչելիս է եղել, բոլշեւիկները ճանաչել են ու ձերբակալել - քաղաքում կամ քաղաքի մօտ, ճամբու վրայ:***

Իմ հարցին Բախշին շատ անմեղօրէն պատասխանեց, թէ՝ շորերը հաւաքած փոխում էր սենեակը ու չի հասկանում, ինչո՞ւ իրեն բռնեցին, բերին այստեղ... Մի պարզ թիւրիմացութիւն է, անշուշտ...

Նստեցի կողքին, պարապ մահճակալի վրայ:

Շատ վախեցած էր երեւում Բախշին, գոյնը կորցրել էր, նոյն իսկ կարծես լղարել, թառամել:

Խօսում էր անընդհատ, անկապ, ցատկելով մէկ նիւթից միւսը: Ու, յանկարծ, ընդհատելով խօսքն ու ցածրացնելով ձայնը, ասում էր յուսահատօրէն.

- Եթէ ձեզ էլ բռնել են, իմ բանը վերջացած է, վերջացած...

Այս նախադասութիւնը կրկնեց մի քանի անգամ: Հետաքրքրուեցի իմանալ, ինչո՞ւ կարծում էր թէ բոլշեւիկները պիտի գուրգուրան իմ վրայ:

Մի անորոշ ժեստ արաւ ձեռքով.

- Դէհ, շատ հասկանալի է...

ձեզ ինչո՞ւ պիտի ձեռ տային, ի՞նչ վատ բան էք արել... Յետոյ՝ չէ՞ որ կայ հասարակական կարծիք... Այս մարդիկ իսկի՞ հաշուի չեն առնում հասարակական կարծիքը...

Փորձ արի բացատրել Բախշիին, որ այն, ինչ որ ես ու նա «հասարակական կարծիք» ենք անուանում,- դա հէնց այն «բուրժուական նախապաշարումներից» մէկն է, որ բոլշեւիկները եկել են արմատախիլ անելու...

Բայց տեսնում էի, որ լաւ չի հասկանում ասածս, չի կարողանում կենտրոնացնել ուշադրութիւնը, լսում է ու չի լսում...

- Կամ ես,- շարունակում էր զարգացնել իր սեփական թէզը,- ի՞նչ եմ արել ես...

Աշխատում էր կարծես համոզել ինձ - իրօք իրեն էր ուզում հանգստացնել. հարկաւ - թէ բոլշեւիկները ոչ մի պատճառ չպիտի ունենան իրեն հալածելու:

Ի՞նչ էր արել որ... Լոկ գրչի ու խօսքի մարդ է եղել ինքը, երբէք ու ոչ մի «գործի» խառն չի եղել... Ճիշտ է, հակառակորդ է: Բայց այն հակառակորդներից չէ, որոնց դէմ պէտք է ոյժ գործադրել... եթէ արտայայտուել է բացասաբար բոլշեւիզմի մասին, դա զուտ տեսական վէճ է եղել... Մի՞թէ մարդ չի կարող իր սեփական կարծիքն ունենալ կամ մի՞թէ ոճիր է՝ մի յօդուած գրել, մի դասախօսութիւն անել...

Ասում էր, հանգստացնում ինքն իրան: Բայց յանկարծ, վերադառնալով նախկին վախերին, ձեռը թափ էր տալիս յուսահատօրէն.

- Չէ, իմ բանը վերջացած է...

Ինձ ձերբակալող երիտասարդներից մէկը - ոչ լիազօրը, այլ մի ուրիշը - ներս մտաւ սենեակ, մի պտոյտ արաւ ու նորից դուրս գնաց:

Բախշին խօսքը կտրեց, սպասեց որ երիտասարդը դուրս գնաց ու ապա հարցրեց ցածրացրած ձայնով.

- Ճանաչո՞ւմ էք այս մարդուն:

- Ոչ, ո՞վ է:

- Արշակ Շիրինեանի եղբայրը, հանգուցեալ Շիրինեանի... Բոլշեւիկները սպաննեցին եղբօրը - այնքան նամարտօրէն - իսկ ինքը... Երեւակայեցէք, բոլշեւիկների հետ է ինքը...

Ես աշխատեցի երեւակայել, բայց չյաջողեցայ ու բաւականին անտարբեր մնացի հանգուցեալ Շիրինեանի եղբօր հանդէպ: Միայն թէ՝ Բախշիի սիրտը չկոտրելու համար՝ մի քանի անգամ շարժեցի գլուխս աջ ու ձախ, ձախից-աջ ու ասի.

- Ծը-ծը-ծը-ծը...

Մի երկու ժամ անցաւ այսպէս:

Բախշին անընդհատ խօսում էր, ես լսում էի:

Վերջապէս երեւաց լիազօրը, ինձ դուրս կանչեց նախասենեակ ու մի առանձին հանդիսաւորութիւնով ասաց.

- Ընկեր Քաջազնունի, Խորհրդային իշխանութեան անունից յայտարարում եմ, որ դուք ազատ էք:

Ես ինձ շատ զարմացած ձեւացրի.

- Միթէ զրկուա՞ծ էի ազատութիւնից...

Երիտասարդը մի անորոշ ժեստ արաւ ու ժպտաց, սիրալիր ու ինքնագոհ ժպիտով:

- Ուրեմն ընկեր Լեգրանը այլ եւս չի՞ ուզում տեսնել ինձ:

Նոյն անորոշ ժեստը ու նոյն սիրալիր ժպիտը:

- Ապա պ. Իշխանեա՞նը...

- Պ. Իշխանեանը դեռ կը սպասէ մի քիչ... Իսկ ձեզանից կը խնդրէի, որ ժամանակ առ ժամանակ հանդիպէք այստեղ... այնպէս, յամենայն դէպս:

- Ինչո՞ւ համար, ասի արդէն միանգամայն լրջօրէն: Դուք գիտէք իմ բնակարանը: Վստահ եղէք, որ ոչ փախչելու, ոչ էլ թաքնուելու միտք չունեմ ես: Երբ հարկաւոր եղայ, ինձ կը գտնէք իմ տանը... Իսկ այժմ կարո՞ղ եմ գնալ:

- Հարկաւ... Բայց եթէ սպասէք մի քիչ, աւտոմոբիլ բերել կը տամ:

- Շնորհակալ եմ, ասի, մինիստր եղած ժամանակս վարժուեցի ոտով քալելու:

* * *

Ժամի տասից անց էր, երբ դուրս ելայ փողոց:

Քալելով մենակ գիշերային ամայութեան ու մթութեան մէջ, զգացի յանկարծ - մի անասելի ցաւով զգացի - որ այսուհետեւ իմ Հայրենիքում, Հայաստանի մայրաքաղաքի մէջ, ես օտար եմ ու հալածական...

Այդ ծանր զգացմունքը - թերեւս ամենից ծանրը որ ունեցել եմ երբ եւ իցէ - մնաց՝ օր օրի վրայ խորանալով՝ մինչեւ փետրուարի 18-ը, երբ երկրորդ անգամ - բայց արդէն բոլորովին տարբեր պայմաններում - դուրս եկայ բոլշեւիկեան բանտից:

Գրուած է Թեհրանում,
1921 թ. ամառը:

---

* Աւետիս Օհանջանեան, Ռուբէն Քաջբերունի, Հայկ Սարգսեան:

** Հայաստանի պարլամենտի նախագահը ունէր միայն մի սենեակ ուրիշի բնակարանում ու այն էլ պիտի բաժանէր իր այրի աղջկան հետ: Յ. Ք.

*** Այդ գիշեր - իշխանութեան գլուխը պաշտօնապէս անցնելու նախորդ գիշերը - բոլշեւիկները ձերբակալել են կարծեմ մեզ երկուսին միայն՝ Բախշիին ու ինձ: Յ. Ք.

-3 (200) XIX ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ—ՄԱՐՏ 1909

:hak"
NR
dération
rménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURN
„Droschak
GENÈVE (Suisse

,ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԻՊԻՆ—ՎՕՐՕՆՑՕՎԵԱՆ ՐԻՓԻՄԸ
ԵՒ
,ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ"

Հայ ժողովրդի բազմապիսի թշնամիները։ Եւ ա
մինչդեռ դաշնակցական գործիչներին քամահաճօրէն բա
են նետում աղատագրած Ցաճկաստանում, մինչդ
ռուսական Սև-Հարիւրակը, բռնուած Հակահայ ու Հակ
դաշնակցական մի վայրենի ատելութեամբ՝ քարոզում
այդ մարմնի դէմ անվերջ կախաղաններ, Սիբիր ու տ

Դայքարը ուժեղ էր, կրքոտ ու յուզումնալի: Բոլոր կուսակցութիւնները հրապարակ նետեցին իրենց լաւագոյն հռետորներին: Ռէակցիան, յանձին Ջիոլիտտիի կառավարութեան, գործ դրեց բռնութեան ու կաշառքի իր սովորական սիստէմը: Բեմ եկաւ նաև պապական կողը, լիակատար սպառազինութեամբ:

«Տապալե՛լ սօցիալիստներին, դուրս մղել Օրէնսդիր Ժողովից ամբողջ ձախակողմը» - այդպէս էր նշանաբանը: Բայց սօցիալիստները, այնուամենայնիւ, տարան չը տեսնուած յաղթանակ: Աշխատաւոր պրոլետարիատի ներկայացուցչութիւնը պարլամենտում աճեց 16 նոր պատգամաւորներով, հասաւ 42-ի: Եւ դեռ չափազանց արատաւոր է տիրող ընտրողական սիստէմը, դեռ չը կայ Իտալիայում ընդհանուր ու հաւասար ձայնատուութիւն, դեռ տգիտութիւնը,

Քաղաքական տեսութիւն

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՒՄ

անգրագիտութիւնն ու ծայրագոյն խեղճութիւնը հեռու են պահում սօցիալիզմից աշխատաւոր ժողովրդի ստւար զանգւածներ...

Իտալական սօցիալիզմը իրաւունք ունի տօնելու իր եզակի յաղթանակը: Բոլոր խոշոր կենտրոններում ու գաւառներում նրա ազդեցութիւնը հաստատւում է անխախտ կերպով: Դօժերի Վենետիկը, ազնըւական Ֆլորենցիան, տիեզերական կաթոլիկութեան մայրաքաղաք Հռոմը, «Կամօռռայի» հայրենիք Նապոլը, «Մաֆֆիայի» ծննդավայր Պալերմօն ու Կատանիան - բոլորն էլ «վարակւում են» սօցիալական ազատագրութեան աշխարհանւաճ հոսանքով...

Սօցիալիստներից զատ՝ ուժեղանում են և ռամկավար տարրերը - արմատականներն ու հանրապետականները, որոնք Իտալիայում առհասարակ համերաշխ գործակցում են սօցիալիստ կուսակցութեան հետ, կազմելով միասին պարլամենտի ծայր-ձախակողմեան թեւը: Այդ վերջինը ունի այժմ 114 պատգամաւոր,- մի պատկառելի թիւ, որ թէև տակաւին փոքրամասնութիւն, բայց իր ներդաշնակ ու դիմադրական գործունէութեամբ այսուհետև ուժգնօրէն կ'անդրադառնայ երկրի թէ ներքին, թէ արտաքին քաղաքականութեան վրայ: Ծայր-ձախակողմեան պատգամաւորների թիւը անցեալ պարլամենտում միայն 84 էր: Նոր ու թարմ հոսանքը կը կարողանայ թումբ դնել կառավարութեան ու կղերի յետադէմ շահատակութիւնների առջև և կը բանայ նոր դարագլուխ՝ ներքին բարենորոգումների, աշխատաւորական արգասաւոր օրէնսդրութեան համար:

Կղերը պարտւած յետ նահանջեց: Նա զգաց, որ ապարդիւն է Արարչի ու աւետարանի անունով արծարծել ժողովրդական տառապող զանգւածների մէջ ստրկութեան, տիրասիրութեան զգացումներ, խոստանալով տառապանքների հատուցումը... երկնային թագաւորութեան մէջ: Ժողովուրդը երկրի վրայ է ուզում հաստատել երջանկութեան թագաւորութիւնը:

Գյունթեր Ֆոքս, Հանս-Ուլրիխ Լյուդեման
Մարդասպանի սպանությունը
Երևան, 2008, 115 էջ



Մարդկային հասարակության մեջ, ուր ճշմարտությունն ու կեղծիքը բավականին հաճախ են գոյակցում միմյանց հետ, լինում են դաժեր, որ դրանց հանկարծահաս բախումից շահում է անորոշությունը, այն իրավիճակը, ուր թացն ու չորը միախառնված են, ուր կա ընդամենը կես ճշմարտություն ու կես սուտ: Այս իրավիճակը, կարծես, երբեմն նույնիսկ անհրաժեշտ է հասարակությանը, որպեսզի նա շարունակի իր առօրյա գործերն ու հաշտվի այն մտքի հետ, թե ինքը ինքներս չի եղել և այսուհանդերձ փորձել է անարդարության դեմն առնել, ու իր շնորհիվ կեղծիքը դատժվել է: Արժանի դատիժ է դա, թե՝ ոչ, արդեն երկրորդական հարց է հասարակության համար: Դատավճռի հրապարակումից հետո թե մեղադրողը և թե դաշտպանը մոռացվում են որոշ ժամանակ անց՝ կարճ կամ ավելի երկար, նայած՝ ինչ հնչեղություն է ունեցել գործընթացը:

Այդ նույն հասարակության կյանքում, սակայն, եղել են դեպքեր ու իրադարձություններ, որոնց արձագանքները չեն մարել, ու ժամանակն էլ, եթե հղկել է դրանց ելևէջումները, ապա ավելի է բյուրեղացրել, հասկանալի դարձրել սերունդների լսելիքին: Այդպիսի մի իրադարձություն է Սողոմոն Թեհլիրյանի կողմից Թալեաթ փաշայի ահաբեկումը Բեռլինում, 1921 թվականին, ահաբեկում, որ մարդկային հասարակությունը պետք է որակեր որպես հաստատում և արդարացներ հայ ուսանողին, ով այդ ծայրահեղ միջոցին էր դիմել իր ժողովրդի ու իր ընտանիքի թափված անմեղ արյան վրեժը լուծելու համար: Սերունդների (ոչ միայն հայ) հիշողության մեջ մնացած այս իրադարձությունն այն քչերից է, որի մասին դեռ գրվում ու խոսվում է, որի մանրամասների բացահայտմանը դեռ գրքեր ու գիտական աշխատություններ են նվիրվում:

Գերմանացի ժամանակակից պատմաբան Ֆոքս Գյունթերի և գրող Հանս-Ուլրիխ Լյուդերմանի՝ ներկայացվող գեղարվեստա-վավերագրական վիպակը մեր ակնարկած աշխատություններից մեկն է, որ առաջին անգամ հայերեն հրատարակել է Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը՝ թարգմանությամբ Դորա Սաֆայանի և Էվելինա Մակարյանի:

Թարգմանիչները ծավալով համեստ այս աշխատությունը որակել են գեղարվեստա-վավերագրական վիպակ այն պարզ պատճառով, որ գերմանացի համահեղինակները բավականին հաջողված փորձ են կատարել համադրելու գեղարվեստական խոսքն ու Թեհլիրյանի դատավարության բնագիր արձանագրությունները: Վիպակի առանցքում Սողոմոն Թեհլիրյանի թոռան՝ 1990-ականների կեսերին իր պապի դատավարության թեմայով գիտական թեզ պաշտպանելու նպատակով Բեռլինում հայտնված Ամերիկայի քաղաքացի Սողոմոն Մելիքյանի շուրջ տեղի ունեցող իրադարձություններն են: Նա հայտնվում է ամենաանհավանական իրավիճակներում: Որպես օտարականի՝ նրան հալածում ու ծեծի են ենթարկում սափրագլուխները: Կսպանեին, եթե չհասներ անսպասելի օգնությունը մի թուրք անցորդի ձեռքով: Հիվանդանոցում, երբ գիտակցությունը փոքր-ինչ վերականգնվում էր, նրան թվում էր, թե բժիշկն էլ մի թուրք է, որ փորձում է իրեն սպանել:

Հայ ընթերցողի համար գուցե և անհասկանալի լինի, թե ինչպես են գերմանացի հեղինակները կարողացել այդքան խորամուխ լինել հայ մարդու հոգեկան ներաշխարհում և բացահայտել այնպիսի որակներ, որոնք միայն հայը պետք է ունենար. «Քույր Բեաթեն... չի կարող կռահել, թե փողոցային այդ հարձակումը ինչեր է արթնացրել հայկական ծագում ունեցող ամերիկացու ենթագիտակցության մեջ: Նրա տանջահար հոգին շոշափելի իրականության է վերածում ողբերգական այն իրադարձությունները, որոնք ժամանակին այլափոխել էին իր մեծ հոր՝ Սողոմոն Թեհլիրյանի կյանքը: ... Այս կերպ միայն կարելի է բացատրել, թե ինչպես Սողոմոն Թեհլիրյանի թոռը իր տենդոտ երևակայության մեջ հանդիպում է այն մարդուն, որը 1915 թ. որպես երիտթուրքական կառավարության ներքին գործոց նախարար, կրում է հայ ժողովրդի բազում տառապանքների ու ջարդերի մեղքը»:

Կա՞, արդյոք, որևէ կապ Բարձր Դռան ներքին գործոց նախկին նախարարի՝ Սողոմոն Թեհլիրյանի ձեռքով իրագործված, այսպես կոչված, սպանության և հայ վրիժառուի թոռան կողմից ոմն թուրք բժշկից դեղորայք չընդունելու հանգամանքների միջև: Ըստ վիպակի թարգմանիչների՝ այս հարցի պատասխանն են նաև հետաքնդել «Մարդասպանի սպանությունը» գրքի հեղինակները:

Էդիկ Անդրեասյան



Աշխարհում մի երկիր կա, դա մեր Հայաստանն է, մեր հայրենիքը: Եվ ես իմ ամբողջ ուժով, ինչ որ Աստված ինձ տվել է, խելք, աշխատասիրություն, գիտելիքներ, այս ամենով ես միշտ երազել եմ արտահայտել իմ սերը Հայաստանի հանդեպ, որովհետև ինձ համար չկա ավելի բարձր բան, քան Հայաստանն է: Եվ ես որդիական մեծ նվիրումով նկարել եմ իմ երկրի մասին իմ աղոթքը և տպավորությունները անմնացորդ, մինչև վերջ:

Հենրիկ Սիրավյան 1993 թ.

Հենրիկ Սիրավյան







ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմութիւն

ԴՐՕՇԱԿ